

Քարեզին Ստեփան



Յիշին

1915-1920

Պատերազմը

Խուլստուլի յամ

Կամ չեր

Ջիմզոբի ընթերցանություն

ԳԱՐԵԳԻՆ ՆՇԴԵՀ

- ՀԻՇԻՐ ՊԱՏԵՐԱԶՍԸ
- ԽՈՒՍՏՈՒՓՅԱՆ ԿԱՆՉԵՐ

Երևան
2020

ՀՏԴ 1/14
ԳՄԴ 87
Ն 661

ԳԱՐԵԳԻՆ ՆԺՂԵՀ

Ն 661 Հիշիր պատերազմը, Խուստուփյան կանչեր/ Գարեգին Նժդեհ: Լուսակն: Եր.-2020թ., 148 էջ:

Գարեգին Նժդեհի «Հիշիր պատերազմը» հոդվածաշարը առաջին անգամ լույս է տեսել Բոստոնի «Հայրենիք» օրաթերթում 1930 թ. մայիս, հունիս ամիսներին: Գրքույկի տեսքով առաջին անգամ հրատարակվել է 2013 թ. Երևանում «Հայրենիք» ակումբի կողմից դասական ուղղագրությամբ, որի հիման վրա վերահրատարակվում է այս գրքի տեսքով փոխված արդի արևելահայերենի:

Նժդեհի «Հիշիր պատերազմը» աշխատության որոշ հատվածներ տեղ են գտել «Հայ դասական արիությունը» հոդվածաշարում և «Ցեղի ոգու շարժը» գրքույկում:

Սույն գրքում տեղ են գտել նաև Գարեգին Նժդեհի «Խուստուփյան կանչեր» գրքույկը և հատվածներ երկու աշխատություններից՝ վերցված 2006 թ. Երևանում լույս տեսած «Հատընտիր» գրքից:

Վերջին տարիներին հրատարակվել են նաև Գարեգին Նժդեհի «Որդիների պայքարը հայրերի դեմ» գիրքը, «Էջեր իմ օրագրեն, Բաց նամակներ հայ մտավորականությանը» գրքույկները՝ մեկ գրքով, «Գարեգին Նժդեհ – Բանտային կյանք, նամակներ գրառումներ» գիրքը, «Գարեգին Նժդեհ – Ցեղակրոնություն» հոդվածների ժողովածուն և Հայկ Ասատրյանի «Խոռվք» գիրքը:


Գիրքը վերահրատարակեց Անահիտ Հարությունյանը

ՀՏԴ 1/14
ԳՄԴ 87

ISBN 978-9939-871-31-8

Թվայնայնի 5 1915-ին Կարե

ՀԻՇԻՐ ՊԱՏԵՐԱԶՄԸ



Իր ցեղի ձայնին չհնազանդելով՝ ժողովուրդը պատժվում է մահվամբ:

Տարիներ ի վեր իմ մտածումը դառնում է մի հիմնական հարցի շուրջը, ճիշտ այնպես, ինչպես կալանավորն է անվերջ դառնում այն սյունի շուրջը, որին շղթայված է ինքը:

Իմ՝ «Բաց նամակներ հայ մտավորականությանը» հոդվածաշարքը մի վճռական փորձ էր՝ հայ քաղաքական միտքը ներգործոն կերպով զբաղեցնելու մեր ժողովրդի ֆիզիկական ինքնապաշտպանության խնդրով: Իսկ «Որդիների պայքարը հայրերի դեմ» իմ գիրքը մի անհանգստացուցիչ աղաղակ էր հայության վտանգված ապագայի մասին:

Այդ երկու աշխատությունների մեջ ցանցնված մտածումներս կարելի պիտի լինեյր բյուրեղացնել հետևյալ հատվածի մեջ. «Չնայած որ հարևաններեդ մահվան ես դատապարտված, հայ՛ ժողովուրդ, բայց և այնպես մահվան դատավճռից խուսափելու բազում ճամփաներ ունես»:

Ահա այդ մահից խուսափելու միջոցներից մեկը հայությանը ցույց տալու համար է, որ ձեռնարկում եմ այս նոր աշխատությունը՝ «Հիշի՛ր պատերազմը»:

I
ԿԱ ՄԱՐԴԸ՝ ԿԱ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Մարդն ու պատերազմը միաժամանակ են հայտնվել մեր երկրագնդի վրա: Այսպես է վկայում մարդկային ցեղի պատմությունը, որը չունի մի հատիկ էջ, որ գրված չլիներ արյունով: Մարդը աշխարհ է եկել սեղմված բունցքով, որ իր առաջին զենքն է եղել՝ միշտ պատրաստ հարձակվելու, հարվածելու, ոչնչացնելու այն ամենը, ինչ որ սպառնացել է իր գոյությանը:

Նա իր թշնամին է համարել այն բոլոր ուժերը, որոնց գոյության փաստը այս կամ այն ձևով ու չափով փորձել է սահման դնել իր տարամերժ «ազատությանը»: Եվ եթե մի օր, միանալով իր նմաններին՝ մղվել է վարելու ցեղային, և ապա դարեր հետո՝ պետական կյանք, դա եղել է ոչ թե գոյության պայքարին վերջ տալու ցանկությամբ, այլ այդ վերջինը ավելի հեշտ և արգասավոր դարձնելու նպատակով:

Առաջին կազմակերպությունը, որին ծնունդ է տվել մարդը, եղել է զինվորականը, ինչպես և առաջին արվեստը, որ մշակել է նա, եղել է ռազմարվեստը:

Բնագդական մարտիկ էր մարդը, երբ մենակյաց էր՝ դեմ հանդիման բնության ուժերին: Նույնն է մնացել և այսօր՝ որպես անդամ հասարակության ու պետության: Մարդը պատերազմ է վարել իր բարեշրջության բոլոր աստիճանների վրա: Մշտական կռվի մեջ էր, որ նա ստիպված էր ապահովել իր սնունդը: Այլ բան չէր նրա թափառիկ, վաչկատուն կյանքը: Մի օր էլ, երբ իր նստակեցության հետ ծնունդ առավ սեփական հողի գաղափարը՝ պատերազմը բորբոքվել սկսեց և հայրենիքների շուրջը:

Այսպես, արյունն է գծել և դեռ արյունն է գծում մարդկային ցեղի ուղին: Ճիշտ է, ժամանակի ընթացքում բնաշրջման

Ճամփով փոխվել են միջցեղային պայքարի գեներն ու ձևերը, բայց դրա էությունը մնացել է նույնը:

* * *

Մարդկային ցեղի գոյության ձիգ տարածության վրա չի եղել մի ժամանակաշրջան, որ նրա մեջ գազանն ավելի ուժեղ չլիներ, քան մարդը: Քաղաքակրթությունը սպանելու փոխարեն միայն թշնամացրել է գազանը մարդու մեջ: Նա երկաթե սանձեր է դրել մարդու անասնական հակումներին՝ դարձնելով ավելի զուսպ, բայց ոչ այլասեր:

Մեր պատմության ծանոթ ալանները պաշտում էին մերկ սուրը՝ թաղված գետնի մեջ՝ ճշմարիտ անձնավորումը իրենց վայրագության: Էապես փոխված չէ ռազմական պաշտամունքի առարկան և այսօր: «Անհայտ զինվորի» գերեզմանն այլ բան չէ, եթե ոչ սրի պաշտամունքը, անշուշտ, ավելի գեղարվեստական ձևի տակ:

Թշնամու գանգերը կազմում էին տոնօրյա զարդն ալանների: Այսօր ջախջախված թշնամուց խլված թնդանոթները, դրոշակները և այլ ձևի ավարներն են զարդարում հաղթականի թանգարանները:

Հին ժամանակ որպես արիանալու միջոց պատռում էին կռվում ընկած առաջնորդի կուրծքը և երկյուղածորեն վայելում էին նրա սիրտը: Եվ որևէ հերոսի սիրտն ուտողը համարվում էր անպարտելի: Արիության և ռազմական խանդավառության աղբյուրների կարիք ունի և այսօրվա մարդկությունը, որն իր հերոսների սիրտը ուտելու փոխարեն դաստիարակչական ճիգեր չի խնայում՝ նրանց մարտական ոգին տեղափոխելու նոր սերունդների սրտի մեջ:

Միկադոյի հայրենիքում ամեն տարի, երբ խորհրդանշական բալենին փթթել է սկսում, ճապոնական հայրենապաշտ

ժողովուրդը իր հանդիսավոր ուխտագնացություններն է սկսում դեպի իր անմահների՝ իր փառքի և մեծության ճամփին իրենց արյունը թափած ռազմիկների գերեզմանները, և նրանց ամենամյա ոգեկոչումով իր մարտնչող սերունդների հոգու մեջ հրահրում է պաշտամունքը հայրենի երկրի: Ահա՛ թե ուր է գաղտնիքն այն հրաշագործ ուժի, որ ռազմադաշտերում քաջաբար ընկնող ճապոն մարտիկների շրթունքներին դնում է ժպիտ և աստվածային արհամարհանք դեպի մահը:

Օրվա մարդկության պաշտած սուրբ մերկ չէ և թաղված չէ գետնի մեջ, ոչ էլ հրապարակի վրա է: Նա թաղված է ժողովուրդների հոգու մեջ:

Կա ամենակույ եսականությունը, ատելությունը, նախանձը, կա և այդ չար ուժերի տարերային պոռթկումը ինչպես անհատների, այնպես էլ ազգերի և ցեղերի միջև:

Չկա մի ժողովուրդ, բացի հայությունից, որի հանճարն այսօր չծառայեր ավելի պատերազմի, քան խաղաղության գործին, որի մի ձեռքը եթե քրտնում է խաղաղ շինարարության մեջ, մյուս ձեռքը գենք է կռում թշնամու համար, որը, հակառակ նյութական զինաթափության մասին այնքան հաճախ լսվող խոսքերին, շարունակում է զինվել միշտ ավելի կատարելագործված զենքերով:

Կա, վերացած չէ երբեք արտաքին վտանգը, և ժողովուրդները տենդորեն պատրաստվում են՝ վաղը հաղթական կամ նվազ պարտված դուրս գալու համար ճակատագրական բախումներից:

II ՉԽՐԱՏՎՈՂ ԺՈՂՈՎՈՒՄԸ

«Ոչ երիվարիս զրահ հագցուցի,
ոչ էլ մարտիկներ սպառազինեցի,
որ կարենայի ճակատ յարդարել»:
Նարեկացի

Սողոմոն իմաստունը, ըստ Թալմուդի, մի մատանի էր կրում, որի վրա փորագրված էր Եհովայի անունը: Եվ ամեն մարդ, դեպի որը նա դարձնում էր մատանու խորագրությունը՝ հարկադրվում էր ասելու այն ամենը, ինչ որ մտածում էր այդ վայրկյանին: Նման մի կախարդական մատանի ունի և պատերազմի գիշատիչ աստվածը, որով նա հարկադրում է պատերազմի բռնված ժողովուրդներին՝ ցուցահանելու իրենց հոգու լուսավոր, թե ստվերային բոլոր կողմերը, իրենց ողջ էությունը՝ իր բացարձակ մերկությամբ:

Այո՛, ճիշտ է ասված, թե ճշմարտության օրեր են պատերազմի օրերը, երբ ժողովուրդները մատնում են իրենց ինչ և ինչպիսին լինելը, երբ անհատին ու հավաքականությանը չի հաջողվում կեղծել:

Պատերազմը քննությունն է, դատաստանը ազգերի, երբ քննիչի և դատավորի անաչառանքը անկարելի է դարձնում խաբեությունն ու կաշառքը: Չբավարարեցի՞ր քննիչիդ՝ կորած ես, չկարողացա՞ր պաշտպանվել այդ անողորբելի դատավորի սոջև՝ դատապարտված ես: Ճակատամարտ չի շահվում հաջող ռազմարվեստով միայն, ոչ էլ զինվորի անձնվիրությամբ և ռազմավարի հանճարով միայն, չնայած որ այդ ազդակները կրվում կատարում են վճռական դեր: Արդիական պատերազմը, որն այլևս կոպիտ ուժերի բախում չէ, պահանջում է ժողո-

վորդների բովանդակ նյութա-բարոյական մշակույթը, ինչպես և նրանց մշտական ու չնվազող սպասարկությունը: Նա պահանջում է, որ մարտնչող ժողովրդի բովանդակ ուժերը լինեն խստորեն ներդաշնակված և առանց մնացորդի դրված ի սպաս բանակին: Կազմակերպչական ոգին է միավորող ու ներդաշնակող այդ կարողությունը, որն աճեցնելով ու տնտեսելով ժողովուրդների ուժերը, հանդիսանում է որպես ամենավճռական ազդակը հաղթանակի:

Այդ հրաշագործ ոգու շնորհիվ միայն Հռոմը ժամանակին հասավ իր հզորության ու փառքի գագաթնակետին: Կազմակերպչական տաղանդին կատարելապես տիրապետել են այն բոլոր ազգերը, որոնք հաջողել են պատմության մեջ անջնջելի հետքեր թողնել:

Հայերս, ինչպես և երեկվա մեր բոլոր բախտակից ժողովուրդները, ունենք ապստամբասեր հոգեբանություն՝ արգասիքը մեր հայդուկային ազատագրական շարժումների: Մեր հայրենասիրությունը տարիներով իր հոգևոր սնունդն առել է մեր նորագույն ապստամբական պատմությունից: Վիպապաշտական է և մեր ազատասիրությունը:

Երեկ՝ մեր քաղաքական զարթոնքի արշալույսին, դա հասկանալի էր և ներելի, իսկ այսօր դա չունի արդարացում: Դա վտանգավոր է մասամբ: Լավերի հետ դա ունի և իր վատ կողմերը: Դա պետք է սրբագրվի, լրացվի և ազնվանա: Վիպապաշտ հայդուկի ազատասիրությունը պետք է դառնա զինվորի և քաղաքացու զգաստ ազատասիրություն, զերծ անիշխանական գունավորումից՝ ստեղծագործ, խոհուն, կարգապահ: Կարգապահությունը ոչ ժխտում, ոչ էլ սահմանափակում է անհատի ազատությունը, ինչպես հասկացել է հայր: Դա կանոնավո-

րիչն է ճշմարիտ ազատության: Առավելագույն ազատությունը, ինչպես և հասարակական մտավոր արդարությունը, հնարավոր է առավելագույն կարգապահությամբ միայն:

Հասարակության ամեն մի անդամ հարաբերորեն և՛ տեր, և՛ ծառա է միաժամանակ, որին պետությունը, որպես այդպիսին, ոչ թե դիմագրկում է, այլ լրացնում: Այդ տեսակետից չափազանց ուսանելի է գերման ժողովրդի պատմությունը: Գիտենք, որ նախաբիսմարկյան գերմանը ամենաշեշտված ներկայացուցիչն էր անհատապաշտության: Սակայն, տունն ու դպրոցը, գործարանն ու գորանոցը տարիների ճիգերով վերադաստիարակեցին գերման ժողովուրդը՝ կարգի ու կարգապահության զգացումը դարձնելով գրեթե բնագոյ նրա մեջ:

Թո՛ղ չխաբի մեզ համաշխարհային պատերազմի¹ ծանոթ վախճանը: Հաղթանակը տարվեց հավաքական ճիգերով, և անարդար կլիներ պնդել, թե չափվող ժողովուրդներից ամենակենսունակը գերմանը չէ: Չի կարելի պարտություն բառով որակել գրեթե ամբողջ աշխարհի դեմ ճակատ հարդարած ժողովրդի անհաջողությունը:

Հայության հավաքական գոյության օրվա ամենամեծ չարիքը թրքական վտանգն է երկրի մեջ, աստիճանական ապագայնացումը արտասահմանի մեջ:

Կա Մեծ Չարիքը, որ ճակատ է հարդարել հայության դեմ, և որ մահվամբ է սպառնում մեզ: Չկա, սակայն, իր ամբողջ-

¹ Խոսքը Առաջին համաշխարհային պատերազմի մասին է:

ջության մեջ կազմակերպված, հաղթաշունչ, չարիքը դիմագրավելու պատրաստ և կարող հայությունը:

Մեր շուրջն ազգերը՝ մեծ, թե փոքր, տենդորեն զինվում, պատրաստվում են հավանական վտանգի դեմ, առանց հարցնելու՝ ով է թշնամիս, ուր է թշնամիս: Զրահներ է, որ փոխում են նրանք՝ առանց մի օր իսկ անգն մնալու: Իսկ մե՞նք: Մոտավուտ վտանգի հանդեպ մենք միայն անգոր ճիշեր ենք արձակում, ճիշը սարսափի ու շվարումի մատնված անգոր գոհի և ոչ թե ահազանգը կովի պատրաստ ռազմիկի:

Թմբկահարել գալիք վտանգի մասին և ոչինչ չանել ժամանակին այն չեզոքացնելու կամ կասեցնելու և կամ նրա հարվածը մեղմելու համար, կմնա ամենահայկականը հայի հատկություններից:

«Վա՛յ այն ժողովրդին, – ասել է Ժոմինին, – որը զինվորական գիտության վրա նայում է որպես մի ավելորդ բեռի և որը չի ըմբռնում նրա կարևորությունը: Այսպիսի ժողովուրդը պիտի հարկադրվի ուսումնասիրել այդ գիտությունը, եթե միայն այլևս ուշ չլինի»:

Այո՛, հայությունը ճակատագրորեն պիտի հարկադրվի հիշելու պատերազմի գործին ծառայող գիտությունների մասին, հենց որ հնչի ինքնապաշտպանության չարաշուք ժամը: Իմ կարծիքով՝ երեքն են այն ուժերը, որ հայությունը պետք է լծի իր ինքնապաշտպանության ու բախտի կառքին՝ հետայսու որպես ազգ ապրել կարողանալու համար: Այդ փրկարար ուժերն են՝ ռազմարվեստ, ցեղային ինքնաճանաչություն և ցեղային բարոյական:

III
ՌԱԶՄԱՐՎԵՍ
(ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿՈՂՄԸ)

Մեր օրերում այլևս ոչ ոք է՛ ժխտում պատերազմի հոգեբանական կողմը, ինչպես և ոչ ոք է ընդունում, թե զինվորը ավելի չէ, քան մի կենդանի մեքենա: Նվաճումների մասին երագող սպան պիտի սովորի նախ նվաճել իր զինվորների սիրտը, իսկ այդ բարոյական հաղթանակի համար նա ընդունակ պիտի լինի տարրական ռազմարվեստ ուսուցանելուց զատ, դեկավարել գիտենալ նաև նրանց ներքին, հոգեկան կյանքը:

Չկա ավելի սխալ, բարբարոս և բարոյագուրկ կարծիք, քան այն, թե պատիժներով կարելի է ուղղել մարդը, ինչպես ավելի միամիտ կարծիք, քան այն, թե ձևական օրենքի ուժով կարելի է ստիպել զինվորին նետվելու մահվան գիրկը:

Անհատն ուզում է գիտենալ, թե ինչու է մեռնում, թե ինչու պիտի զոհաբերի իր կյանքը: Դա մեռնողի սրբազան իրավունքն է, որ պետք է հարգվի իր ղեկավարների կողմից: Ձորքը, որպես ազգամիջյան պայքարի գործիք, հոգի ունեցող հավաքական մարմին է և ոչ մեռյալ մեքենա:

Սպա և զինվոր պետք է լրացնեն իրար, նրանցից ամեն մեկը կատարում է ազգային ընդհանուր պարտականության իր բաժինը:

Հրամայել ու հնազանդվել՝ երկու համարժեք երևույթներ են, հավասարապես անհրաժեշտ բանակի գործառնությունների համար: Մեկը հրամայում է, զոհաբերություն պահանջում մի գերագույն հեղինակության անունով, մյուսը հնազանդվում է հանուն այդ միևնույն հեղինակության:

Այսպես՝ անձնական չէ պետի իշխանությունը, ինչպես և զինվորի հնազանդությունը:

Ասել է՝ կա մի երրորդը, որի անունով մեկը հրամայում է, մյուսը՝ ենթարկվում: Յեղն է այդ երրորդը, որի համար զինվորն ու զորավարը եթե հավասար ուժեր չեն, ապահովաբար արժեքներ են, երբ զոհաբերվում են:

Զինվորը, որն երեկ գրեթե ծառա էր, այլևս պետք է համարվի սպայի ինքնագիտակից աշխատակիցը: Նվիրապետական ստորադրելիություն ասելով՝ այլևս պետք է հասկանալ աշխատակցություն և ոչ ծառայականություն:

Ահա՛ թե ուր է զինվորական ծառայության վեհությունը:

Ռազմական դաստիարակություն

Ոչինչ արժեն նյութեղեն ամրությունները մի երկրի համար, եթե նրա որդիների սրտերը բարոյական բերդեր չեն:

Էականը ժողովուրդների քանակը չէ, այլ նրանց որակը, նրանց ոգին:

Խոսքերիս վկա՝ մեր անմահ Վարդանակերտը, ուր մի բուռ հայերի անպարտելի արիությունը սրբեց թշնամու հազարյակները և թափեց Երասխը: Վկա՝ Մարաթոնը, ուր հազարի չափ հույներ ծառացան պարսից բանակների դեմ և հաղթանակեցին, վկա՝ Ֆրիդրիխ Մեծի վարած ճակատամարտը Լաուտենի մոտ, ուր թվապես հինգ անգամ նվազ ուժերով նա ոչնչացրեց ավստրիական բանակը: Հապա լեհական մանգաղավորնե՞րը, որոնք հաճախ անգեն բազուկներով լռության էին դատապարտում ռուսական հրետանին: Հապա Պիոն-Կոպի դե՞ պքը, ուր բուրերը յոթնիցս նվազ ուժերով հարձակվեցին անգլիական մի զորամասի վրա և ոչնչացրին այն:

Բայց ինչո՞ւ շարունակել ծաղկաքաղը հերոսական օրինակների: Աճապարենք հարցնել, թե ինչու մն է մեկը՝ յոթին, հարյուրը՝ հազարին հաղթելու գաղտնիքը:

Դա պետք է փնտրել հաղթականի ռազմական, անձնվեր ոգու մեջ:

Հաղթությունը ժպտում է ռազմիկին, որ գիտի աներկյուղ աչք աչքի գալ մահվան հետ:

Հաղթությունը ժպտում է նրան, ով գիտի ժպտադեմ մեռնելու աստվածային գաղտնիքը:

→ Ամեն մի առաջնորդ այնքան է պահանջում իր զինվորներից, որքանի ընդունակ է ինքը: Միայն այնքան անվեհերություն և անձնագոհություն, որքանի ընդունակ է ինքը, և ո՛չ ավելին: Եվ ուր վերջանում է լավ առաջնորդը, այնտեղ սկսում է վատ զինվորը:

Իր կաշվի համար դողացող անարին մահվան երեսին ծիծաղող արի զինվոր չի ունենա:

Ինչպե՞ս կարելի է ապրել, երբ հայրենիքդ և վայրկյանը հրամայում են մեռնել:

Ինչպե՞ս կարելի է անձնապես վայելել այն կյանքը, որը զլացար գոհաբերել աստվածներիդ, հայրենիքիդ և ազգիդ:

Փոքրոգության չափ հիմարություն չէ՞ փախցնել երջանիկ առիթը, երբ կարող էիր օրերի կյանքիդ գոհաբերությամբ անմահություն ձեռք բերել:

Դժբախտություն չէ՞ չհասկանալ, թե մի օր ոչնչի համար մեռնելուց գերընտրելին մի բանի համար մեռնելն է:

Անմտություն չէ՞ կարծել, որ եթե չընկար կովում, մի օր, մի ժամ, գուցե և մի վայրկյան հետո չես մեռնի կովից դուրս՝ «խաղաղ պայմաններում»:

→ Գիտցի՛ր մեռնել, երբ կարիք կա, երբ պետք է մեռնել: Եղի՛ր տերը կյանքիդ, որը չգիտես տարիներ, թե՛ վայրկյաններ պիտի տևի:

«Լավ է մեռնել՝ ապրելու, քան թե ապրել մեռնելու համար»: Հա՛յ սպա, սրիդ վրա գրի՛ր իմ այդ խոսքը, որ նրա ոգով դաստիարակես զինակիցներիդ, քանզի միայն հայրենապաշտ և արիացուցիչ դաստիարակությունն է, որ ուժ պիտի տա քեզ և զինվորիդ՝ ուրախ լինելու և՛ մահվան հանդեպ, հաղթելու և՛ մահը:

ԲՈՒՄԵՆՅԱՆ Ե 1915-ին Ծո Նստ

Արվեստից արվեստը

Կա արվեստից արվեստը, որին անձանոթ գորավարը միայն դիպվածով կարող է դափնիներ շահել: Մարդկային սիրտը ճանաչելու և այն վարելու արվեստն է դա: Զուտ հոգեբանորեն վերցրած ճակատամարտն այլ բան չէ, եթե ոչ ինքնամարտ: Հրամանատարը ինքնաղեկավարությամբ է ղեկավարում իր զորամասը: Ղեկավարելով ինքն իրեն, իր ներքին հոգեկան աշխարհը՝ նա ղեկավարում է և իր զորամասը: Պայթեց առաջին գնդակը՝ իրական վտանգի թագավորությունը թևակոխելու առաջին վայրկյանից մինչև ռազմագործողությունների դադարը, մինչև հաշտության կնքումը ղեկավարն ունի մի հատիկ անելիք՝ արի և խանդավառ վիճակի մեջ պահել իր զորամասերի հավաքական սիրտը:

Առաջնորդը կենդանի խորհրդանշանն է հաղթանակի և պարտության, փառքի և անփառունակության, աղբյուրը՝

խանդավառության, հոգեբանական գինովության, ինչպես և հուսալքումի:

Թերթեցե՛ք անվանի ռազմավարների կյանքի և գործերի գիրքը, և պիտի համոզվեք, որ այն բոլորը, որոնք պատերազմի վարպետ անունը և արնոտ հետքեր են թողել պատմության մեջ, եղել են հանճարեղ հոգեբաններ:

Հաղթելու գաղտնիքը

Մարդը, նրա ստեղծագործ միտքը, նրա կամքը, նրա ոգին է դեպի իրեն թեքում հաղթության նժարը: Նյութական, զենք, ամրություն, հաջող դիրքեր միայն այնքան արժեք ունեն, որքան միտք, կամք, ցանկություն է դնում մարդը նրանց գործածության մեջ:

Մարդն է իր հաղթությունների և պարտությունների պատճառը: Եվ հաղթում է նա, որն արդեն հաղթել է իր կենդանական բնագոյը, իր եսը, իր վախը, երբ արդեն հաղթել է ինքն իրեն:

Պարտվում է նա, որ արդեն պարտված է ինքն իրենից, իր վախից, իր բնագոյից, իր եսից: Վա՛խն է իրական թշնամին: Դա աներևույթ թշնամին է, երրորդ ուժը կռվադաշտում:

Պատերազմող երկու կողմերը էապես կռվում են երրորդի դեմ, իսկ այդ երրորդը՝ երկուսի էլ դեմ: Թշնամի կողմերը էապես ճգնում են պարտության մատնել իրենց սեփական վախը, իրենց սրտի մեջ նստած համառ թշնամուն:

Ջարդելով, խորտակելով իրար՝ նրանք միաժամանակ գինաթափում, զերում են իրենց սեփական վախը: Եվ ապահովաբար հաղթում է նա, որն ավելի շուտ է ինքնահաղթություն ստանում, որն ավելի առաջ է հաղթում իր վախը, իր սարսափը, կյանքին կառչած իր կենդանական բնագոյը:

Վա՛խը, դա ինքը, մարդ-կենդանին է, որը սիրում է կյանքը և ապրելու կույր ցանկությունից մղված՝ դիմագրավում է իրեն սպառնացող ամեն մի վտանգ: Եվ որքան կույր, այնքան ուժեղ է դա, որ պարտության է մատնում բազում ուժեր, հաղթվում սակայն մի հատիկ ուժից:

Մի բան ավելի քան կյանքը, կյանքից ավելի ուժեղ, ավելի խանդավառորեն սիրելն է այդ միակ ուժը: Մահն արհամարհել կարողանալն է այդ ամենահաղթող ուժը, որի առաջ լայնորեն բացվում են ոսկե դռները հաջողության տաճարի:

Իսկ, այդ «ավելի քան կյանքը» մեկի համար եղել է, մյուսի համար է, երրորդի համար շարունակում է մնալ հայրենի երկիրը, ժողովուրդը, ազատությունը, փառքը, ճշմարտությունը և այլն:

Ասել է՝ մեր գործին մահն արհամարհելու մղելուց առաջ պետք է կարողանաք նրա պաշտամունքի առարկան դարձնել անձնական կյանքից ավելի քաղցրը, ավելի արժեքավորը, ավելի ցանկալին: Պետք է կարողանաք հետևողներին ներշնչել այն վսեմ համոզումը, թե մեր կյանքը և անմահությունը մեր հայրենիքն է, ժողովուրդը, մեր զենքի փառքը:

Կարողացա՞ք անել այդ, կարողացա՞ք գեղեցկացնել, քաղցրացնել, ցանկալի դարձնել մահը, կարողացա՞ք ժխտել մահը ձեր զինվորների համար, եղե՞ք վստահ, նրանք զարմանք ու հիացում պատճառող խոյանքներով կապահովեն ձեր զենքի հաջողությունը: Չկարողացա՞ք, միամտություն մի՛ ունեցեք հաղթանակի հույսով պատերազմ ու ճակատամարտեր վարելու:

Չկարողացա՞ք, պատրաստվե՞ք լիուլի զգալու պարտության դառնություններն ու նվաստացումները, պատրաստվե՞ք՝ նվաստ և խոնարհ դիմավորելու հաղթական թշնամուն, որն ազատ է հարգելու փոխարեն և թքելու ձեր մատու-

ցած աղ ու հացի վրա: Հաղթանակի իրավունքն է՝ պարտ-
ված հակառակորդին իր ոտներուն պատվանդան դարձնել:

Վախի ազդեցությունը

Քանի դեռ մարդ արարածը անգոր զոհն է վախի՝ կեղծ են
և՛ կրոնը, և՛ գիտությունը, և՛ դաստիարակությունը: Չկա
հրեշ՝ ավելի անողորք և անողորմ, քան վախը կույր անասուն-
ների, բնագդական վայրենիների և գիտակցական մարդու
մեջ. մի հրեշ, որը կովաղաշտում իրեն ապավինողներին
հանձնում է թշնամու և մահվան ձեռքը:

Վախը վտանգ է տեսնում այնտեղ, ուր չկա:

Չկա ավելի վատ և ստոր խորհրդական քան վախը, որ
սպանում է իրեն ենթարկվողներին երբեմն ֆիզիկապես,
բայց միշտ էլ բարոյապես:

Վախը, որ առաջացնում է խավարը, մենակությունը, անո-
րոշությունը, չարագուշակ լռությունը, ծայրահեղ հոգնա-
ծությունը, քաղցը, տկարությունը, արնահոս վերքը, սպան-
վածի դիակը և այլն, հարվածում է մեզ միաժամանակ և՛ ֆի-
զիկապես, և՛ մտավորապես, և՛ բարոյապես:

Վախը սպանում է մեր խիղճը, մոռացնել տալիս մեր պար-
տականությունները՝ ուժեղացնելով անասունը մեր մեջ:

Կա վախը՝ չկա այլևս կամավոր ուշադրություն, անսխալ
նշանառություն, հակառակորդի տկարությունից և ռազմա-
վարական սայթաքումներից օգտվելու կարողություն: Կա՛
վախը՝ այլևս գինվորի ուշադրությունը հավասար չափով
բաժանված չէ իր պետի և հակառակորդի միջև, այլևս նա
անկարող է դառնում տալ աչքը թշնամուն, ականջը՝ պետին:

Փախուստի գաղափարը

Կովի բախտը վճռում են վայրկյանները, և իմաստուն ռազմավարները գործում են վայրկյաններով և ո՛չ ժամերով:

Որսացի՞ր վայրկյանը՝ տոնի՞ր հաղթանակդ:

Փախցրի՞ր վայրկյանը՝ չկա՞ հաջողություն:

Լինում են վայրկյաններ կովի ժամանակ, երբ ամբողջ գործամասեր առանց լուրջ պատճառի փախչում են, թողած իրենց դիրքերը:

– Ի՛նչ է, ի՛նչ կա, ինչո՞ւ են փախչում, արդյոք անկարելի՞ է մնալ միննույն դիրքերում:

– Ո՛չ:

– Թշնամի՞ն է երևացել նահանջողների թիկունքում:

– Ո՛չ:

– Անհաղթելի՞ է թշնամին:

– Ո՛չ:

– Հապա ինչո՞ւ է ձեր գործամասը լքել իր դիրքերը:

– Չգիտեմ, – նման դեպքում պատասխանում է տգետ սպան կամ էլ զայրացած հայիոյում. «Զինվորներ չեն, այլ վախկոտ ոչխարներ»:

Սակայն առանց պատճառի չէր զինվորների անսպասելի փախուստը, և սպային զինվորներ էին տրված ղեկավարելու և ո՛չ ոչխարներ: Ամբողջ դժբախտությունը նրանումն է, որ ղեկավարը չգիտի, որ անսպասելի և անգիտակցական փախուստը հոգեբանական մի պարզ երևույթ է, որի համար զինվորը չէ մեղավոր, այլ՝ իր պետերը:

Անգիտակցական փախուստի պատճառը հաճախ լինում է տեսողական պատրանքը կամ փախուստի գաղափարը՝ առաջ եկած թշնամու կրակի հանկարծական ուժեղացումից: Այսպիսի դեպքում զինվորը անգիտակցաբար պատկերա-

ցումից անցնում է գործողության: Այսպիսի դեպքում փախուստի ձգտումը մի կամ մի քանի զինվորների կողմից ընդունվում է իսկական փախուստի ձևը և նրանց ոտքի հանում: Մնացածները ենթարկվում են փախչողների օրինակին՝ նրանց նախաձեռնության ոգու ազդեցությանը:

Ոչ մի տեղ անձնական օրինակը այնքան վարակիչ չէ, որքան կռվադաշտում: Հոգեբանորեն իրեն մենակ չզգալու համար զինվորը ենթարկվում է այն բոլորին, որոնք իրենից ուժեղ են թվում, որոնք գիտեն խիզախել, հանդգնել, նախաձեռնել: Նա նետվում է առաջ խիզախի հետ, անմտաբար հետ փախչում վախկոտի հետ. Նա չի կարող հոգեբանորեն մենակ մնալ: Զգա՞ց իրեն մենակ, այլևս գորամասն այն չէ, ինչ որ էր ժամ, վայրկյան առաջ, երբ իրեն հետ, իր կողքին էր զգում իր ցեղի բովանդակ ուժը: Նա պատրաստ է այլևս փախչելու, այլևս նա պատժված է հոգեբանորեն: Այսպիսին է զինվորը կռվում:

Զափազանց կարևոր են առաջին տպավորությունները: Ահա՛ թե ինչու պետք է ամեն կերպ ձգտել, որպեսզի գորամասող հաղթական հանդիսանա առաջին իսկ բախումների ժամանակ:

Մի՛ վիրավորի՞ր զինվորիդ, դաստիարակիչ միջոց չէ՛ վիրավորանքը:

Ոգին տկարանում է կրավորական պաշտպանողականից, նահանջից, լուրից հարևան գորամասերի պարտության մասին, թիկունքից եկած տխրապատում նամակից, թերթերի և սուրհանդակի վատ տեղեկություններից, դեպի պետն ու ընկերն ունեցած անվստահությունից, անգործությունից, ընդունայն հոգնածությունից, վիրավորների ու սպանվածների

տեսքից, դասալիքներից և անպարտաճանաչների անպատիժ մնալուց և այլն:

Վա՛յ այն ռազմավարին, որ ծանոթ չէ զինվորի հոգեկան կյանքի գաղտնի զսպանակներին, և վա՛յ այն բանակին, որի ղեկավարը չգիտի, թե զորքը հոգեբանական տագնապներից զերծ պահելու միակ փրկարար միջոցը անմիջական ղեկավարությունն է: Հրամանատարը պետք է լինի միշտ զորամասի կողքին և ազդի անդադրում ուժարձակ զինվորների վրա:

Նկատվե՛ց տատանում զինվորների մեջ, վհատություն, փախուստի ձգտում, հրամանատարը անմիջապես պետք է երևա զինվորների մեջ, ծաղրի թշնամու ճիգերը, համոզի զինվորներին, թե թշնամու կրակի սաստկացումը, ինչպես և նրա գոռ «հուռոտան» հետևանք են վախի:

Նման տագնապներից ազատ չէ և թշնամիդ, զիտցի՛ր քայո և օգտվի՛ր նրանցից: Ոչինչ այնքան հանգստացուցիչ, գոտեպնդիչ չէ կռվի ժամանակ, որքան ղեկավարի խրոխտ ձայնը:

* * *

Նա, որ ցանկություն և ժամանակ է ունեցել ուսումնասիրելու մեր վերջին տարիների ռազմական անհաջողությունների պատճառները, անվերապահորեն կխոստովանի, որ մեր բոլոր պարտությունների մեջ վճռական դեր են կատարել մեր տարերային գաղթերը:

Եվ հասկանալի է դա: Ոչ մի հիվանդություն այն աստիճանի տարափոխիկ չէ, որքան խուճապը: Այդ զարհուրելի հիվանդությունն էլ իր վարակիչ մանրեն է ստանում վտանգից, վտանգված վայրերից փախչող անհատից կամ զանգվածից: Փախչելով կռվից, թշնամուց, վտանգից՝ զինվորը, թե ոչ զինվորը, դառնում է վտանգավոր միայն իրեն և յուրայինների համար: Նա ակամայից ամենամեծ ծառայությունն է մատու-

ցում առաջացող թշնամուն: Նա անում է այն, ինչ որ չպիտի կարողանային կատարել թշնամու բանակները:

Երևալով այս կամ այն վայրում՝ նա իր նկուն և խղճալի տեսքով, իր պարտվածի և զենընկեցի հոգեբանությամբ ակամայից թշնամու հզորության գովքն է անում՝ հարյուրապատկելով նրա ուժերը, թնդանոթները, միջոցները:

Նա ակամայից դառնում է թշնամու առաջամարտիկ գորագունդը, նրա ամենաաննշան հաջողությունները ուռցնողն ու տարածողը:

Վտանգից փախչողն է դավադրաբար թիկունքից իր գորքերին առաջին հարվածը հասցնում: Նա է բարձրացնում սեփական կաշվի արժեքը և պսակագրկում սրբություններն ու իդեալները:

Չարհուրելի՛ է գաղթը: Որքան մեծ, այնքան աղետալի է դա: Իսկ մեծանում է նա ժամերով, վայրկյաններով: Որպես ձյունագունդ՝ որքան թավալվում, որքան առաջանում, այնքան աճում է, մեծանում: Գաղթը, գաղթականությունը՝ ահա՛ հայ գորքի ներքին թշնամիներից մեկը:

«Վտա՛նգ կա, մա՛հ կա»,— դավաճանորեն հիշեցնում է թշնամու հետ չափվող գորքերին խուճապի մատնված գաղթականությունը և ստիպում անգամ ամենախիզախներին ու անձնվերներին ցնցվել, հետ նայել, ասել է՝ մտածել նահանջի մասին: Եվ կովոդների հոգիների մեջ սկսվում է տագնապը: Նրանց համար, երբեմն կամաց-կամաց, երբեմն էլ մի վայրկյանի մեջ գունատվում են, անարժեքանում, կորցնում իրենց լուսապսակն այն բոլոր իդեալները, որոնց պաշտամունքն իրենց թշնամու դեմ էր հանել:

Եվ այսպիսով, յուրայիններից դավադրված ու պարտված դժբախտ գորքը, որն ուխտել էր տուն վերադառնալ «կա՛մ վահանով, կամ վահանի վրա» վերադառնում է սարսափով

բոնված գաղթականության հետ, վերադառնում է վահանը լքած՝ իր ետևից դեպ իր երկրի խորքերը քարշ տալով հաճախ թվապես իրենից շատ թույլ թշնամուն:

Ահա՛ թե ինչու խելոք թշնամին, ծանոթ բանակների հոգեկան կյանքի թաքուն գապանակներին, ամեն կերպ ճգնում է գաղթեր առաջացնել, գաղթականությունն ստեղծել իր հակառակորդի անմիջական թիկունքում:

Ահա՛ թե ինչու՛ կովի հոգեբանությանը ծանոթ հրամանատարությունը ոչ մի միջոցի առաջ չպիտի կանգ առնի՝ կովի օրերին կովի վայրերում անհնարին դարձնելու գաղթ կոչված չարիքը:

Վախի դեմ

Որպես վահան վախի դեմ բանակները գործածել են և գործածում են մի շարք նյութական և բարոյական միջոցներ: Սպարտացիները,– ասում է պատմությունը,– կովում կարմիր էին հագնում, որպեսզի չսարսափեն արյան գույնից: Հին Գաղղիացիք վախի դեմ կովում էին ամենակոպիտ միջոցներով, նրանք կովի առաջին գծի վրա գտնվողներին իրար էին կապում երկաթե շղթաներով, որ նահանջելու մասին չմտածեն: Չինացիք վախի դեմ կովում էին իրենց հոչակավոր պատնեշով:

Սևաստոպոլի պաշարման օրերին ֆրանսիացիք գրոհներից առաջ խմում էին հարբելու աստիճան: Նախավերջին պատերազմում գերմանացիք, իրենց զորամասերը բարոյալքիչ տեսարաններից հեռու պահելու նպատակով, վիրավորների տեղափոխությունը և մեռելների թաղումը կատարել էին տալիս տեղի ազգաբնակչությանը:

Ամբոխը, ինչպես և զորքը, միշտ էլ կարոտ է խթանի: Նա կարիք ունի առաջնորդի, առաջնորդվելու: Նա սիրում է ու-

ժեղին, սիրով ենթարկվում է նրան, որի ղեկավարության տակ քիչ անգամ է կարմրում, պարտվում: Նա հաճախ հուսախաբում է, դավաճանում, լքում տկար և անվճռական առաջնորդներին: Կարող առաջնորդի անձնական օրինակը, անվեհերության և խիզախության օրինակը, վայրկենաբար բոցավառում է գորքը, ամբոխը և նրանց մղում մեծագործությունների: Իսկ երբ պակասում է կարող և արի առաջնորդը, վախը կենդանի դիակների է վերածում բանակը:

Քիչ են այն ռազմավարները, որոնք իրենց բանակներին խանդավառելու նպատակով օգտագործած չլինեն նրանց անասնական ախորժակները:

«Ես ուզում եմ ձեզ առաջնորդել դեպ աշխարհի ամենաարգասավոր դաշտերը, հարուստ նահանգներ, մեծ քաղաքներ կլինեն ձեր իշխանության տակ: Այնտեղ կգտնեք պատիվ, փառք և հարստություն»,– ասում էր Նապոլեոնը իր զինվորներին:

«Պետք է լինել լավ անասուն, այն էլ լավ անասունների ցեղից՝ դա առաջին պայմանն է հաջողության»: Մպենսերի այդ խոսքերը ևս զուրկ չեն որոշ ճշմարտությունից: Ֆիզիկական դաստիարակությամբ անհատը դառնում է ավելի տոկուն, բայց չի փրկվում մահվան վախից:

Այդ բոլորը՝ ֆիզիկական դաստիարակություն, կողոպուտի տենչ, բարոյականություն, պատիժ, երկաթե կարգապահություն, վարձատրություն, կարող են, անշուշտ, թուլացնել, լրության մատնել մահվան վախը, բայց այդ բոլորը մեզ կարող են տալ միայն հարաբերական գերազանցություն և ոչ ավելին, ոչ այն ամենակարող ուժը, որը ստուգապես մեր սրտին և քմահաճույքին է հանձնում թշնամու բանակները:

Ի՞նչն է սակայն, այդ ամենահաղթ ուժը, որի առաջ տեղի է տալիս մահվան վախը, մահը:

Պատմությունը ցույց է տալիս, որ անհատը որոշ դեպքերում ընդունակ է գերազանցելու իրեն, անգիտանալու վտանգը, հաղթելու մահը, երբ իր մեջ խոսում է մոլեռանդ սերը դեպի՝ կրոնը, դեպի Հայրենիքը, դեպի ազատությունը, դեպի արդարությունը, դեպի անմահությունն խոստացող փառքը:

Վախ եվ կատաղություն

Թշնամին, որ մարմնավորում է վտանգը, իսկ այդ վերջինը՝ ցավն ու մահը, մեր մեջ ոտքի է հանում ինքնապահպանման բնագոյը, որի երկու երեսներն են վախն ու բարկությունը:

Չկա բարկություն, որ վախախառն չլինի, և ընդհակառակը: Եվ հենց դրանից է, որ վտանգի ենթական բնագոյական մղում է զգում՝ կամ նետվելու առաջ թշնամուն ոչնչացնելու համար, կամ հետ՝ խելահեղորեն փախչելու նրա առջևից:

Ավելի պարզ՝ ցավի ու մահվան նախատեսությունից ազատվելու խելագար ցանկությունը տազնապի է մատնում զինվորը: Եվ որովհետև տազնապները չափազանց սպառիչ են, զինվորն աճապարում է իր անհանգստությունն արտահայտելու որոշ ելք գտնել, ինչը, նայած ղեկավարի արժեքին, կարող է դրական կամ բացասական լինել:

Ահա նման տազնապներից է, որ հոգեբան պետերը գերծ պիտի պահեն իրենց զորամասերը: Պատերազմում չի բավում միայն քաջ լինել, պետք է և կատաղի լինել: Պետք է կարողանալ զարհուրանք ստեղծել ու ապրեցնել դա թշնամու բանակում: Կատարյալ մարտիկ չէ նա, որ կատաղություն չի շնչում: Միայն մեր կատաղությունն է, որ հակառակորդի մեջ մեռցնում է հաղթանակի հույսը: Որպեսզի մեր գրոհները լինեն հաղթաբեր, պետք է լինեն սարսափեցուցիչ:

Դա պահանջվում է մասնավորապես Արևելքում:

Նայի՛ր դրոշակին

«Հասկանո՞ւմ ես կատարածդ»,– հարցնում էր նավապետը մեկին, որը նոր էր ընդունվել որպես նավագ, և կայմի վրա բարձրանալու փորձեր էր կատարում: Երիտասարդը արդեն մոտենում էր կայմի ամենաբարձր կետին, երբ նայեց ներքև լեռնացող ալիքներին և գլխի պտույտ զգաց:

«Նայի՛ր դրոշակին, նավա՛գ»,– ձայն տվեց նավապետը՝ տեսնելով իր զինվորին վտանգի մեջ: Տղան հնազանդվեց իր ղեկավարի ձայնին և հաջողությամբ հասավ կայմի ծայրը:

Նույնը հաճախ զինվորի հետ տեղի է ունենում կովադաշտում, ուր ամեն ինչ խոսում է, վկայում ստույգ վտանգի, ցավի ու մահվան մասին:

Ճակատագրական վայրկյանին զինվորը պետք է լսի իր պետի սրտապնդիչ ձայնը. «Զինվո՛ր, նայի՛ր վերև, դրոշակիդ»: Դա ասել է՝ հիշի՛ր նպատակը, որի համար հազարներ ու հազարներ քեզ հետ զենք են վերցրել: Դա ասել է՝ արիացի՛ր, քանզի քեզ հետ է ցեղդ, որն ապրել է ուզում: Դա ասել է՝ նայի՛ր, վերևն աչք կա, որ տեսնում է քեզ, արթուն աչքը նախահայրիդ, որ հետևում է քո բոլոր շարժումներին:

«Նայի՛ր դրոշակին»: Դա ասել է՝ մի՛ մոռացիր, որ սկսված ճակատամարտի ելքից է կախված հայրենիքիդ ճակատագիրը:

«Սրանով կհաղթես»

Մեկից ավելի են այն միջոցները, որոնց կովի ժամանակ դիմում է ղեկավարը՝ իր գորքերի բարոյական թևն ու թափը ամրացնելու համար: Զինվորն իր հոգևոր հացն ունի՝ վերհիշումներ նախկին հաղթությունների մասին, նրա երևակայությունը հուզող վեհ պատկերներ, վառ ու կենդանի նկա-

րագրություն նրա հաղթահարած դժվարությունների, բարեգուշակ նշաններ և այլն:

«Ալեքսանդր Մեծի գուշակը,– ասում է Պլուտարքոսը, որ հետևում էր իր թագավորին պատերազմների ժամանակ,– մի օր գորքերի ուշադրությունը հրավիրեց արծվի վրա, որ սավառնում էր աշխարհակալի գլխի վերևում և իր թռիչքով առաջնորդում էր նրա գորքերը: Այդ բարեգուշակ նշանը ոգևորեց բոլորին և փաղանգը արագ վազքով՝ նման ծովի ալիքին, հետևեց հեծելագորին, որ գրոհում էր թշնամու դեմ»:

Զինվորի հոգու շարժումներին ծանոթ աշխարհահռչակ գորավարներից մի ուրիշը՝ Հաննիբալը, նույն նպատակով շոյում էր իր գորքերի փառասիրությունը՝ ասելով նրանց. «Ես, որ եղել եմ ձեր բոլորի աշակերտը, ձեր պետը դառնալուց առաջ»:

Ահա՛ և գորավարների գորավարը՝ Ավարայրի Վարդանը. «Արդ, աղաչեմ զձեզ, ո՛վ քաջ նիզակակիցք իմ. Մանավանդ զի բազումք ի ձեռք լավագոյնք էք քան զիս արիությանք, և գահի վեր ըստ հայրենի պատուոյն, բայց յորժամ ձերով կամօք և յօժարությամք առաջնորդ և զօրագլուխ ձեզ կացուցէ՛ք, հեշտ և բաղձալի թվեսցին բանք իմ ի լսելիս մեծամեծաց և ի փոքունց»²:

* * *

Հարո՛ւստ է Սյունյաց աշխարհը՝ հինավուրց վանքերով ու բերդերով. կիսավեր ու փլատակ սրբավայրեր, որոնք դա-

² Հատված Եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» երկից. «Արդ, աղաչում եմ ձեզ, ո՛վ իմ քաջ նիզակակիցներ. մանավանդ որ ձեզանից շատերը քաջությամք ինձնից ավելի լավ էք եւ հայրենական գահի պատվով՝ ավելի բարձր. բայց երբ ձեր հոժար կամքով ինձ կարգեցիք ձեզ առաջնորդ եւ զօրագլուխ, թող իմ խոսքերը ախորժալուր եւ բաղձալի թվան մեծերիդ ու փոքրերիդ ականջներին» (թարգմ.՝ Ե. Տեր-Մինասյանի):

րեր շարունակ թուրքի համար ախոռի և դարմանանոցի տեղ էին ծառայում: Այս պարագան, որն իմ ուշադրությունը գրավել էր Սյունիք մտածս հենց առաջին օրերից, ինձ հնարավորություն ընձեռեց իմ վարած ռազմագործողություններին տալ Խաչակրաց արշավանքի բնույթ: Իմ զինվորը սրբազան դողով էր նայում հեքիաթական Գեղվաձորի դուռը փակող Բաղաբերդին, երբ նրա ճակատը խոնարհվում էր, և շըրթունքները շոշափում էին իր փլատակների մեջ այնքան վեհ բերդի քարերը: Իմ զինվորը չէր կարող այլևս անտարբեր անցնել իր երկրի պատմական հիշատակների մոտով:

Եվ հենց այդ թուլության մեջ էր նրա անպարտելի ուժը:

– Այս շրջանի թրքությունը և՛ ուժեղ է, և՛ լավ կռվող, – մեր հարձակումներից մեկի նախօրյակին ասաց ինձ իմ զինվորներից մեկը:

– Եթե կասկածում ես մեր հաջողությանը, կարող ես վերադառնալ տուն, – նկատեցի իրեն: Խոսելու փոխարեն նա լաց եղավ, պետք էր սիրտն առնել:

Ավելացրի.

– Երևի չգիտես, որ այդ շրջանում ևս կան հայկական եկեղեցիներ և բերդեր, որոնք հսկա մագնիսների պես մեզ պիտի քաշեն, տանեն, և որոնց մեջ ես և դու պիտի աղոթենք վաղը:

– Ո՞վ կարող է, – դարձա վաշտերիս՝ ուզելով խռովել նրանց պետերի հոգին, – ո՞վ կարող է ձեզնից հանգիստ լինել, երբ դեռ որոշ թրքական շրջաններում հայկական սրբավայրեր կան:

– Ո՞չ որ:

– Ուրեմն, գոհ լինենք ճակատագրից, որ մեզ է վիճակված դարավոր պղծանքից փրկելու Սյունիքի սրբությունները:

– Գո՛հ ենք, – գոռացին վաշտերս:

– Ուրե՛մն, ուր հայկական սրբություններ, այնտեղ՝ մենք, Այնտեղ մեր սուրբ:

– Այո՛, այո՛ ...

Սկսվեցին կռիվները: Եվ, այնուհետև թշնամու դիրքերի և քանակի մասին հարցնելու փոխարեն, Սյունեցին հարցնում էր հայկական եկեղեցիների և բերդերի մասին և առաջ էր խոյանում որպես խաչակիր:

Հաղթական տրամադրություն

«Հոգեկան ուրախ տրամադրություն՝ քրիստոնեական կրոնի հիմքերից մեկն է դա»,– ասել է անգլիացի մի սուսովածափան: «Բանակների հաջողության մայրն է դա, հաղթության դայակը»,– ավելացնենք մենք:

Ես մի սպա գիտեմ, որին իր սրամիտ զինվորներն անվանում էին «Ուրբաթախոս»: Մի գույգ ուսադիր, խթանները և սուրը – ահա՛ այդ զինվորականը և իր բովանդակ արժեքը:

Թթված դեմքով, սակավախոս և անհամբույր այդ մարդը պաշտոնական էր անգամ իր սպասյակի հետ:

– Լռությո՛ւն,– սա էր ամենից հաճախ գործածած խոսքը:

Մարդկային հոգեբանությունից անտեղյակ այդ զինվորականը չգիտեր, թե ծիծաղը, երգը, խաղը հոգևոր կազդորիչներ էին զինվորների համար: Չգիտեր, որ բանակները հաղթում են և պարտվում միշտ էլ կռիվներից դուրս, բախումներից առաջ՝ նախ հոգեբանորեն: Նա ծանոթ չէր այդ պարզ ճշմարտությանը և մինչև վերջ էլ անծանոթ մնաց հաղթությանը:

* * *

– Ի՞նչ է վշտի ֆիզիկական ազդեցությունը,– հարցնում է բժ. Ժակոբին և պատասխանում.

– Նույնը, ինչ որ է գնդակից կամ սրից ստացված վերքինը: Վիշտը սպանում է նույնքան ստույգ, թեև դանդաղ կերպով, ինչպես և հրացանը: Եվ ավելի մեծ է թիվը նրանց, որոնք վերջին դարի ընթացքում սպանվել են վշտից, քան նրանք, որ մեռել են կովաղաշտում:

Լիկուրգոսի իմաստուն կարգադրությամբ՝ սպարտական ճաշարաններում դրված էր ծիծաղի աստվածը:

«Ուժեղ ծիծաղը,– ասում է Տալմանը,– նման է ուժանակային փամփուշտի, որը պայթում է ճիշտ իր տեղը, իսկ սևամաղձությունը, նման է այն հրացանին, որը հետ է տալիս և գետին գլորում իրեն գործածողին»:

«Չեմ կարող չմտածել, թե աշխարհին ավելի գեղեցիկ և երջանիկ պիտի լինի, եթե մեր դաստիարակիչները մշակել կարողանան պարտականություն դեպ ուրախությունը, և ուրախությունն դեպի պարտականությունը»,– ասում է Կարլեյլը:

«Ցույց տվեք մեզ մի մարդ, որ երգում է աշխատելու ժամանակ: Դա ավելի գործ է կատարում, ավելի լավ է կատարում և ավելի երկար է աշխատում: Նա, որ առաջանում է երաժշտության հնչյունների տակ, հոգնածություն չի զգում: Ասում են, թե աստղերը երաժշտություն են ստեղծում, երբ դառնում են իրենց մոլորակային ուղեգծի շուրջը»,– շարունակում է Կարլեյլը:

«Զորամասիդ մեջ,– ավելացնենք մենք,– նայած իր տրամադրության, աճում կամ տկարանում է հավաքական սիրտը: Առաջին դեպքում նա զգում է իրեն ավելի ուժեղ և հարձակողական: Երկրորդ դեպքում նա մտածում է միայն նահանջի մասին»:

Թախիծն առաջացնում է անհանգստություն: Իսկ այդ վերջինը՝ հոգեկան անգորություն և վախ: Ուրախությունն, ընդհակառակը, սնուցանում է մեր ուժերը՝ ամրացնելով մեր

թեն ու թափը: Ջինվորը չի սիրում խոժոռաղեմ դեկավարներին, որոնց հայացքը «թթվեցնում է կաթը»:

Արդ, թե ինչու եմ ասում՝ եղի՛ր կենդանի արև, քանզի հաղթական հանդիսանալու համար գորամասերդ պետք ունեն լույսի, ջերմության և ուրախ տրամադրության:

Չկա ավելի գոտեպնդիչ, արիական և գեղեցիկ շարժում, քան ծիծաղը ցրտի, սովի, հոգնածության ժամանակ, ծիծաղը թշնամու քթի տակ վտանգի դեպքում, մահվան երեսին:

Ես զինվորներ ունեի, որոնց մշտուրախ դեմքի պայծառությունը չէր կարող ծածկել և ոչ մի սև ամպ:

Չկա, նույնպես, ավելի տխուր և բարոյալքիչ պատկեր, քան անժպիտ, մոռալ, աներգ, քան հոգեպես թթված գորամասը:

Սյդպիսին պարտվում է դեռ կովաղաշտ չհասած, գերվում իր վախից՝ դեռ գերի չընկած:

Որպես մշտուրախ տրամադրության հետևանք՝ իմ ժողովրդական գորամասերում միշտ էլ կարելի էր լսել նման հատկանշական գրույցներ.

– Ասում են, թե,– պատմում է մեկը,– այս անգամ թաթարները գալիս են ավելի մեծ ուժերով:

– Ավելի լա՛վ,– և ավելացնում է մի ուրիշը,– մենք էլ ավելի մեծ թվով գերիներ և զենքեր կվերցնենք:

– Ասում են, թե դեպի Սյունիք շարժվող կարմիր բանակի մեծագույն մասն այս անգամ կազմում է հեծելազորը:

– Շա՛տ ուրախ ենք, վաղը բոլորս էլ կդառնանք ձիավոր,– պատասխանում էր մի ուրիշը:

– Վատ չէր լինի,– միջամտում է մի այլ զինվոր,– թե եկողներն այս անգամ հետներն ունենային կենսամթերք և ուզամթերքով բեռնավորված մի մեծ քարավան:

– Աստված տա՛, տղեր՛ք,– լսվում էր հարյուրապետներից մեկի ձայնը:

– Աստված ձայնդ լսի՛, պարո՛ն հարյուրապետ, և եկողների հետ մի սայլ էլ ծխախոտ ուղարկի մեզ,– ավելացնում է մի տարեց զինվոր:

– Չլինի՞ թե լուցկին մոռանան...

– Սյունեցու ախորժակ է, հա. ուզում ենք, որ խեղճ թուրքը, թաթարը, բոլշևիկը թե՛ գան մեռնելու և թե՛ մեզ նվերներ բերեն,– սրախոտում է մի ուրիշը և բորբոքում գորամասի վարակիչ քրքիշը...

Այս գրույցից միայն երեք օր անց՝ Սյունիքը կարմիր զորավարներից Կուրոչկինի և տաճիկ փաշաներից Զավալի միջոցով ստացավ մի քանի հարյուր ձիեր, մոտ երկու հազար գերի, թնդանոթ, գնդացիր, հրացան, դրոշակներ՝ այն ամենը, ինչ որ Սյունեցի զինվորը կատակով խնդրել էր երկնքից: Թշնամու միացյալ ուժերի պարտությունն այս անգամ ավելի մեծ եղավ, քան մեր տարած հաղթանակը:

Հմայքը

«Զինվորները կովում են պարտականությունից կամ պարտադրանքից մղված, բայց հաղթում են այն հարգանքի և հավատարմության շնորհիվ, որ տաճում են դեպի իրենց պետերը»: Խոր ճշմարտություն կա Գարիբալդիի այս իմաստուն խոսքերի մեջ:

Այդ կարծիքը չբաժանող զինվորականը կամ վառողի հոտ չէ առած, կամ տղետ է մահացիորեն:

Համաշխարհային պատմությունն իրենց անվան շոինդով լցրած հսկաները ոչ միայն սիրվում էին իրենց բանակների կողմից, այլև պաշտվում էին որպես պատերազմի աստված:

Անձնական հմայքը երկնքի շունչն է, աստվածների գաղտնի ազդեցությունը, որով հոգեկան ռազմավարը կախարդում է իր ղեկավարությանը հանձնված զանգվածները և հրաշագործությունների մղում նրանց:

Մտավոր արիություն

Օրերը և ժամերը նախապատրաստում, իսկ վայրկյանները վճռում են ռազմական գործողության բախտը: Ճակատագրական դեր են խաղում տազնապի վայրկյանները կովում, երբ ղեկավարը պիտի կարողանա գնահատել վայրկյանը, չափել հավանականությունները, վճռել և անհապաղորեն գործի անցնել: Մրա համար ղեկավարը պետք է օժտված լինի մտավոր արիությամբ:

Քիչ քան արժե հանճարեղ միտքը, իդեալական մարտագիւրը, պարզատեսության հասնող շրջահայացությունը, եթե ղեկավարին պակասում է մտքի արիությունը՝ ամենաանհրաժեշտը զորականի բարձր հատկություններից:

Արագ վճիռ և կորովի գործողություն – ահա՛ հաջողության գլխավոր գաղտնիքներից մեկը: Դժվարանձում ես կանգ առնել այս կամ այն վճռիդ վրա, տատանվում ես՝ նշանակում է փախցրիք վայրկյանը սրա հետ և հաղթությունը:

Չկա ավելի աղետալի հատկություն քան ղեկավարի մտավոր թուլությունը և երկչոտությունը:

Չկա ավելի ձախող ղեկավար քան տատանվողը: Եղի՛ր արի և՛ մտքով, և՛ մի մոռացիր, որ կա ավելի վատը քան վատ վճիռը՝ որոշ և հաստատ վճռի չգոյությունը, տատանումը, և որպես հետևանք՝ պարտությունը:

Նախաձեռնության ոգի

Ղեկավարի բարձր հասկությունը՝ մտավոր արիությունը, ունի իր հարազատ քույրը՝ նախաձեռնության ստեղծագործ ոգին: Այս երկուսը փոխադարձաբար լրացնում և ուժեղացնում են իրար: Չի կարելի ասել, թե որն է ավելի արժեքավոր. անհրաժեշտ են երկուսն էլ:

Ռազմարվեստի հին ձևերը ու միջոցները, որոնք երեկ և՛ նպատակահարմար էին, և՛ արդյունաբեր, և՛ գորավոր, այսօր այդպես չեն:

Կան շատ ծանոթ և ծեծված ճամփաներ, որոնք այսօր չեն տանում դեպի հաղթանակ: Տեսա և ծույլ միտքն է կուրորեն ընդունում այս կամ այն դասականացած հեղինակությունը, կարծիքը, ձևը: Այսօր կռվում տեղ չունեն մեռյալ մեթոդն ու տարրը:

Մի՛ հենվիր այս կամ այն քարացած կանոնին, ինչպես կույրը՝ իր ձեռնափայտին: Հեռո՛ւ կանոնամուլությունից: Եղի՛ր նախաձեռնող, կենդանի և ստեղծագործ:

Չկա ավելի խղճալի ղեկավար, քան իր տերերի հրամանները մեքենաբար գործադրողը: Այդպիսիներից փախչում է հաջողությունը: Ուզո՞ւմ ես հաղթել, եղի՛ր կռվում նախաձեռնող, ստեղծագործ և արի:

Ծանի՛ր թշնամուդ

Ճանաչի՛ր թշնամուդ:

Այդ երկու բառն էլ գրի՛ր հոգուդ մեջ, որ չմոռանաս երբեք:

Մարդկային է անհայտից վախենալ: Մեզ անծանոթ մի աննշան գորախմբակի գիշերային գրոհն ավելի ահավոր է, քան մի ծանոթ գնդի հարձակումը ցերեկը:

Թշնամին ավելի ուժեղ է, երբ չենք ճանաչում նրան: Մենք ավելի թույլ ենք, երբ անծանոթ ենք մեզ մահ սպառնացողին:

Մի ժողովուրդ, որի ռազմական միտքն ընդունում է միայն պաշտպանողական կռվի ձևերը, կարող է չափազանց հարձակողական թվալ մեզ. մի ռազմավար, որի հետևակ և անհաստատ միտքը վճռական ձեռնարկներից գերադասում է տագնապի աղետալի ձգձգումը՝ կարող է մեզ չափազանց ներգործոն թվալ, եթե ստուգապես ծանոթ չենք նրան:

Իսկ երբ ծանոթ ենք նրա հոգեբանությանը՝ մենք մեծապես կարող ենք օգտվել նրա թերություններից, կրավորական և տատանվող ոգուց, ինչպես և կարող ենք տեղին ու ժամանակին հեշտությամբ ամլության դատապարտել նրա առավելությունները:

Ծանոթանալով թշնամու ռազմավարական հայացքներին, ասել է՝ նրա կռիվները մղելու եղանակներին ու ոգուն, մենք որոշ չափով ապահովագրում ենք մեզ հանկարծակիի գալու անհաճո վտանգներից:

Չկա ավելի անմեղ բան, քան թաթար կռվողների դիրքերում բարձրացած «ալլա՛հ, ալլա՛հ» գոռում-գոչումը: Անշանթ որոտում է դա, որ դեռ չի նշանակում, թե թշնամին հարձակվում է, առաջանում: Բայց այդ ցեղի հոգեբանության անծանոթը կարող է այդ անմեղ աղմուկը ընդունել որպես որոտմունք՝ շանթից, հարվածից առաջ:

Փորձեցե՛ք երկու անգամ, միևնույն ժամին կամ միևնույն կետի վրա պարտության մատնել թուրք և թաթար զորքը, և այլևս այդ անուղղելի ճակատագրապաշտը չի հանդգնի նույն կետի վրա անհանգստացնելու ձեզ, որքան էլ որ պայմանները նպաստավոր լինեն իրեն համար:

Վա յ թաթար զորքին, եթե նրա առաջին փորձը անհաջող անցավ, կորած է նա:

Ինչ որ ժողովուրդն է, այն էլ՝ իր գորքը: Որքան հոգեբանորեն տարբերվում են ժողովուրդները, նույնքան էլ՝ իրենց բանակները: Գերազանցորեն կարգապահ և հարձակողական է գերման զինվորը, հնարագետ և ուրախ՝ ֆրանսիացին, անսելիորեն տոկուն է ռուսը, պաղարյուն՝ անգլիացին:

Երիտասարդ ժողովուրդները ավելի ռազմասեր և անհանգիստ են լինում: Քաղաքական իդեալները զգալիորեն ուժեղացնում են ազգերի ռազմական խանդը:

Ձենքի հաջողությունները բարձրացնում են, անհաջողությունները՝ ձգում նրանց ռազմունակությունը:

Ցեղերի խառնվածքի ինչպես և ռազմագիտական մտքի վրա մեծապես ազդում է ֆիզիկական միջավայրը, դաստիարակությունը, հարևանների վերաբերմունքը և այլն:

Երբ գիտես այդ բոլորը, երբ ճանաչում ես թշնամուդ, դու ավելի ուժեղ ես զգում քեզ, ավելի թույլ՝ թշնամուդ:

Այո՛, որքան լավ ես ճանաչում հակառակորդիդ, այնքան թույլ է նա քեզ համար: Ճանաչի՛ր թշնամուդ, որ հեշտությամբ հաղթես նրան:

«Կեսարը, – ասում է Պլուտարքոսը, – ճանաչում էր նրանց, որոնց առաջնորդում էր դեպի կռիվ, և նրանց, որոնց դեմ պատերազմում էր»:

Հայության մահացու թշնամին՝ թրքությունը, կարող է բազում քաղաքական ցուցանակներ փոխել, բայց էապես միշտ էլ է և կմնա նույնը՝ նենգ, տմարդ, մարդակեր: Հակառակ ուրիշներին՝ այդ ցեղի մարդկայնացումը իր թուլության մեջ է:

Եթե երբևիցե քեզ հաջողվել է մի հատիկ ազնիվ թուրք տեսնել, նշանակում է, թե դու նրան տեսել ես անգորի, անզենի, պարտյալի վիճակում:

Այդպիսիներին ես հանդիպել եմ Բալկանյան պատերազմի և Լեռնահայաստանի գոյամարտի օրերին՝ որպես գերիների, պարտյալների, թույլերի:

Ցեղերից ամենավայրագը եղել է և շարունակում է մնալ թուրքը: Իսկ վայրագությունը նշան է վախկոտության՝ ասում է հոգեբանությունը:

Ավելի վախկոտ է հավաքական թուրքը՝ ամբոխը, գորամասը: Երկու դար է, ինչ այդ ցեղը կառչած է մնում պաշտպանողական պատերազմին և ճակատամարտին, քանզի կրոնական զգացումը այլևս նրա հոգեկան կյանքին չի հաղորդում նախկին սաստկությունն ու թափը, որին ընդունակ էր մինչև ԺԷ դարը:

Թուրքերի քաջության առասպելը ծնունդն է իրենց բարբարոսության և ոչ թե իրենց մարտական առաքինությունների:

Նրանց անվան ու զենքի սարսափը Արևելքում եղել է ոչ այլ ինչ, եթե ոչ խաղաղ և անզեն ժողովուրդների կոտորածն ու կողոպուտը: Եվ միշտ էլ թուրքն իր բարբարոսությունը ծառայեցրել է որպես ահ ու սարսափ տարածելու միջոց:

Դա եղել է և շարունակում է մնալ թուրքերի զինվորական խաբուսիկ քաջության միակ աղբյուրը:

Դեռ ամեն ինչ չէ կույր կրոնամոլությունը: Գիտության և բարոյականի ուժին անծանոթ տաճիկ զինվորը վճռական է միայն կովի առաջին վայրկյաններում: Եվ վա յ իրեն, եթե իր առաջին հանդիպումը թշնամու հետ անցավ անհաջող: Շատ անգամ, զրեթե, առաջին անհաջողությունից հետո, նա դառնում է «ընկած ձի»՝ անընդունակ աքացելու: Այս է իրական թուրք զինվորը:

Զորավոր խոսքը

Գուցե և միակ տեղն է կովադաշտը, ուր ամեն բանից ավելի և ամեն բանից սուր զգացվում է կարիքը բարոյապես ազդելու և իշխելու մտքերի, սրտերի և կամքերի վրա:

Կարողանալ բռնակալորեն իշխել հոգիների վրա – ահա՛ դեկավարի ամենամեծ և ամենաանհրաժեշտ կարողությունը, առանց որի գորանոցն ու մարտադաշտը զինվորներին չի կարող հաղթության մղել: Այն, ինչ որ հաճախ դժվարանում է կատարել արդիական հեռաձիգ թնդանոթը, հեշտությամբ կատարում է դեկավարի զորավոր խոսքը:

Խոսքը՝ երբեմն հրամայող ու իշխող, երբեմն՝ կանչող ու մղող, խոսքը՝ միշտ պատկերավոր ու սեղմ, սրտերին կրակ, բազուկներին թափ, կամքերին մղում տվող խոսքն է իշխելու և վարելու միակ միջոցը:

Եվ որքան զորավոր՝ այնքան մեծ է նրա հմայքը, այնքան ընդարձակ է նրա տիրապետությունը: Խոսքը՝ դա ինքը դեկավարն է:

Հաղթելու համար քիչ է խելքը, տաղանդը, պետք է գորավոր խոսքը: Առանց զորավոր խոսքի բուրժ են սրերը, թույլ՝ բազուկները, անվճռական՝ կամքերը:

Առանց զորավոր խոսքի չկա իշխանություն հոգիների վրա, իսկ առանց այդ իշխանության՝ չկա հաղթություն: Մարդկային լեզուն չունի մի հատիկ բառ, որն այս կամ այն կերպ չազդեր կովում գտնվող զինվորի հոգեբանության վրա: Պետք է գիտենալ՝ ինչ և ինչպես խոսել զինվորին: Իսկ դրա համար պետք է ծանոթ լինել, եթե այսպես կարելի է ասել, «հոգեկան քիմիայի» օրենքներին: Պետք է բաղադրել կարողանալ որոշ զգացումներ զինվորի մեջ՝ մեր ցանկացած հոգեկան հուզումն առաջացնելու համար:

Տպավորություն է գործում շատ անգամ ոչ թե այն, թե ինչ որ ասում ենք, այլ այն, թե երբ, որտեղ և ինչպես ենք ասում:

Հայրենապաշտություն, կրոնական մոլեռանդություն, ազատասիրություն, բարի նախանձ և այլն, – ահա՛ զինվորական գորավոր խոսքի աղբյուրները:

Բա՛րձր հայրենասիրություն: Դա զինվորի սրտի ամենագգայուն լարն է, որի թրթռումներից մեծապես օգտվել են և օգտվում են ղեկավարները: Չկա, չգիտեմ մի պատմական զոհաբերություն, մի մեծագործություն, մի հերոսական թոփչք, որին ընդունակ չլիներ այդ հզոր զգացումը: Դա է անմահացրել Թերմոպիլյան կիրճը, Բուլղարական Շիպկան, հայկական Սյունիքը:

Կրոնական զգացումը հրաշքներ է կատարել անցյալում: «Ձեր առջև արքայությունն է, ձեր հետևը՝ դժոխքը, ընտրեցե՛ք մեկն ու մեկը: Որպես կայծոռիկներ կճառագայթեն պատերազմում ընկածների վերքերը: Նրանք կմտնեն Եդեմի գեղեցիկ պարտեզները և կպառկեն ոսկեթել բարձերի վրա...»:

Այսպես էր խոսում արաբի հոգուն ծանոթ ռազմիկ մարգարեն և իր ղեկավարած սպառազեն ամբոխը մղում էր դեպի մահ ու նվաճումներ:

Նույն հրաշագործ զգացումը մղում էր խաչակիրներին դեպի Հիսուսի գերեզմանը:

Գուստաֆ Ադոլֆը¹⁷ ամեն ճակատամարտից առաջ ծունկի էր բերում իր բանակները Տիրոջ առջև:

Կրոնավելի զինվորների համար մահը նահատակություն էր հավատքի համար: Նրա բանակներում սպաները կատարում էին և քահանայի դեր:

¹⁷ Շվեդիայի թագավոր

Մուվորովի ամենասիրած խոսքն էր՝ «Աստված է մեզ առաջնորդում, նա՛ է մեր գորավարը»: Ազատասիրության կրակով իր մարտիկների սիրտը վառում էր Գարիբալդին: Իսկ Բոնապարտը, ծանոթ ֆրանսիացու հոգուն, իր զինվորի և գորավարի ոգևորության աղբյուրն էր դարձնում պատվո լեզեռնը:

Եթե խոսքդ հայրենիքի մասին է, մի՛ խոսիր, այլ խոսեցրո՛ւ Հայրենիքը: Այս ձևով վարվի՛ր և՛ հերոսների, և՛ նահատակների նկատմամբ: Մի՛ խոսիր, այլ խոսեցրո՛ւ նրանց. Խոսի՛ր՝ զգալով նրանց սրտի զարկը, շունչը, ներկայությունը:

Երբ ես խոսում եմ Հայաստանի մասին, խոսքեր չե, որ փնտրում եմ մտքերս արտահայտելու համար, այլ հայրենիքիս հոգևոր դեմքը, որ նրանով զինովցած ու սիրահար, կարողանամ սերս, կարոտս, պաշտամունքս փոխանցել լսարանիս:

Գիտական դարձվածքներ չի սիրում զինվորը:

Հեռո՛ւ դատողություններից: Մի՛ փիլիսոփայիր, մի՛ ապացուցիր, այլ եղիր պատկերավոր և հոգեզրավ: Շատախոսության տեղ չե կովադաշտը՝ «քիչ խօսե, շատ ակօսե»: Խոսի՛ր զինվորիդ սրտին:

* * *

Բականյան պատերազմի ընթացքում ես զգացի գորավոր խոսքի ազդեցության ուժը: Մայր բանակից անջատ՝ բավականին առաջացել էր թեթև գորամասը և երեկոյան դեմ անսպասելիորեն դեմ առել մի անտառապատ լեռան, որի կատարից թշնամին անդադար ոմբակոծում էր մեր դիրքերը:

«Մինչև այստեղ և էլ ոչ մի քայլ առաջ», - զգացնել էր տալիս հակառակորդը:

Դրությունը սպառնում էր դառնալ եղերական մեզ համար: Մայր բանակը շա՛տ էր հեռու, որպեսզի ուժեղացներ մեր գրոհը կամ ապահովեր մեր կանոնավոր և անկորուստ նահանջը:

Քիչ հետո թշնամին պիտի պարզեր իր ուժերի քանակը և անցնէր հարձակվողականի՝ մեզ իսպառ ոչնչացնելու համար: Մնում էր խելահեղորեն նետվել առաջ: Դրա համար պետք էր սակավաթիվ զինվորներին մեջ բորբոքել հարձակողական ուժին այն աստիճան, որ հարձակվողների համար աննկատելի դառնար հակառակորդի թվական և դիրքային գերազանցությունը:

Տեղն ու վայրկյանը պահանջում էին խոսել և թշնամու կրակի տակ խոսեցի զինվորներին հետ: Դեռ չէի վերջացրել միայն վայրկյաններ տևող խոսքս, երբ որպես մի կենդանի պատնեշ դիրքերից բարձրացան մարտիկներս և տարերային թափով նետվեցին առաջ: Քիչ անց՝ «768»-ի կատարին վեհորեն ու հաղթական ծածանվում էր մեր եռագույնը, որը հայ զինվորների խիզախ քայլի համար բուլղար զորաց հրամանատարությունը պիտի զարդարեր քաջության խաչով:

* * *

Վսեմ խոսքի ազդեցությունից մեծապես օգտվել եմ երկրորդ անգամ Ղարաքիլիսայի ճակատամարտի նախօրյակին: Հայ զորքը, որի հետ և հայրենի հողից պոկված բազմահազար գաղթականությունը, լքելով Կարինից մինչև Ղարաքիլիսա տարածվող հողամասերը, եկել թափվել էր Դիլիջան: Դա այլևս զորք չէր, այլ անձև և անկերպարան մի զանգված, այլ քայքայված ու բարոյալքված մի անանուն բազմություն: Դա նահանջ չէր, այլ մի ժողովրդի գաղթ, տեղահանություն, փախուստ իր երկրից: Ընդհանուր շփոթի մեջ, տեղագրական հայրենասիրությունից մոկված՝ ծնունդ էին առնում համերկրացիական խմբեր և բռնում Երևանի, Ղարաբաղի, Գանձակի ճամփաները: Չկար ծիծաղ, երգ, բարձր խոսակցություն իսկ

չկար: Երեկվա չքնաղ ամառանոցը այլևս նմանվում էր մի լուռ գերեզմանատան, ուր հավաքված հուղարկավորների հսկա բազմությունը՝ իր ապրելու հույսը թաղելուց հետո, ինքն էլ չգիտեր, թե ինչու է շարունակում մնալ այդտեղ: Անհուսություն, շվարանք և սարսափ բոլոր դեմքերի վրա:

Երկրի այս դրության մեջ ընդհանուր գորահրամանատարի կայանից տեղեկացնում են, թե գորավար Նազարբեգյանը ցանկանում է տեսնվել Հ. Յ. Դաշնակցության Շիրակ Կենտրոնական Կոմիտեի ներկայացուցչի հետ:

Երևանից խնդրում են երեք օրով ևս զբաղեցնել տաճիկ զորքերին և հնարավորություն տալ մեր պատվիրակությանը հաշտություն կնքելու տաճիկների հետ: «Ես, ինչպես գիտեք, – ասում է ծեր զորավարը, – ես զորք չունեմ: Հերթը ձերն է, կատարեցեք, եթե կարող եք, Երևանի հրամանը»:

Մե՛րն է այժմ հերթը: Պետք է վերադառնալ Ղարաքիլիսա, բայց ինչպե՞ս, ի՞նչ ուժերով: Պետք է կամավորներ հավաքել, առնվազն հազար հրացանակիր, այն էլ ժամերի ընթացքում, և դա հոգեբանական մի այնպիսի մթնոլորտում, ուր ամեն ինչ կորած է համարվում:

Գիտեի, որ մի բուռ հին զինվորներից գատ ոչ ոք պիտի միանա ինձ, եթե հայտարարեմ, թե ինձ հրամայված է՝ «Հենց այսօր մի թեթև գորամասով վերադառնալ Ղարաքիլիսա, շփման մեջ մտնել թշնամու ուժերի հետ և սպասել օգնական ուժերի» (այդպես էր ինձ գրված հրամանագիրը):

Գիտեի և այն, թե հարկադրանքի մասին նման պարագաներում խոսք լինել չէր կարող: Կար, մնում էր մի հատիկ միջոց միայն, այն է՝ անվերջ նահանջների ճամփան բռնած հայ զինվորությունը թեքել դեպի թշնամին: Կախարդական խոսքի ազդեցությունն էր այդ հոգեբանական միջոցը: Եվ ես խնդիրն իրազործելու համար դիմեցի այդ միջոցին: Խոսեցի: Ծաղկաձու-

րի եկեղեցու բակում խոնված ժողովրդին էր ուղղված իմ խոսքերը: Պերճախոս չեմ, բայց հանդիսավոր վայրկյանը ինձ այդ օրը մի ժամով դարձրել էր հոետոր: Խոսում էի և դիտում: Խոսքերիս կայծերն ընկնում էին վատողի մեջ: Հուզում կար, բայց դեռ քիչ էր դա. ուզում էի և կատաղություն տեսնել բազմության շարքերի մեջ: Եվ քիչ անց տեսա, թե ինչպես կատաղությունից իր բռունցքն էր սեղմում հայ մարդը: Մտադիր էի դեռ շարունակել, երբ բազմության միջից բարձրացան աղաղակներ՝ «Պատրա սո ենք, առաջնորդե՛ք, տարե՛ք, կեցցե՛ կոխվը...»:

Այսպես բազմահազար ամբոխի խանդավառ աղաղակների մեջ խեղդվեցին իմ վերջին խոսքերը. «Թո՛ղ հետևի ինձ, ով դեռ չի մեռել բարոյապես»:

Քիչ անց հազարը անցնող կամավորների մի գորամասով ես շարժվում էի դեպի Ղարաքիլիսա տանող ճանապարհով: Մյուս օրը մեզ օգնության պիտի հասնեին նոր ուժեր և տեղի պիտի ունենար այն, ինչ որ կատարվեց Ղարաքիլիսայի և ձորերի մեջ, այսինքն՝ այն, ինչ որ շարժեց անգամ թշնամու հիացումն ու զարմանքը: Այդ փառահեղ ճակատամարտը ինձ մի անգամ ևս համոզեց, թե ամենատկար հոգիների մեջ իսկ կան թաքուն ուժեր, որ պետք է գիտենանք արթնացնել և գործի դնել:

pl. այնպիսի 5 1915-ին Թո խոսք
Աներևույթ դատավորը

Մյունիքը չափվում էր թուրք, թաթար և կարմիր հորդանների հետ: Կտրված էինք աշխարհից, պաշարված: Ռազմամթերք չկար, պակասում էր հացը:

Այդ գերազանցորեն ծանր օրերից մեկն էր: Շրջագայում էի ճակատից ճակատ, դիրքից դիրք գորամասերս հոգեպես գոտեպնդելու համար:

Արևիքի հարավարևմտյան ռազմաճակատներից մեկում, Ալանգյազի բարձունքների վրա, մոտեցավ ինձ հարյուրապետներիցս մեկը.

– Պարո՛ն սպարապետ, անկարելին կարելի դարձնելով՝ մենք դիմադրեցինք մինչև օրս, չե՞ք կարծում, թե այլևս անկարելի է դիմադրել:

Չուզեցի իսկույններթ պատասխանել նահանջի մասին մտածող վաշտապետիս, որը կարծես դադարել էր գիտակցել, թե տեղի տալ այդ կետի վրա կնշանակեր թույլ տալ թշնամուն Արևիքի հայության գերեզմանի վրայով միանալ թաթար Ադրբեջանին:

Հրամայեցի կանչել բոլոր ղեկավարներին: Եկան: Շատերն առանց արտահայտվելու մատնում էին իրենց անհանգստությունը մեր հետագա հաջող դիմադրության կարելիության մասին: Նախ հոգեպես են պարտվում և՛ ղեկավար տարրերը: Եվ թշնամու հաջողությունը սկսվում է հենց այն վայրկյանից, երբ իր դեմ կռվող բանակի հրամանատարության մեջ սկսվում է տկարանալ հաղթելու հավատը: Զորքը նման դեպքերում բնագդաբար զգում է, թե ինքն այլևս բարոյապես անտեր է, անզուխ:

Հոգուս աչքերով տեսնում էի պարտությունը՝ կախված մեր գլխին: Մենք պարտված էինք արդեն. մնում էր, որ թշնամին արիություն ունենար հազար քայլ առաջանալու, որպեսզի մենք լքեինք մեր դիրքերը:

Երբեմնակի լսվում էր գնդակների չար երգը և խոռվում գիշերվա լռությունը:

Նահանջելու տրամադիր վաշտապետս սպասում էր պատասխանի: Ես խորհրդածում էի: Հերիք չէ ասել՝ հրամայում եմ կռվել, մեռնել: Նման վայրկյաններում անգոր են հրամանն ու սպառնալիքը: Փորձով գիտեի այդ և շարունակում

էի դեռ մտմտալ: Խոհերս սկսել էին բյուրեղանալ, արդեն գիտեի ասելիքս և անելիքս, բայց և այնպէս շարունակում էի լուռ մնալ, երբ կորովաթափ վաշտապետս խզեց լռությունը.

– Ի՞նչ եք մտածում, պարո՛ն սպարապետ:

– Այն, հերո՛ս վաշտապետս, որ դու, ինչպէս տեսնում եմ և մի քանի ուրիշներ մոռացել եք հայոց պատմությունը, որը մեր կռիվներով չի սկսվել և մեզնով չի վերջանալու: Այս լեռների վրա կռիվներ են տեղի ունեցել մեզնից առաջ, տեղի պիտի ունենան և մեզնից հետո: Ասացե՛ք, ի՞նչ անուն կտայիք Դավիթ Բեգին, եթե մարդկային այս կամ այն տկարությունից մղված՝ նա Սյունյաց աշխարհը հանձնած լիներ թուրք ու թաթար հորդաներին: Մեզնից առաջ այս լեռների վրա կովոդ հայը խորապէս գիտակցել է, թե Սյունիքը հանձնել թշնամուն՝ կնշանակի հայ երկրի բանալիները և հայ ժողովրդի բախտն ընդմիշտ հանձնել իր իսլամ հարևաններին: Նույն փրկարար գիտակցությամբ այս բարձունքների վրա պետք է կռվի, մեռնի ու հաղթի և՛ վաղվա հայությունը:

Ի՞նչ, միայն ձե՛զ է պակասում այդ գիտակցությունը: Մոռացել եք, թե ժողովուրդը հրամայել է մեզ «հաղթել կամ մեռնել»:

– Ո՛չ,– եղավ վաշտապետներիս պատասխանը:

– Ես բնավ չեմ մտածում նահանջի մասին, որովհետև սովորություն ունեմ նման օրհասական վայրկյաններում դիմելու իմ խղճին՝ հարցնելու իմ ներքին դատավորին. «Ինչպե՞ս են վարվել նման և ավելի ծանր վիճակում Վարդաններն ու Դավիթ Բեգերը:

– Մեռնել, բայց հաղթել:

– Ինչպե՞ս կուզեի, որ վարվեին նման դեպքերում այն բոլոր ղեկավարները, որոնց ապագայում պիտի վիճակվի վարել մեր ժողովուրդի ինքնապաշտպանության սրբազան գործը:

– Մեռնել, բայց չզիջել հայոց լեռնաշխարհը»:

– Իմ ներքին դատավորի թելադրությամբ միշտ էլ այսպես եմ պատասխանել, այսպես եմ պատասխանում ինձ և այժմ...

– Ես,– արդարանալ փորձեց վաշտապետս,– ես ուզեցի ասել, թե այլևս ռազմամթերք չունենք:

– Բայց ո՞վ ասաց, թե առատ ռազմամթերքով են հաղթում: Շատ անգամ հաղթում է այն կողմը, որը շատ քիչ է կրակում: Վախկոտն է հաճախակի կրակում, մատնելով իր անարիությունը: Հրացանից, գնդացիից, թնդանոթից չէ, որ սարսափում է թշնամին, այլ քար լուրջունից: Չկա ավելի ահաբեկիչ բան՝ քան լուռ առաջխաղացումը մասնավորապես գիշեր ժամանակ, երբ քարը, թուփը՝ այն ամենը, որ կարող է զբաղեցնել մարդուս աչքն ու երևակայությունը, դառնում է գրոհող հակառակորդ: Լուռ առաջացող տասնյակը մի ամբողջ գունդ է, վաշտը՝ մի ամբողջ բանակ պաշտպանվողի համար: Գիշեր ժամանակ հարձակվողի զինակիցներն են՝ խավարը, լուրջությունը, ժայռերը: Իսկ երբ նախահարձակվողը մենք ենք՝ այդ լեռների տերը, մեզ հետ են նաև այն բոլորի վրեժխնդիր սովերները, որոնք մեզնից առաջ հեզնել են մահը և ընկել այդ սրբազան բարձունքների վրա: Իսկ երբ մենք ենք նախահարձակվողը՝ մեզ հետ է նաև մեր լեռների հզոր ոգին: Ուրեմն, ռազմամթերքի կարիքը չզգալու համար մնանք հավատարիմ մեր օրհնված ռազմավարության տարերային ձևերին: Գիշերամարտը թող լինի մեր բաժինը: Ուրեմն հարձակվե՛նք, ինչպես հարձակվում է մահը՝ լուռ և անակնկալ:

– Հարձակվե՛նք,– միաբերան կրկնեցին վաշտապետներս և հուսադրված՝ վերադարձան դեպի իրենց վաշտերը, դեպի կրակի գիծը:

Լուսաբացին Ալանգյազի բարձունքներում թշնամին ծեծված ու գերված էր գրեթե առանց ռազմամթերքի: Իմ զինվորը

այդ օրը օրհնում էր ճակատագիրը, որ չէր հապաղել թշնամու ձեռքով մեզ առատ ռազմամթերք հասցնելու:

Այդ կովում Սյունեցին մի անգամ ևս զգաց, թե ցեղի ոգու ձեռքով ղեկավարվող ժողովուրդը կարիք չունի երկար սրի:

Ռազմավարական հայացքներ

Սկսվեց կռիվը՝ այլևս կովադաշտը դառնում է փորձադաշտ, ուր պատերազմող կողմերը հաստատում կամ ժխտում են գոյություն ունեցող զինվորական տեսությունների ճշտությունը:

Ազատ ստեղծագործություն է ռազմավարությունը՝ ոչ միայն հաշվի, այլև ներշնչումի ու արիության գործ:

Ինչ եմ ուզում: Ինչպե՞ս կարող եմ կատարել ուզածս: Հակառակորդս պիտի աշխատի խանգարել ինձ. Ինչպե՞ս կարող եմ ի դերն հանել ինձ խանգարելու նրա փորձերը և պարտադրել կամքս:

Երբ որ արի ենք, անձևվեր ու վճռական մեր տրամադրության տակ հաղթելու համար ավելի միջոցներ կան, քան պետք են:

Եղի՛ր միշտ էլ ավելի անձևվեր, վճռական և արի, քան թշնամին՝ ահա՛ էականը:

«Ճանաչի՛ր մի հատիկ ռազմավարություն՝ Հաննիբալյանը, որ ասել է՝ մի հատիկ շարժում միշտ հառաջ, քանզի նահանջի մասին մտածող գորամասին պարտությունն ու ամոթանքը հետևում են ճիշտ այնպես, ինչպես անիվը՝ եզան»:

Եվ ո՛չ մի քայլ հետ, քանզի զինվորդ նահանջի գաղափարը միշտ էլ կցորդում է իր գորամասի թուլության և պարտության գաղափարին: Չկա ավելի զզվելի արարած, քան մար-

տիկը, որի հայացքը հետ է, որ բռնած է նահանջի ճամփան: Ուր չկա նահանջ՝ պարտություն չկա:

Հաղթում է այն կողմը, որը վստահ է ոչ թե իր սպառազեն բռունցքի, այլ իր ներազեն ոգու գերազանցությանը: Երկաթե գենքերի դեմ հեշտ է վահան գտնել, բայց ոչ նաև ոգու գենքերի դեմ, որ քոնը պիտի լինի, հա՛յ գորական:

Գիտցի՛ր և հետևյալը՝ անպարտելի է մնում միայն այն դրոշակը, որը պարզվում է ցեղի անունով և ցեղի համար:

IV

ՑԵՂԱՅԻՆ ԻՆՔՆԱՃԱՆԱԶՈՂՈՒԹՅՈՒՆ

Մականախաղեր: Շավասպ Արծրունին էրկու անգամ իլեց գնդակը Շապուհի ձեռքից: Գոռոզ, բայց թուլամորթ Սասանյանը, հայ իշխանի այդ հանդուգն հաջողակությունից առնված, ասաց՝ «Ճանաչի՛ր քեզ», «Այո՛, ճանաչում եմ ինձ, - ասաց Շավասպը, ես էլ թագավորագն եմ»: Հայոց պատմություն

Միբի՛ր պատմությունը

Քեզ չպիտի հորդորեմ մոտենալ պատմությանը որպես ուսումնասեր: Մոտեցի՛ր նրան որպես դեկավար, որին զբաղեցնողը ամենից առաջ և ամենից շատ մարդն է՝ իբրև զինվոր, քաղաքացի, պետական գործիչ, և զանգվածը, որպես գորք, ամբոխ, հասարակություն, որոնց ճանաչելու համար պետք է ուսումնասիրել նրանց գաղափարները, կիրքերը և գործերը:

Պետական գործիչի համար բացարձակ անհրաժեշտություն է պատմության ուսումնասիրությունը, որովհետև պատմությունը այլ բան չէ, եթե ոչ գործնական հոգեբանու-

թյուն: Նա է փաստեր և ապացույցներ մատակարարում քեզ հետաքրքրող գիտություններին՝ ռազմագիտություն, հոգեբանություն և այլն:

Նա է լուսաբանում անցքերը, մերկացնում կեղծիքը, ասում ճշմարտությունը՝ կայացնելով իր դատավճիռը անհատների և ազգերի մասին:

Գիտեմ, քո միտքն ամենից առաջ կանգ պիտի առնի մեծանուն ռազմավարների վրա: Դու պիտի լսես Մեծ Մակեդոնացուն, որը ողբում էր, թե այլևս նվաճելու համար երկիր չի մնացել: Կլսես Կեսարին ու կսքանչանաս նրանով, բայց և այնպես պիտի դժվարանաս դատապարտել նրանց, որոնք ազատասիրությունից մղված դաշնահար արին կամքի ու կորովի այդ եզակի տիտանին:

Քեզ պիտի խոսի Հաննիբալը՝ Հռոմի փառքի ու մեծության անհաշտ թշնամին, որը հաճախ հաղթական եղավ, բայց ոչ և երջանիկ:

Իր խոսքը կասի քեզ նաև հայ Տիգրան Աշխարհակալը, որը ըստ օտար պատմիչների, ընդունում էր, թե երկրագունդն ստեղծված է միայն իրեն համար:

Քեզ կերևա վերջին մեծ ռազմավարը՝ Նապոլեոնը, որն ունեցավ և Մուրբ Հեղինեն:

Ահա՛ փոքրիկ, բայց մեծ ու խստամբեր⁴ Սպարտան, որը մի օր հարկադրեց իր երաժշտին փետել տավիղի նոր լարերը, որոնք կարող էին բարձրի անբարոյացման ծառայել:

⁴ խստակյաց

Տես և Հին Եգիպտոսը, ուր ծուլությունը համարվում էր պետական հանցագործություն, և ծույլերը որպես անօգուտ արարածներ, դատապարտվում էին մահվան:

Ահա՛ ավարառու մեծահարուստ Ասորեստանը, արևապաշտ Իրանը, գեղամոլ Հելլադան, Հռոմը, որ մեռան պերճանքի ու շքեղության մեջ:

Տաճկաստանը, որը պարբերաբար կսեղմվի, կծվատվի, մինչև որ մի օր կործանվի դարերի ամոթն ու զգվանքը շարժող իր ոճիրների ծանրության տակ:

Ահա՛ քո հայրենիքը...

Ազգային պատմություն

Քիչ չեն այն գրքերը, որոնք գրված են դարերի համար, բայց չկա մի այլ գիրք, որն այնքան անհրաժեշտ և օգտակար լիներ քեզ համար, որքան ցեղիդ պատմությունը:

Ցեղիդ կյանքի հայելին է դա: Մոտեցիր իրեն, և դա ցույց պիտի տա քեզ դարերի այն վիթխարի գոյամարտը, որ մղել է հայությունը իր պետության սահմաններից դուրս և ներս: Պիտի ասի քեզ, թե իր ո՛ր առաքինությունների շնորհիվ նա հաճախ հաղթական է հանդիսացել, և որ բացասական հատկություններն են ճակատագրական դեր խաղացել իր հավաքական նավաբեկությունների մեջ:

Ցեղիդ պատմությունը կվկայի, թե ինչ աստիճան հայությունը ազդվել է իր հարևաններից և ունեցել քաղաքակրթական ազդեցություն նրանց վրա: Մեղմ ասած՝ նա կպատմի քեզ մեր անցյալ կյանքի բոլոր ելևէջները, մեր հաղթական խոյանքները ու տխուր անկումները, մատնանշելով և դրանց պատճառները:

Ցեղիդ պատմությունը սակայն, անցյալի ցամաք նկարագրությունը չէ միայն: Այլ նաև անցյալի խոսքը՝ ուղղված ներկային ու ապագային. մեռելների ձայնը, որ կխրատի ողջերին, կպատմի քեզ, թե ինչու և ինչպես հայությունը կորցրեց իր անկախությունը. թե ինչն էր հեշտացնում օտար տիրապետությունները Հայաստանում:

Մոտեցի՛ր մեր պատմությանը: Դա ունի էջեր, որոնց ծանոթ օտարականն իսկ չի կարող հարգանքով չլցվել մեր ցեղի նկատմամբ: Անմա՛հ էջեր, որոնց հերոսական վեհության մեջ հոգեպես աճում է ընթերցողը:

Հավաքի՛ր, իմաստուն հրամանատար, այն ամենը, ինչ որ գեղեցիկ է, վսեմ, հերոսական մեր պատմության էջերում և լիաբուռն ցրիր բանակիդ հոգու և գիտակցության մեջ: Միայն այսպիսով կդաստիարակես մարտիկներ՝ միշտ պատրաստ իրենց մեծագործություններով ավելի ևս գեղեցկացնելու մեր ցեղի պատմությունը:

Սիրով և երկյուղած մոտեցիր ազգային պատմությանը, և մի՛ մոռացիր, որ ցեղի հոգին ճանաչելու համար բավական չէ միայն ուսումնասիրել նրա պատմությունը, պետք է և վերապրել այն:

Վերապրի՛ր, պատմության միջոցով վերապրի՛ր ցեղիդ կյանքը:

Մեր պատմության տխուր կողմը

«Մենք հենց սկզբից տեսնում ենք տեղական իշխանների այն նախանձը, որ ամբողջ հայոց պատմության ընթացքում գլխավոր պատճառն է դառնում այդ պետության կործանման, այդ ազգի թշվառության»:

Օտար պատմագրի այս վկայությունը անվերապահորեն հաստատում է և մեր պատմությունը: Նախա՛նձը, որ բազմիցս մեր անկախության գարշապարից է զարկել, քանիցս հայ ժողովուրդի տունն ու պետությունն է քանդել:

Շա՛տ են տխուր անփառունակ և ամոթալի մեր պատմության այն էջերը, ուր խոսվում է նախանձի դևով բռնված հայ թագակրի, մելիքի և սրանց գործերի մասին:

Քրքրեցե՛ք մեր պատմությունը և պիտի տեսնեք, թե Արևելքի և ոչ մի բռնակալ այնքան չարիք չի պատճառել հայ ժողովուրդի դեմ, որքան իր մելիքի, իր իշխանի, իր թագավորի նախանձը:

Խոսեցրե՛ք մեր պատմությունը, և պիտի համոզվեք, թե թշնամին Հայաստան է ներխուժել հաճախ այն ժամանակ, երբ իր նախանձոտ գլխավորների շնորհիվ մեր ժողովուրդը ներքուստ պառակտված է եղել:

Այո՛, ոչ մի արտաքին թշնամի այնքան անգթորեն չի հարվածել մեր ժողովուրդին, ինչպես իր որոշ գործիչները:

Մատնություն, դավաճանություն, եղբայրասպանություն, — ահա՛ սև գործերը նախանձի, որի երեսից այնքան արյուն ու արցունք է տեսել հայ երկիրը:

«Ոսկրի որդ»՝ այսպես է խոսում Աստվածաշունչը նախանձի մասին: Միշտ էլ թուլության ծնունդ՝ նախանձը չի կարողանում տանել ուրիշների բարիքը, հաջողությունը, փառքը և զինվում է նրանց դեմ:

Երբ կա ղեկավարների նախանձը՝ այլևս ավելորդ են դառնում ժողովրդի բարձր առաքինությունները, նրա որդիների արիությունը, անձնվիրությունը, հայրենապաշտությունը:

Երբ մի ժողովրդի պետերը ղեկավարվում են նախանձի չար ոգով՝ այլևս կարիք չկա, որ այդ ժողովրդի հայրենիքը ներխուժող թշնամին ունենա թվական, հոգեբանական և այլ գերազանցությունները: Այն, ինչ որ չպիտի կարողանային կատարել թշնամու բանակները, կատարում է ինքնապաշտպանվող երկրի ղեկավարների չար նախանձը:

Հայ զենքի փառքն ու ողբերգությունը

Բարոյապետ սնանկ է անհատը, երբ նրան պակասում է ազգային հպարտության զգացումը՝ ծնունդ ազգային ինքնաճանաչության, որն իր սնունդն առնում է մեր պաշտամունքից դեպի այն ամենը, ինչ որ գեղեցիկ է, վսեմ և հերոսական հայրենի պատմության մեջ:

Առանց այդ բարձր առաքինության բարոյապետ պակասավոր է անհատը՝ որպես մարդ և որպես անդամ որոշ հավաքականության:

Իր սրբազան պահն ունի իր ամեն մի օրը, երբ մտովին անհուն կարոտով սկսում եմ իմ պրպտումները հայոց պատմության էջերի մեջ: Քաղցրությամբ ոգեկոչում եմ նրանց, որոնք հոգեկան գեղեցկության, անդիմագրավելի արիության ու մեծագույն վեհության համբուրելի հետքեր են թողել հայոց աշխարհում:

Ոգեխառնվում եմ հայ զինվորին ու զորավարին, վերապրում նրանց գոռ հաղթանակները և կարոտով բաժանվում նրանցից իրենց ազնվացուցիչ ընկերությունը վերստին վայելելու ցանկությամբ:

Այսպես եմ սնուցում ազգային հպարտության իմ զգացումը: Չտկարանալու համար՝ կատարում եմ իմ ամենօրյա խորհրդավոր զորահավաքը մեր պատմությունը զարդարող

հոգիների, ապա խոսեցնում ու լսում եմ նրանց: Եվ ասում են նրանք. «Գրեթե չմնաց ցեղ, ազգ աշխարհում, որ մեր բազկի ուժը չզգար՝ պոռոտ բաբելացին, հռոմեացիները կաշառող, աղվեսաբարո սասանյանները, բյուզանդացին նենգ, արաբն ու սկյութացին ընչաքաղց, ալանները, քուշանները, կովկասյան լեռնականները ավարառու»: Այդ բոլորի և շատ ուրիշների հետ անհամար անգամ հարվածներ ու վերքեր փոխանակեցինք: Եվ հաճախ մեր բազուկը հաղթեց: Մակայն, քիչ անգամ մեր արիությունից լիուլի օգտվել կարողացավ մեր ցեղը, քանզի կար ընտանի թշնամին, ներքին թշնամին, որի վատություններին է պարտում հայոց աշխարհն իր դարերի քաղաքական խեղճությունը:

Մեր բազուկից՝ զինվորի և ռազմավարի, ավելի օտարն օգտվեց, քան հարազատ երկիրը: Եվ դրա համար էլ մեր քաջության հոչակը տարածվեց շատ հեռուները՝ մինչև Ասորեստան, Հռոմ, Հրեաստան և լեռները Կովկասի:

Տե՛ս, որքա՛ն շատ են մեր վերքերը՝ ստացված օտար հայրենիքների համար: Անպարտելի էր օտար բանակը, երբ նրա զենքի հաջողության համար, նրա կողքին կովում էր և հայը, կամ երբ դա առաջնորդվում էր հայ զորավարի կողմից:

Մասնավորապես պարսիկն ու հույնը չարաչար շահագործեցին հայ արիությունը – ազգեր, որոնց անկայուն զահերի համար հայ արիությունը հանդիսացավ որպես ուժեղ պոռն: Մեզ զբաղեցնելով իրենց արտաքին թշնամիների դեմ՝ այդ ազգերը մեր արիությունը ծառայեցրին որպես անխորտակելի պատվար իրար դեմ, մինչև որ մի օր էլ բաժանեցին մեր աշխարհը: Պարսիկն իր փառքի կեսից ավելին մեզ է պարտական: Խոշոր բաժին ունենք և հունական փառքի մեջ...

«Միշտ էլ ուժեղին պիտի պատկանի երկիրը»: Հովբի այդ խոսքերով է ազգերին խրատում պատմությունը:

Ուժեղը ճշմարտորեն արժանավորն է, արին: Ոգու ուժն է ճշմարիտ ուժը: Ոգու ուժն էր, որ քանակորեն տկար Հելլադայի առջև ծունկի բերեց անձայրածիր Պարսկաստանը: Ոգու ուժն էր, որ Հռոմ քաղաքի ձեռքին դրեց աշխարհի ճակատագիրը: Այդ ուժն էր, որ Տիգրան Մեծի օրով Հայաստանը վերածեց մեծ թագավորության:

Ընկավ Հայաստանը, քանզի անմիաբանության չար ոգին մեր ժողովրդից խլել էր անօրինակ քաջությունից ազատորեն ու լիուլի օգտվելու կարելիությունը:

* * *

Արիությունը միակ ճշմարիտ կրոնն է՝ առանց որի ոչինչ արժեն կրոնները: Կեղծ է ամեն մի գրականություն, բարոյական, քաղաքական վարդապետություն, եթե ուժ և արիություն չի ներշնչում իրեն դավանողին: Դատապարտելի է ամեն մի դպրոց, եկեղեցի, կուսակցություն, որն արի և արիադավան չի դարձնում մարդը, որպես անհատ և հավաքականություն:

Կորցնելով իրենց արիությունը, այսինքն՝ իրենց առաքիլությունները, ժողովուրդները կորցնում են նաև իրենց գոյության բարոյական իրավունքը:

Արիությունն է կյանքի ու պատմության անիվը շարժողը: Մեծ նկարագրեր, սրտեր, մտածումներ՝ արիության հարագատներն են, նրա արևի ճառագայթներն են:

Արիությունը կորցնելով՝ ժողովուրդները կորցնում են իրենց մարդկային կարողությունները և առաքիլությունները անկաշկանդ կերպով զարգացնելու և կատարելագործելու կարելիությունը:

Անարի ժողովուրդները ընկնում են օտար լծի տակ, կորցնում իրենց անկախությունը, այսինքն՝ միակ հոգևոր

մթնոլորտը, որի մեջ միայն հնարավոր է ցեղերի առանձնահատուկ հանճարի փթթումը:

* * *

Քաջությունը երբեք չտկարացավ մեր ժողովրդի հոգու մեջ, մինչև մեր անկախության վախճանը, որից հետո հայ ձեռքը պիտի գրկվեր դարերով զենք կրելու կարելիությունից:

Հայությունը չգիտի իր պատմությունը, ինչպես և չգիտի օգտվել իր պատմությունից, ահա՛ իր դժբախտությունը:

Նա ծանոթ չէ իր հերոսական անցյալին, իր հիասքանչ դյուցազնականին, և դրա համար էլ նա հավատում է ամեն ինչի, միայն ոչ իր սեփական բազկի ուժին. դրա համար էլ իր ամբողջության մեջ նա անմարտունակ է և պարտվողական:

Նրա համար Ավարայրի Մամիկոնյանը ավելի սուրբ է, նահատակ, քան հերոս, ռազմիկ:

«Մեզ պես անոգամասեր ու երկչոտ է եղել և հին հայր, այլապես ինչո՞ւ պիտի կործանվեր մեր թագավորությունը», այսպես է տրամաբանում Օրվա հայությունը՝ մասնավորապես նրա առևտրապաշտ մասը:

Նա չգիտի, որ հայկական հարստությունները կործանվել են ոչ թե արիության պակասի շնորհիվ, այլ մեր ցեղի ղեկավար տարրերի տարապայման երկպառակությունների և խռովությունների երեսից: Ինքնակործան են եղել գրեթե մեր բոլոր թագավորությունները:

Նա ոչինչ գիտի իր ցեղի հնավանդ ռազմունակության և ռազմական մեծագործությունների մասին, և դրա համար էլ նա անհավատ է դեպի իր բազուկը, անհույս՝ դեպ իր ապագան: Դարերով հոգևոր շանթարգելի դեր է կատարել հայ քաջությունը հայոց աշխարհի համար, զինաթափելով ու չեզոքացնելով բոլոր տեսակի մահաբեր հարվածները: Եթե Հա-

յաստան արշավող թշնամի հորդաները եղել են ծովի այլքները, ապա ինքնապաշտպանվող հայ արիությունը հաճախ հանդիսացել է որպես ծովափյա ժայռ, որին զարնվել և ցնդել են արտաքին թշնամության հորձանքները:

Այո՛, Օրվա հայությունը չի ճանաչում իր դասական արիների համաստեղությունը: Իր անմեռ քաջերի պաշտամունքը նա չունի: Նա չի դաստիարակվում նրանց մեծագործություններով: Ահա՛ մեր դժբախտությունը: Եվ մեղավորը ժողովուրդը չէ, այլ այն տարրը, որի ջանքերով ինքնաճանաչության է բերվում ժողովուրդը: Մտավորականությո՛ւնն է մեղավոր:

* * *

Մեկից ավելի անգամ դժբախտություն եմ ունեցել լսելու հայրենի պատմություն դասավանդող հայ ուսուցչին և խորապես ցավել եմ մեր աշակերտող սերունդի համար: Մեռելների մասին է խոսում մի կենդանի մեռյալ: Պատմությունը նրա համար անհոգի կմախք է և ոչ թե բաբախուն սիրտ: Նա գիտի ցամաք անցքեր, թվեր, անուններ... այսքանը միայն: Նա միևնույն տրամադրությամբ է խոսում և՛ Տիգրան Մեծի, և՛ վեստ Սարգիսի մասին: Հպարտությունից չեն դողում, չեն լայնանում նրա ռունգերը, երբ պատմում է, թե ինչպես պարսից արքան, հայ սպարապետի (Մուշեղ Մամիկոնյանի) անօրինակ քաջագործություններից հիացած, ամեն անգամ, երբ գինու բաժակը շրթունքներին էր մոտեցնում, դժվարանում էր չբացականչել՝ «Ճերմակաձի՛ն գինի խմե՛»:

Ամոթի զգացումը չի այրում նրան, երբ իր խոսքը խռովասեր հայ նախարարների մասին է:

Մեղմ ասած՝ ստեղծագործ վերապրում չէ հայ ուսուցչին ավանդած պատմությունը, որովհետև իրեն պակասում է ազգային հպարտության նվիրական զգացումը:

Գերազանցորեն հայրենասեր – ահա՛ թե որպիսի մեկը պետք է լինի պատմության դասատուն: Եթե այդպես չէ, ասել է՝ նրա տեղը դպրոցը չէ. ասել է՝ նա բարոյապես ազատ չէ ձեռքն առնելու մեր ցեղի կյանքի սրբազան գիրքը:

Նահապետ, թագավոր, սպարապետ

Հա՛յկը, անմեռ փառքը իր ցեղի, այսպես էր խոսում իր մարտիկներին.

«Յարմար վայրկյանին կը լարի փորձ որսորդն իր աղեղը և միշտ անվրեպ ու մահառիթ է իր հարվածը»:

Մի սեղմ խոսք, որի մեջ խտացված է ռազմարվեստի ողջ գաղտնիքը: Հարմար վայրկյանին մահառիթ հարված – ահա՛ թե ինչ է պահանջում իմաստուն ռազմագիտությունը:

Այսպես, բնագդակյան ռազմագետ ու մարտավար է հայ նահապետը, որի աննվաճ արիասրտությունը այսպես էր պատասխանում Նեբրովթի բանբերներին. «Որսորդի հեռաձիգ նետը պետք ունի ազատ և ընդարձակ տեղերի»: Ասել է՝ գիտի հայ ահավոր աղեղնավորը, թե ժողովուրդներն անկաշկանդ կերպով զարգանալու համար հարկավոր է երկու բան՝ հարաբերորեն ընդարձակ երկրամաս և քաղաքական անկախություն:

Ահա՛ և Արամը, որն իր ուխտն ունի. «Մեռնել, բայց չտեսնել օտարի պղծիչ զարշապարը հայ երկրի վրա»:

Նինոսը, դեռ անձանոթ հայ բազկի ուժին և նետի անվրեպությանը, հեղեղի պես շարժվում է դեպի Հայաստանի սահմանները՝ իր աշխարհակալական ազահությունը հագեցնելու հանդուգն ցանկությամբ:

Արթուն է, սակայն, հայ նահապետի աչքը, և ահա՛ սակավագոր, բայց արիաշունչ մի զորաբաժինով նա դիմավորում է

թշնամուն իր երկրի սահմանների վրա, արհամարհում է նրա բազմավորությունը, նետվում նրա վրա, խորտակում նրա ուժերը, և գերելով գոռոզ Մադեսին՝ բերում է Արմավիր, ուր նրա գանգը երկաթե ցիցերով մխում է աշտարակի բարձր գագաթի վրա՝ առ ի խրատ Հայաստանի արտաքին թշնամիների...

Հավասար չափով հայրենապաշտ և ռազմիկ է հայ նահապետը: Ուխտի ուժն է նրա ուժը՝ մեռնել, բայց տեղի չտալ:

Խորտակելով Նինոսի գերադաս ուժերը, նա ոչ միայն խստիվ պատժում է հայ երկրի թշնամիներին, այլև իմաստուն դաս է տալիս հայության գալոդ առաջնորդներին, թե ինչպես պետք է ապահովել Հայաստանի անմատչելիությունը արտաքին վտանգի դեպքում:

Հայ նահապետը պիտի ուզենար ասել.

«Մահն ու թշնամին միշտ էլ տեղի են տալիս մեռնելու մտքի հետ հաշտված ռազմիկի առջև: Ուխտեցե՛ք մեռնել, և ձեր ճակատից չպիտի ընկնի փառքի պսակը»:

* * *

Ահա՛ և հայ աշխարհակալը՝ Մե՛ծն Տիգրանը: Լսենք Պլուտարքոսին հայ մեծ ռազմիկի մասին, որ մինչև խոր ծերություն անձամբ էր ղեկավարում իր բանակները:

«Հռոմեական ամենատաղանդավոր զորավարներն անգամ, թեև անհաշտ թշնամիներ, ընդունում էին, որ աշխարհի ամենահզոր և մեծ թագավորները Միհրդատ Պոնտացին և Տիգրան Հայն է»:

«Լա, Տիգրան Մեծը, այնպիսի ջարդ տվեց պարթևներին, ասում է Պլուտարքոսը, և որ մինչև մեր օրերը ոչ ոք չի կարողացել գերազանցել հայերին»:

«Տիգրանի անձնավորությունը,– ասում է Դոլենսը,– կարող է մեզ ներկայանալ իբրև իր ազգի ամենաբնորոշ պատկերը: Նրա մեջ առավելությունները և պակասությունները արտահայտվում են մեծ ծայրայեղ չափերով: Որոշ դատավորների աչքում պակասությունները շատ դեպքերում գերակշռում են»:

Ո՛չ, ո՛չ, անարդար է օտարի այդ դատաստանը: Հայ աշխարհակալի թերությունները մեծության հատուկ թերություններն են: Որքան մեծ կարողություններ ու բոցավառություն ունի անհատը՝ այնքան ավելի գործունյա է նա, այնքան ավելի սխալներ է կատարում:

Ահա՛ և Արշակը, որը որպես նշանակ պոնտացիների դեմ տարած իր հաղթանակի Սև Ծովի եզերքում կանգնեցնել է տալիս մի քարե կոթող և ապա արձակելով նետը՝ խորապես թաղում է նրա մեջ: Եվ օտարը տարիներով պաշտում է հայ բազկի թափը խորհրդանշող բոլորատեգ նիզակը՝ համարելով դա գերմարդկային գործ:

Այս դյուցազնին պիտի հաջորդեր իր աշխարհակալ որդին՝ Արտաշես Ա, որի բանակների մասին ասում է պատմիչը. «*Երբ ամենքը նետ արձակեին՝ արեւը կը մթազնէր, եւ եթէ ամէն մէկը քար նետէր՝ բլուր կը ձեւանար*»:

Հպարտ էր, ռազմասեր և եռում էր աշխարհակալելու կրքով:

Ըստ Դիոտորոսի՝ մի մեծ երազ ուներ նա՝ նվաճել ողջ տիեզերքը: Ահա՛ այդ կամքի տիտանը, որ սիրում էր հաճախ մտմտալ և աշխարհի ունայնության մասին պիտի բացականչեր մի օր՝ «Ավա դ փառացս անցավորի»:

Հապա Տիգրան թագավորա՛ցն, Կյուրոսի աշխատակիցը, որը փրկեց Պարսկաստանը Մարաց Աժդահակի սարսափից:

Հապա Վահա՛գն, որդին Տիգրան Մեծի, հայ Հերակլեսը, որն իր անօրինակ քաջագործությունների համար պաշտօնում էր և վրաց ժողովրդի կողմից:

* * *

Մեծն Տրդատը, բարեկամն ու դաշնակիցն էր աշխարհակալ Հռոմի: Ըստ Կոստանդիանոսի՝ «Արևելքի ահեղանշան թագավորը»:

Նրան ճանաչում է հավիտենական քաղաքը, ուր նա դափնիով պսակված էր իր քաջագործությունների համար:

Դիոկղետիանոսի օրով նա մենամարտել էր Գոթաց հսկայի հետ, հաղթել նրան և փրկել Հռոմի անունը: Հայերի քաջության հոչակը այնքան էր տարածված Հռոմեացիների մեջ, որ Կոստանդիանոսը խնդրում էր հայ թագավորից Հռոմ ուղարկել երեք հարյուր «հասակով և արիությամբ հոյակապ» հայ զինվորներ, որոնց պիտի նշանակեր որպես գահապահ, թիկնապահ և որպես առաջապահներ պատերազմի ժամանակ:

Այս մեծ հայր պատմության մեջ, իր գործերի հետ, թողել է նաև մի իմաստալի դարձվածք. «Մարդկային դրության բարձունքներում արդար է այն, ինչ որ ուժեղ է»: Նա պիտի ուզեր ասել և հետևյալը. «Եղե՛ք քաջ, և աշխարհի ամենաուժեղն իսկ պիտի փնտրի ձեր զինակցությունը»:

* * *

Հայաստանի ամենանեղ օրերին էր, երբ բախտը հայ սուրը հանձնեց Մուշեղին, որ ինկելի Մամիկոնյան էր՝ անգուգական որպես մենամարտիկ, ռազմավար և ասպետ: Հայ բազկի ուժին ծանոթ թշնամին եկել, տիրել էր Միջագետքին և ավեր ու մահ էր սփռում մինչև Վասպուրական: Մուշեղին էր վիճակված չափվել նրա հետ:

Իբրև թռչուն ձիարշավ սլանում է թշնամին: Ահագին է նրա գեղարդը, բայց ոչինչ: Հայ բազուկը ճարտարությամբ հետ է մղում հակառակորդի առաջին հարվածը և ապա, անցնելով հարձակման, շանթահար գետին է փռում թշնամուն: Հաղթական է հայոց գորքը Մուշեղի գլխավորությամբ: Մուշեղի համբավը փառքի թևերով տարածվում է մինչև Ասորեստան, ուր օտար ժողովրդի հիացումը պողովատիկ⁵ գրչով գծագրում է Մուշեղի պատկեր՝ հայ սպարապետը երիվարի վրա և հոնը իր ոտքերի տակ: Այս հերոսին էր վիճակված Պապ թագավորի օրով Հայ Երկրի ամբողջությունը վերականգնելու ճիգեր կատարել: Այդ իսկ նպատակով նա վերակազմում է Հայաստանի զինվորական ուժը և վերապրեցնում հայ զենքի հմայքը: Նա է սանձահարում և հնազանդության բերում Հայաստանի ծայրագավառները: Ջորահանդես է, և ահա՛ թագավոր և կաթողիկոս օրհնում են Մուշեղի բանակը: Այլևս պարսիկների սարսափն է Մուշեղը:

Ահա՛ և Ձիրավը, ուր իրար են մաշում հայ և պարսիկ սրերը: Հայ սպարապետի քաջությունը այստեղ, այս անգամ էլ հոմանիշ է հաղթության: Մեծ է հայոց հաջողությունը, և երախտագետ ժողովուրդը Ձիրավի հաղթության ժամը կոչում է «ժամ Մուշեղայ» և այդ մեծ ժամը, որն ըստ մեր պատմիչների, իրավունք ուներ Արտաշեսի և Տիգրան Մեծի շարքը դնելու իրեն, բայց մնաց մի համեստ սպարապետ, որ մի օր պիտի զարնվեր հայ նախանձից:

Վարազդատ թագավորը, իր պալատական քսուններից թելադրված՝ ընթրիքի է հրավիրում մեծագործ Մամիկոնյանին և սպանել տալիս դավադրաբար:

⁵ պողպատե

«Ի վերայ բազում իմոց վաստակացն արյան և քրտան ա՛յս հատուցումն եղավ ինձ», – ասում է հոգով դառնացած սպարապետը, ապա ցավ է հայտնում, որ չի մեռնում ձիու վրա:

Այսպես, եղբայրասպան ձեռքից էր ընկնում նա, որն իր բոլորանվեր անձն էր դրել իր երկրի շենության ու ապահովության համար:

Ահա՛ Մանվել Մամիկոնյա՛նը:

Նա ունի գերագույն իշխանության նշաններ՝ սամույր, ոսկե և արծաթե զարգմանակ⁶ և մեծամեծ արծվանշան վրաններ ունենալու իրավունք: Մի մտասևեռում ունի այս մեծանուն հայ սպարապետը՝ վերականգնել Արշակունիների թագավորությունը: Ահա՛ թե ինչու նա պիտի քշեր պարսկական զորքերը Հայաստանի սահմաններից դուրս և վերացներ պարսկական մարզպանությունը: Պարսկաստանը, սակայն, չի ուզում հաշտվել ստեղծված դրության հետ և Հայաստան է մտցնում մեծամեծ բանակներ: Ահա՛ այդ կռիվներն էին, որ պիտի աճեցնեին Մանվելի փառքը:

Միայն երկու բյուրյակներով նա աննախընթաց հաջողությամբ ջարդում է թշնամու մեծամեծ բանակները: Նրա նվիրական սրի վրա երեք պարսիկ զորավարների արյան հետքերը կան:

Վերջին անգամ այդ ծեր առյուծը չափվում է հայ հայրենիքին այնքա՛ն չարիքներ հասցրած Մերուծանի հետ: Ճակատամարտի ժխորի մեջ սպարապետը փնտրում է հայ դավա-

⁶ Սաղավարտի գարդ, լանջագարդ, որ կրում էին թագավորները:

ճանին: Բայց իզուր. չկա, չի երևում ուրացողը. իր նշանները նա տվել է կրելու իր մի զինվորին և ինքը կոպում է որպես սոսկական զինվոր: Հայ սուրը դիակի է վերածում և՛ Մերուժանի շքանշանները կրողին: Դարձյալ իզուր. դավաճանը չէ սպանվածը: Վերջապես, մատնվում է հրեշը: Մանվելը ճանաչում է նրան ձի նստելու եղանակից և հարձակվում նրա վրա: Ուժեղ է բախումը, և ահա՛ երկու ախոյանները վայր են գլորվում ձիերից: Այդ վայրկյանին վրա է հասնում Բաբիկ Սյունին և կտրում ուրացողի գլուխը: Վերստին պարսից գորքերի բաժինն է խուճապը, կոտորածը, փախուստը...

Այդ փառահեղ օրից հայոց աշխարհի վրայով խաղաղ տարիներ են անցել, և ահա հայությունը՝ ծերացած: Դառնորեն լալիս է մեծ սպարապետը, որ մեռնում է կովից դուրս: Ա՛հ, նա, որ երագում էր արծվի իր աչքերը փակել մի գոռ ճակատամարտում, հայոց գորքերի հաղթական աղաղակների մեջ, այժմ հոգեվարում է անկողնում: Հայ հսկան՝ ապավենը հայոց աշխարհի, բիբլիական պարզությամբ մերկացնում է իր մարմինը իր մահիճը շրջապատողների առջև և ցույց տալիս պատվո իր վերքերը՝ ստացված հայ երկրի անկախության և փառքի համար:

Նա թողնում է իր անարձաթ կտակը. *«Անուն քաջության յերկրի թողուք և ամեննին մահվանէ մի երկնչիք»:*

Վարդան

Վայրկյաններ կան, աստվածային պահեր, երբ անհատն ավելին է, քան սոսկական մարդ, օրինակ՝ երբ նա համոզված է, որ իր առնելիք հերոսական խոյանքի ժամանակ շանթահար պիտի լինի, պիտի զարնվի մահից, բայց և այնպես առնում է իր վերջին թոխքը: Այո, այսպիսին այլևս ավելին է քան մարդ:

Այսպիսիներից էր Ավարայրի Վարդանը՝ խնկելի առարկան իր ժամանակի հայության հիացումի ու սիրո:

Արդար է, որ Վարդանի մասին մտքի գինովությամբ խոսի Ալիշանը: «...Եվ երբ մեծամեծ ոսկեփայլ գալարուն և անգալար պղինձներն լայնաբուրբ բերաններն յերկինք շտկած՝ իբրև յետ երկան հառաչանաց՝ հայկական պատերազմի եղանակը հնչեց, ո՛հ, բոլոր բանակն, գետին ու լերինք թնդալով դոփելով որոտացին. Փառք հայոց սուրբ սպարապետ Վարդան քաջ»:

Հայոց ընդամենը վեց բյուրյակ գորք դյուցազնի գլխավորությամբ ճակատ է հարդարել պարսից յոթնիցս առավելություն ուժերի դեմ: Այս անգամ հայ ռազմիկը հազած է և հավատքի գրահ: Այստեղ էլ թշնամու կողմն է թվական գերազանցությունը, բայց ոչ ի՛նչ: Ջինակցած են հայ խաչն ու նիզակը: Հայը մեռնել գիտի, և ահա՛ սկսվել է տերևաթափը պարսից սվինների անտառում: Բայց, անե՛ծք դավաճանին, պարսկասերների կուսակցության պետի ղեկավարության հանձնված չորրորդ հայ գունդը անսպասելիորեն անցնում է թշնամու կողմը՝ հաջողության նժարը թեքելով անարի թշնամու կողմը: Եվ հայ ժողովրդի հետ ողբում է նաև պարսից արքան՝ հիշելով հայ ռազմիկի անլուր քաջագործությունները «ի վերայ աշխարհին արյաց»:

* * *

Ավարայրից իսկ հետո հայությունը անխոս հայտարարում էր իր հարևաններին՝ «տակավին անխոնարհելի է իմ բարկության սուրը», քանզի հերոսական ամեն մի մահ աշխարհ է բերում նոր հերոսներ, քանզի Վարդանին հաջորդել էր իր եղբորորդին՝ Վահանը, որն իր ռազմավարական վար-

պետությունների համար հիացող ու պաշտող ժողովրդի կողմից Գայլ անունն է ստացել:

Վահան, Աշոտ Երկաթ, Բարգեն Սյունի, Գևորգ՝ Երկաթի զինակիցներից, Դավիթ Կուրապաղատ, Վասակ՝ Սմբատ Բ.-ի զորավարը – ահա՛ փառանգը հայ պարտիզան ռազմիկների, մեկը մյուսից կայծակնաշունչ, պատերազմափորձ և արի. բոլորն էլ ծանոթ սակավ ուժերով մեծաթիվ բանակների դեմ հաղթական կանգնելու աստվածային արվեստին. բոլորն էլ մահվան հետ կանխածանոթ և անմահացած՝ իրենց քաջագործություններով:

Պարսից սպառազեն բազմությունները հեզնող Վահան Մամիկոնյանը մի օր անսպասելիորեն պաշարվում է Դվինում: Չուզելով պատճառ դառնալ քաղաքի դժբախտությանը՝ հայ ասպետը դուրս է նետվում քաղաքից, ճեղքում պարսից զորաշղթան և անցնում Շտղագոմ գավառը: Թշնամին նրան պաշարում է և այստեղ, բայց իզուր: Անընկճելի և հնարագետ է հայ ռազմիկը: Բահ ու բրիչներ տալով գյուղացիների ձեռքը, նրանց բերում շարում է իր զորամասի գրաված դիրքերի վրա և ապա մի բուռ կտրիճ պարտիզանների հետ թևանցի դիմելով՝ շանթի պես ընկնում է պարսից զորքերի վրա, խուճապի, խռովության ու ջարդի մատնելով թշնամուն:

Մի ուրիշ անգամ այդ օրինակելի պարտիզանը Շապուհի զորքերը հանկարծակիի է բերում երեք տասնյակ ուխտակիցներով միայն՝ այնուհետև մնալով ահն ու սարսափը պարսից զորավարների, որոնք դողում են նրա անունից անգամ:

Ահա՛ և երկաթե ռազմիկը, Աշոտ Բ-ը, որ երկու հարյուրակ հրոսակներով իր խուլական⁷ թռիչքն է առնում Շամշուդե բերդի դեմ, որի պաշտպանությունը հանձնված էր հազար բերդապահներին: Կայծակի արագությամբ նա խորտակում է թշնամու ասպարափակ ճակատը և սեպածն թաղվում նրա ջուլիբների⁸ մեջ: Շատ քչերին է հաջողվում փրկել իրենց կաշին:

Մի ուրիշ անգամ երկու հարյուր ռազմիկներով նա դուրս է գալիս թշնամու ութ հազարի դեմ և «իբրև հողմ» փոթորկում, ցանուցրիվ տալիս թշնամու գորամասերը, դափնեպսակելով հայ պարտիզանի ճակատը: Երկաթն իր ուխտակիցներն ունի, որոնցից մեկը գործում է Գեղամա լճի ափերում: Գևորգն է դա, որին մի օր հանկարծակիի է բերում հազարացիների⁹ մի հազարյակ: Ոչինչ, կտրիճ հայը, թող որ միայն երկու տասնյակ առձեռն զինակիցներ ունի, չի տատանվում ձիարձակ նետվելու թշնամու վրա և փախուստի մատնելու նրան: Այստեղ էլ հայ արիությունը չի հարցնում թշնամու թվի մասին:

Կա և Թովմա Արծրունու կողմից փառաբանված Գուրգենը՝ որդին Վասպուրականի իշխանի, որը հազարի չհասնող իր գորագնդով ջարդում է Բուղայի մեկ ու կես բյուրյակ ուժերը:

Նույնը Մպեր գավառում չորս տասնյակ պարտիզաններով պարտության է մատնում հունական մի հազարյակ: Հույն զորավարը զարմացած մի բուռ հայ կտրիճների անօրինակ հերոսությունից՝ այդ մասին տեղեկագրում է Սյունաց Միքայել թա-

բնակչության 5 1915-ին 50 հայ

⁷ կատաղի
⁸ բազմություն, խումբ
⁹ Արաբների հնացած անվանումը:

գավորին: Գուրգենի ձեռքը դրված հայ սրի ուժը զգում են և տաճիկները: Հայ կտրիճից ծեծված ու փախուստի մատնված տաճիկ գորքը, օրեր անց կրկնում է իր հարձակումը հայերի դեմ, բայց վերստին ջարդն ու պարտությունն է լինում իր բաժինը:

Բուղան լսելով հայ արիության տարած այդ նոր հաղթությունների մասին՝ փոխում է իր քաղաքականությունը և սուսեր, գոտի և արաբական երիվար ուղարկում Գուրգենին, կարգում է նրան իշխան: Այսպես, հայ արիության գնով է ձեռք բերվում և Վասպուրականի ժամանակավոր խաղաղությունը:

Մեր դասական պարտիզանների փայլուն համաստեղությունից է և Բաբգեն Սյունին, որը Սյունիք ներխուժող արաբական չորս հազարից անց զորագունդը իսպառ ոչնչացնում է երկու հարյուրակ պարտիզաններով: Դավիթ Կուրապաղատը, որ տասնապատիկ նվազ ուժերով աննախընթաց հաղթություն է [տանում] Ապահունիքում բանակած արաբ հարյուր հազարից անցնող զորքերի դեմ:

Վասակը՝ Սմբատ Բ.-ի սպարապետը, լսելով սկյութացվոց ներխուժման մասին, որոնց ալիքը մոտենում էր Բջնի բերդին, սակավաթիվ զորքով դուրս է գալիս նրանց դեմ:

Տեսնելով սկյութացվոց անհաշիվ ու խառնախոյզ բազմությունը, հայերը վճռում են առաքինանալ կովում: Եվ գործի են անցնում «որպես գայլ ի մեջ այծյաց»: Թշնամու շարքերից դուրս է նետվում մի քաջ ախոյան, որին յուրայինները, «Յոթը գայլ» էին կոչում՝ իր ուժի և հանդգնության համար, և առաջ է խաղում որոտալով «որպես սև ամպ»: Բայց փառք հայ սպարապետին և իր պողովատ թորին. սկյութացի հսկան փոփում է գետին, իսկ զորքը սարսափով բռնված փախչում է Հայաստանից:

Ահա մեկը մեր քաջանուն Աշոտներից, որի արիական շարժումն է մասին չի կարելի խորհրդածել առանց հիացումի:

Աղոթքի ժամն է, և հայ ռազմիկը Աստծո հետ է խոսում: Աղոթողի դրության մեջ թշնամին պաշարում է հայ զորակա-
նին, բայց անկարող է լինում խանգարել նրա խոսքն ընդ
Աստված: Նա լուռ է, բայց դուք լսում եք նրա խոսքը՝ իմն է
հաղթությունը, քանզի «ես նոր իւղով օծուեցայ»:

Հավատքի գրահով զինված հայ մարդը անխռով վերջաց-
նում է իր աղոթքը և ոտքի է կանգնում՝ թշնամու հանդգնու-
թյունը պատժելու վճռականությամբ: Որպես փորձ[առու]
ռազմավար՝ նա իր հարվածներն նախ ուղղելով թշնամու
գլխավորների դեմ՝ գետին է գլորում նրանց, որից հետո ջար-
դի և փախուստի է մատնում նրա անտիրական զորախմբերը:

Ահա՛ մի ուրիշը մեր Աշոտներից՝ Վասպուրականի իշ-
խանը, որի զորամասի վրա Տարոնի դաշտում անսպասելիո-
րեն հարձակվում է արաբական հսկայաթիվ այրուձին:
Բարձրանում է հայ առյուծի մոնչյունը, և նրա զորքը որպես
պողպատե պատնեշ ցցվում է թշնամու հեծելագործի դեմ:
Կորցնելով իր աջը՝ հայ իշխանը գործել է սկսում ձախ ձեռ-
քով: Մերթընդմերթ լսվում է Աշոտի հուսատու կանչը և հայ
զինվորները, կատաղությամբ գինով, առաջանում են որպես
գնչավոր ու շարժուն պարիսպ: Ահավոր է, անհավասար
գիրկընդխառն կռիվը: Ահա՛ մեկ էլ վերջին անգամ բարձրա-
ցավ վիրավոր առյուծի մոնչյունը, մի վերջին ուժ հանդուգն
գրոհ ևս, այլևս մենակ են հայերը կովադաշտում, քանզի խե-
լակորույս փախչում է թշնամին՝ իր մեռելները կոխկոտելով:

Ահա՛ արի արանց մի այլ փաղանգ, որոնց քաջագործու-
թյուններից այնքա՛ն օգտվել են օտարները. Բաբիկը՝ Անդոկ
իշխանի որդին, Դրաստամատը, Աշոտ Արծրունին, Սմբատ
Բագրատունին, Զորավար Վասակը և այլն:

Հոները, որոնք իրենց ձեռքի թամբերի տակ եփում էին մի-
սը, նեղն էին դրած դուռն ու երկիրը: Այդ բարբարոսների

շարքերից առաջ էր նետվել Հոնանդուր անունով մեկը և ասպարեզ էր կարդում¹⁰ պարսից թագավորին: Անհնարին բարձր էր հասակը հսկայի: Իր ահեղատիպ տեսքով ու սպառազինությամբ նա զարհուրանք էր մտցրել պարսից ու մարաց զորքերի մեջ: Հայ նախարարների խորհրդով Շապուհը Հոն հսկայի դեմ է հանում Սյունյաց Բաբիկին, որը պարսից արքունիքում բազմիցս աչքի էր ընկել իր քաջագործություններով: Սկսվում է մենամարտը և հայ քաջազնի միասայրի սուսերը գետին է փռում «վիշապագոր» հյուսիսականին:

Ա՛խ, հա՛յն է, այստեղ էլ հա՛յն է, որ փրկում է կյանքը, երկիրը, փառքը օտար վեհապետի: Ի վարձ իր այդ ճակատագրական քաջագործության՝ Բաբիկը ստանում է իր հայրենական տերությունը՝ Սյունյաց Աշխարհը: Քաջ հորը պիտի հաջորդեր իր որդին՝ քաջաց նվիրակ Գրիգորը:

* * *

Գիտենք, որ հայ արիությունն էր, որ հանձին Տիգրան թագավորազնի՝ Աժդահակի բռնությունից փրկել էր Պարսկաստանը, իսկ տիրասեր Դրաստամատի միջոցով պարսկաքուշան¹¹ պատերազմում ազատել էր պարսից արքայի կաշին վերահաս վտանգից:

Ահա՛ օտարի փառքն աճեցնող մի այլ դյուցազուն՝ Աշոտ Արծրունին, որ զրկված իր հայրենի երկրից՝ պահվում էր Ամիրապետի արքունիքում: Տաճիկներն ապստամբել են արաբ

¹⁰ Մենամարտի էր կանչում:

¹¹ Պարսկաքուշանական պատերազմ՝ պատերազմ պարսիկների և քուշանների միջև: Քուշանները հայկական աղբյուրներում հիշատակվում են նաև որպես հեփթաղներ:

տիրապետության դեմ: Ամիրապետի որդի Մուսեն, իր հետ առած Աշոտին, շարժվում է ապստամբների դեմ: Նա խոստացել է հայ իշխանին վերադարձնել իր տերությունը, եթե հաջողությամբ պսակվի իր արշավանքը: Հիվանդություն ձևացնելով՝ հայ քաջը սկզբում չի մասնակցում ճակատամարտին, մինչև որ արաբների դրությունը դառնում է սպառնական, որից հետո աշտանակելով իր երիվարը, խրախույսի խոսքերով նա դառնում է հայ ռազմիկներին. «Հապա՛, հայոց քաջեր, այժմ թող ճանաչեն մեզ և մեր արիությունը»: Գործի է սկսում հայոց ազատագուհը ու ժամեր հետո բախտը իր վճիռն արձակում է ի նպաստ արաբների:

Ահա՛ և Սմբատ Բագրատունին, որ բախտորոշ ծառայություններ է կատարել պարսից արքունիքին: Մենամարտելով նա սպանել է հեփթաղների արքային՝ աճեցնելով պարսից փառքը: Թշնամիների չարախոսություններից տարված, պարսից հիմար թագակիրը մի օր երախտաշատ հայի վրա բաց է թողնում գազաններ: Հայ կտրիճը զարկում, սպանում է արջը, բռնելով եղջուրներից՝ սպանում է ցուլը: Բռնելով առյուծի ականջներից՝ հեծնում է նրան: Քաջության այդ հրաշախառն գործերը նա կատարում է մի օրվա մեջ և վերստին մեծարվում անհաստատ արքայից:

Հասակով բարձր, տեսությամբ գեղեցիկ և անասելիորեն քաջ է հայ զորականը: Անտառներից անցնելիս երկու ձեռքով նա բռնում է ծառի ճյուղերը և ոտքերով բարձրացնում ձին: Սմբատի քաջությունը անթառամ դափնիներ է խլել Վարդանակերտի ճակատամարտում, որն այնքան դրվատել են հայ պատմիչները: Այս կովում իսմայիլացիները թվապես գերազանցում էին հայերին գրեթե տասն անգամ, բայց և այնպես

հայերը անմահ Բագրատունու առաջնորդությամբ ջարդում են թշնամու զորքերի մի մասը, իսկ մնացած ուժերը հալածական առնելով թափում են Երասխը:

Ստոր խաբեությանը պարսից արքունիքն է կանչված Վասակ Ջորավարը՝ ծանոթ հերոսը պարսկահայ երեսնամյա պատերազմի:

Շապուհը: – Աղվե՛ս, դո՛ւ էիր, որ այսքան տարի կոտորում էիր արյաց զինվորներին: Այժմ դու կսպանվես աղվեսի պես:

Վասակը: – Մի ժամանակ առյուծ էի քեզ համար, այժմ եմ աղվես դարձել: Քանի որ Վասակն էի, հսկա էի, մի ոտս մի սարի վրա էի դրած, մյուսը՝ մի ուրիշ սարի վրա: Երբ աջ ոտիս վրա էի հենվում, աջ ոտքս էր մտնում գետնի տակ, իսկ երբ ձախ ոտիս վրա էի հենվում, ձախ սարն էր գետնի տակ անցնում:

Շապուհը հետաքրքրվեց իմանալ, թե այդ ինչ սարեր են, և Վասակը բացատրեց, թե մեկը ինքը Շապուհն է, մյուսը հունաց թագավորը: Ճշմարտությունն էր, որ հայ զորավարի շրթունքներով պատասխանում էր պարսից գահակալին:

Հայ արիությունն էր, որ դող ու դեղնություն էր պատճառում երկչոտ արքային, որը չպիտի հապաղեր հրամայելու, որ խաբեությանը մորթեն թակարդված իր հակառակորդին:

Հապա Անի քաղաքի ամազոնուհի⁶ն՝ հայրենանվեր ու արիասիրտ Այծյամն, որ առաքինանում էր բերդաքաղաքի պարիսպների վրա. առնացի հայուհին, որը Անիի պաշարման ժամանակ, բերդի պարիսպի վրա բարձրացած՝ քարեր գլորելով ի դերն էր հանում թշնամու ներխուժման փորձերը,

որն իր և հայ ռազմիկների կրծքերից դուրս էր քաշում արաբացիների նետերը և վերադարձնում էր թշնամուն...

* * *

Երկարե՞լ: Ի գո՛ւր: Մե՛ծ է փաղանգը մերազնյա արիների, քաջերի և հերոսների, որոնց փառքի չափ, ավա դ, մեծ եղավ և իրենց ապրած ողբերգությունը: Մեկի քաջությունից օգտվեց օտարը միայն, մյուսն իր արիությունն սպառեց յուրայինների դեմ, երրորդը՝ կարելիություն չունեցավ Հայաստանին ի սպասս դնելու իր բովանդակ ուժերը:

Այս և այլ պատճառներով շատ քչերի անվան և գործերի հիշատակն է պահել հայոց պատմությունը: Հայը որպես զինվոր և զորավար ճակատագրական դեր է խաղացել պարսից, մարաց, հունաց, թաթարաց, արաբացվոց, բուլղարաց և այլ օտարազգի բանակների մեջ: Եվ օտար պատմիչները, իրենց ցեղի փառքին նախանձախնդիր, հայ հերոսության մեծագործությունները վերագրել են յուրայիններին կամ էլ վատորեն գրել «ի ջուր մոռացության»: Հայկազն Վարդանը՝ Բյուզանդիոնի հայազգի Չմշկիկ թագավորի զորապետը, որի բազկի ուժը քանիցս զգացել են Թրակիան ասպատակող թուրքը, ռուսը, բուլղարը, հույն պատմիչների կողմից պիտի վերանվանվեր Վարատաս:

Վեցերորդ դարում, Հուստինիանոսի օրով հօգուտ հույների նշանավոր քաջություններ է ցույց տվել Ներսես Հայկազունը: Իններորդ դարի սկզբում հույների համար գործում էր Սանվել Մամիկոնյանը:

«Ես չեմ կարող,– ասում է Գ. Շլումբերգերը,– լռությամբ անցնել, որ Բյուզանդիոնի ամենամեծ զինվորական կայսրերից շատերը հայկական ծագում են ունեցել: Բյուզանդական բանակի պատմությունը լի է հայազգի նշանավոր զորավար-

ների անուններով: Կրկնում եմ, որ ես ուզում էի միայն մի քանի խոսք ասել հայ ազգի պատերազմական հնավանդ արժանիքի մասին, և որ ուրիշներին եմ թողնում ասել, թե այնքան փայլուն հատկություններով օժտված այս ժողովուրդն ինչէ՛ր է արել ժամանակին՝ արվեստների և գրականության աշխարհում»:

Հայն իր արիությամբ ճամփա է բացել և դեպի բուլղար գահը:

«Օագումով նրանք Դերջանցի հայեր էին, որոնք Վասիլ կայսեր վարձու բանակների կողմից բերվել էին Մակեդոնիա՝ բուլղարների դեմ պատերազմեցնելու նպատակով: Հարմար առիթի նրանք խույս տալով հույն կայսրից՝ անցան պուլկար թագավորի կողմը, որ Հուսկյուպցի էր ու իրենց քաջագործությունների ու հերոսությունների հետևանքով կարողացան շուտով բարձր աստիճանների տիրանալ», – ասում է Պրոֆեսոր Կացարովը:

Սրանցից մեկը մի օր պիտի բազմեր բուլղար գահի վրա, Ցար Սամվել անունով:

«Միհրդատի բանակներում հետևակ նետաձիգները, որոնք գլխավորապես Փոքր Հայքից էին հավաքվում, ծովի թեցամաքի վրա աչքի ընկան իրենց ճարպիկությամբ և քաջագործությամբ: Սուլլան այնքան գնահատեց սրանց արժանիքը, որ Դարտանի դաշնագրության մեջ (Քերոնիայի ճակատամարտից հետո, 85-ին) մի կետ մտցրեց, որով Միհրդատի հանձնված պատերազմական նավերը, պետք է իրենց նետաձիգներով միասին լինեին»:

Արաբ տարեգրերը խոսում էին Յարմուքի ճակատամարտում¹² Հորդանանի ավերի վրա հայ աղեղնավորների ցույց տված ճարպիկության ու արիության մասին, նրանց գործը անվանելով «գործ կուրության», քանզի հայերը սպանում են յոթը հարյուր արաբ կտրիճներ՝ բոլորին էլ աչքերից զարնելով:

Թաթարաց պատմության մեջ կարդում ենք, թե Հալավուն խանը շատ էր սիրում հայոց և վրաց զորքերը իրենց նշանավոր քաջության համար: Այդ ցեղի զորագլուխներից Բաշուն, իր գրեթե բոլոր հաղթությունները տարել է հայ և վրացի զնդերի շնորհիվ, որոնց գործածում էր որպես առաջապահ:

Թաթարները հարձակվում են Իկոնիայի վրա: Խիյաթեդին¹³ զորավոր Սուլթանը հարյուր հազար զորքով դուրս է գալիս թշնամու դեմ: Թաթարական բանակի մեջ է մեծն Վահրամի որդին (Գագի իշխանը), որը հայ և վրացի ազատագնդերով ջարդում է Սուլթանի բազմահազար բանակի աջ զորաթևը և վճռում ճակատամարտի բախտը:

«Մանավանդ Ռուբինյանների օրով,– ասում է Շլումբերգերը,– Խաչակիրների ժամանակ, Փոքր Հայաստանի թագավորությունն վիթխարի նեցուկ է հանդիսացել Արևելքի Ֆրանկ իշխանություններին, Անտիոքի իշխանին, Երուսաղեմի և Կիպրոսի թագավորներին, Հալեպի, Դամասկոսի և Կահիրեի մահմեդական իշխանների դեմ նրանց մղած անվերջ կռիվներում: Ուրիշներին թողնելով պատմել զրպարտված հայ ազգի հոյակապ գործերի մասին քաղաքակրթության, արվեստնե-

¹² Ճակատամարտը տեղի է ունեցել Բյուզանդիայի և Արաբական խալիֆաթի բանակների միջև 636 թ. Հորդանան գետի վտակ Յարմուկի հովտում:

¹³ Խիյաթ-էդ-դին

րի և գրականության գանազան ասպարեզներում՝ ես կուզեի մի քանի խոսք ասել, թե ինչ էին հայերը զինվորական տեսակետով միջին դարերում»:

«Potentissimus, ամենագորավոր», – ահա՛ պատվանունը, որով լատին իշխանները իրենց աղաչավորների բերնով դիմում էին Թորոսին՝ Նուրեդդինի դեմ դուրս գալու համար:

«Քրիստոնյա եկեղեցու և հանրապետության հանդեպ հայ ազգի ուրիշ արժանիքների մեջ կա մեկը, որ վսեմ է և առանձնապես հիշատակելի. դա այն է, որ, երբ ժամանակին քրիստոնյա իշխաններն ու բանակները գնում էին ազատելու Սուրբ Երկիրը, ո՛չ մի ազգ և ո՛չ մի ժողովուրդ ավելի արագ և ավելի եռանդով, քան հայերը, չփութաց նրանց օգնել մարդկանցով, ձիերով, մթերքով, խորհուրդներով. այդ սրբազան պատերազմում նրանք քրիստոնյաներին օգնեցին իրենց բոլոր ուժերով, ամենամեծ արիությամբ ու հավատարմությամբ»:

Ահա՛ և Ժան դը Մորգանի կարծիքը. «Կիլիկիայի հայերին մենք պարտական ենք մոտ վեց դարուց ի վեր, ուստի և այդ պարտքը ավելի նվիրական է... Երբեմնի հզոր այս ժողովուրդը հռովմայեցիների, բյուզանդացիների և պարսիկների հետ վարվում էր այնպես, ինչպես հավասարը հավասարի հետ»...

Ահա՛ հայը, այդպես էր հին հայը, որի մասին սիրում եմ հաճախ գրեթե արբեցուցիչ քաղցրությամբ կրկնել Խորենացու ոսկեդինիկ խոսքերը.

«Ի՛ մեջ պատերազմաց իբրև հուր ընդ եղեգն ընթանային տիրասէր ազգն Մամիկոնյանք»:

Բնագրական ռազմիկ էր հին հայը, եզակի զինվոր մինչև իր ծերությունը: Իբրև շանթ, անսպասելիորեն ընկնել թշնամու վրա՝ այդ էր հին հայի ռազմավարական ձևերից ամենամշակվածն ու սիրելին: Հավասար ուժերով և ոչ մի ժողովրդի է հաջողել արգելել հայ արիությունը իր ճամփու վրա, իր խո-

յանքների ժամանակ: Նա գիտեր մեռնել՝ ահա՛ իր ուժը: Արագահաս էր ու մահացու իր հարվածը, շանթահար, արյունընծա և փառունակ իր մահը: Գոռոզ էր, ինքնահարգ և պատկառազդու: Փառք, փառք հայ դասական հերոսականին, որը վերապրեցնելով միայն՝ հայությունը պիտի կարողանա անկախորեն պահել իր տեղն արևի տակ:

* * *

Չգիտե՛ս, հա՛յ մարդ, չգիտե՛ս ցեղիդ պատմությունը, ասել է՝ չգիտես ժողովրդիդ ապրած ողբերգության պատճառները. ասել է՝ չգիտես, թե ինչու՞մն է նրա ուժն ու տկարությունը, ասել է՝ աղետալիորեն քեզ պակասում է ցեղային ինքնաճանաչությունը՝ մեկը և ամենահուսալին այն փարատիչներից, որոնցով պետք է կռվել պարտվողականության ախտի դեմ, որն այսօր մեզ որպես ազգ սպանելուց առաջ աշխատում է նախ ծիծաղելի դարձնել մեր ահավոր ողբերգության մեջ:

Միրի՛ր պատմությունը:

V

ՑԵՂԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԸ

Մեկ էլ բանանք մեր ցեղի կյանքի գիրքը, ճանաչենք մեր ժառանգական բարոյական թերությունները՝ մեր ժողովրդի քաղաքական խեղճության ներգործոն պատճառները հասկանալու համար:

Պատմությունը ասում է.

– Իր գոյության ձիգ տարածության վրա չի եղել մի դեպք, որ հայությունը իր բովանդակ բարոյական և նյութական ուժերով ծառայած լիներ թշնամու դեմ՝ արտաքին վտանգը զինաթափելու վճռականությամբ: Հայաստան ներխուժող թշնամին

երբեք իր դեմ չի տեսել բովանդակ հայությունը միացյալ ճակատով՝ արտաքին աղետը հետ մղելու վճռողականությամբ: Թշնամին միշտ էլ ոտք է դրել Հայաստանի հողի վրա հայ կյանքի այն խառն ու խոռով շրջաններում, երբ մեր ցեղի քաղաքական ճակատագիրը վարողները զբաղված են եղել ներքին կռիվներով: Երկպառակության ախտը հաճախ և հաճախ ի դերն է հանել մեր ցեղի դասական քաջությունը: Երբ մեր արիությանը միացած չէ եղել մեր միաբանությունը՝ միշտ էլ չարաչար պարտությունն է եղել մեր բաժինը: Իսկ երբ նախարար, իշխան, թագավոր եղել են հաշտ ու համերաշխ՝ միշտ էլ հաղթել է թևաբաց արծիվը հայոց: Այն բոլոր ժողովուրդներից, որոնք բարեկամաբար, թե որպես թշնամի, ոտք են դրել հայ հողի վրա, ոչ ոք արիությամբ չի գերազանցել հային: Օտարը Հայաստանում հաջողություն է ունեցել ավելի որպես աղվես, քան առյուծ: Հայաստանը որոշ ժամանակաշրջաններում ավելի հայից է պարտված եղել, քան օտարից:

Ուզում եմ ասել, թե ներքին թշնամին է եղել հայ բազուկը տկարացնողը: Նա է առաջնորդել օտար զորքերը դեպի հայկական լեռնակղզին: Նրա դավաճանությունն է հաջողության նժարը հաճախ թեքել թշնամու կողմը: Եվ եթե Հայաստան երկրում երբևիցե հնարավոր է եղել որևէ համազգային ձեռնարկ հաջողությամբ պսակել՝ դա նշանակում է թե այդ ժամանակաշրջանում է եղել թշնամին:

Այո՛, աշխարհակալ ազգերի սուրը չպիտի կարողանար բաժանել հայ երկիրը, եթե հայ պետական գործչի նախանձը ու անհամերաշխությունը չնպաստեին թշնամուն:

Տրամաբանորեն ի՞նչ է հետևում այդ ամենից.

– Այն, թե հայ ժողովուրդի պատերազմներում պարտվելու պատճառները եղել են գերազանցորեն հոգեբանական. թե մեր ցեղի անմիաբանության բերումով հայ զենքն ու բազուկը

ավելի օտարին են ծառայել քան հարագատ երկրին, թե թշնամին հաճախ տիրել է Հայաստանին ոչ թե հաղթական սրով, այլ այս կամ այն հայ պետական գործիչի դավով ու դավաճանությամբ:

Կարճ. արտաքին թշնամին իր զենքի հաջողությունները Հայաստանի հողի վրա ավելի մեր հոգեբանական թերություններին է պարտական, քան իր կարողություններին:

Մինչ ե՞րբ այդպես: Մինչև ե՞րբ հայոց պատմությունը կշառունակի մնալ կրկնությունը մեր աղետալի թերությունների և սխալանքների: Ո՞ւր է ելքն այս աննախընթացորեն ցածր վիճակից, որը մայր երկրին սպառնում է գլխովին ոչնչացմամբ, իսկ գաղութների հայությանը՝ աստիճանական ապագայնացմամբ:

Ո՞րն է այն փրկարար միջոցը, այն համադարմանը, որ հանդիսանար փարատիչը մեր ժառանգած բարոյական ախտերի, որ հոգեփոխեր և ապրեցներ մեզ որպես ազգ, որ դարձներ մեզ կարող ներգործոն ինքնապաշտպանությանը և ընդունակ՝ պետական անկախ կյանքի:

Յեղային բարոյականն է այդ միջոցը, որ պահանջում է երկու բան. առաջինը՝ քաղաքական միակրոնություն, երկրորդը՝ զարգացումն այն բարոյական հատկությունների և ռազմարվեստագիտական կարողությունների, որոնք համապատասխան են մեր ժողովրդի հավաքական կարիքներին և էապես անհրաժեշտ՝ մեր ժողովրդի նյութական և հոգևոր ինքնապահպանման համար:

Արդի մեր ողբալի վիճակում, երբ մեր հայրենիքի ռազմագիտական բանալիները հանձնված են օտար դոնապաններին, և երբ սպասվում է թրքական մահառիթ հարված՝ ցեղային բարո-

յականն է, որ իմաստուն կերպով տեսնել պիտի տա բարոյական և նյութական այն հսկայական ուժերը, որ այսօր հայությունը վատնում է ընդունայն: Յեղային բարոյականն է, որ ռազմարվեստին ծառայող բոլոր գիտությունները պիտի լծի մեր ժողովրդի ինքնապաշտպանության դժվարին գործին, ինչպես և ամբարտակ պիտի կանգնեցնի այլասերման հեղեղատի առջև:

Ապրի՛ր համաձայն ցեղիդ իդեալի, ապրի՛ր համաձայն ցեղիդ բարձրագույն սկզբունքներին:

Դատապարտելի և բարոյագուրկ է այն երջանկությունը, որ հակասության մեջ է հավաքական երջանկության հետ, որ նպաստում է ցեղի տկարացմանը, որ խաթարում է այն ներդաշնակությունը, որը գոյություն պիտի ունենա մեր մասնավոր նպատակների և ազգային իդեալի միջև:

Քաղաքական միակրոնություն պետք է մեզ, քանզի միակն ենք ժողովուրդներից, որն իրավունք չունի ներքուստ պատակոված լինելու: Եթե ճամփաների տարբերություն կա, ապա կա նպատակի ընդհանրություն: Պետք է լինենք միաիդեա՛լ, միաշո՛ւնչ, միակա՛մ, քանզի անհամերաշխ ու անմիաբան մեր ժողովուրդը պատրաստի որս պիտի լինի իր հարևանների համար:

* * *

Հայ ընտանիքը դեռ շարունակում է նայել իր զավակների վրա, որպես իր մասնավոր սեփականության: Իսկ դպրոցը դաստիարակում է հայ մանուկները ընտանիքների և ոչ նա իսկ հայրենիքի համար:

Ընտանիք և դպրոց դաշնակցած՝ շարունակում են միայն առևտրապաշտ խանութպան և արհեստավոր հասցնել, երբ ժամանակն ու ցեղային բարոյականը հրամայողաբար պահանջում են հայից՝ լինել նա իսկ հայրենակրոն ռազմիկ չկոր-

չելու համար: Չենք ուզում հասկանալ, որ Արևելքի մեր դժբախտ պայմաններում անմտություն է տուն շինել ու դաշտեր մշակել, երբ նրանց պաշտպանության համար կանխավ չենք պատրաստվել: Չենք ուզում հասկանալ, որ հիմարություն է անկախ հայրենիքի մասին երագել, երբ նախօրոք նրա պաշտպանության համար չենք սպառազինվել:

Չէ՛, չէ՛, չենք ուզում հասկանալ, որ հայ հավաքականությունը օրվա իր աղքատիկ հոգեբանությամբ բարոյապես ազատ չէ ավելի լավ օրերի մասին երագելու, քանի դեռ հայ աշակերտող սերունդը չի կրթվում որպես ազգային նոր ուխտի միջնորդ, որպես ցեղային բարոյականի կրող:

VI

ՀԱՅ ՁԵՆՔԻ ԱՆՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Մեր օրերը

Հանձին բանակների չափվում են ժողովուրդները:

Կարսի պատերի տակ բախվեցին երկու ժողովուրդներ, երկու հավաքական հոգեբանություններ և հաղթեց կիսալուսինը, քանզի ժողովուրդը հոգեբանորեն պատրաստ չէր կռվի և հաղթանակի համար: Մեր ժողովրդին ցավագինորեն պակասում էր հոգեկան մշակույթը: Հայությունը կռվադաշտում, թե կռվից դուրս ցուցահանեց հետևյալ հոգեբանական թերությունները, որոնց պարտական է թուրքն իր գենքի հաջողությունը.

– Ամեն գնով ապրելու խելագար ցանկություն, պարտվողական հոգեբանություն, նյութական ծայրահեղ մտահոգվածություն, հասարակական զգացումի տհասություն, գիտակցական կարգապահության բացարձակ չզոյություն, տեղական հայրենասիրություն, ինքնասիրության ցավ ու չար նա-

խանձ հրամանատարների մոտ, կազմակերպչական պակաս, սխալ համարում թրքության մասին, ստրկական վախ և անռազմունակություն և այլն:

Նրանք, որ մասնակցել են մեր վարած կռիվներին, գիտեն, թե ինչպես հայ մարդը ձեռքն ընկած փուճ քուրջի կտորը, տնային ամանը կամ գործիքը գուրգուրանքով տեղափոխում էր ճակատից ճակատ, դիրքից դիրք: Իր կովը կամ փալասը փրկելու համար՝ նա հաճախ առանց խղճի խայթի թողնում էր կռվադաշտը, դասալքում էր: Այն իրը, որ դուք տեսել եք նրա շալակին կամ ձիու թամբին Կարինում, կտեսնեք և՛ Ղարաքիլիսայում, և՛ Ծաղկաձորում, ամեն տեղ, մինչև որ հասցնեք տուն: Իր կամ իր ձիու բեռը թեթևեցնելու նպատակով նա ավելի շուտ սակավաթիվ փամփուշտների մի մասից էր զրկվում, քան թե անպետք հնոտիներից:

Շատերը զինվոր էին համարվում այն պարզ պատճառով, որ զենք էին կրում: Ջենքը չէ մարդս զինվոր դարձնում: Մեզանում կար օգտախնդիրը, նյութական մտահոգվածությամբ գրեթե հիվանդ անհատը, բայց ոչ անձնվեր զինվորը: Այդ օրերին, նայելով մեր զորամասերին, չէր կարելի չվերհիշել Հերոդոտի դատաստանը պարսից բանակների մասին՝ «Ավելի մեծ թվով մարդ կար, քան զինվոր»:

Հայ մարդու մեջ չափազանց տկար է հասարակական զգացումը: Ընդհանուր և հանրօգուտ աշխատանքը դեռ պատիժ համարվելու չափ խորթ է հայ մարտիկի համար: Նա ակամայից պատրաստում է այն դիրքը, որից ինքը չպիտի օգտվի: Պատժի չափ ծանր է նրա համար պահակությունը, հետախուզական առաջընթացությունը, բանբերությունը: Նա գիտի, որ իր արթուն և աչալուրջ հսկումից է կախված ռազմորեն անպատրաստ վիճակի մեջ գտնվող զորամասի ապահովությունը, բայց և այնպես նա անվստահելի պահակ է: Չի

կարելի խորապես վստահ լինել, թե նա իրեն տրված բախտորոշ գրությունը ամեն գնով տեղ կհասցնի: Մեռնել ընկերոջը կամ գորամասը վտանգից փրկելու համար՝ մնաց հատրնտիրների առաքինությունը: Անվարժ բանակային կյանքին և կռիվներին՝ նա իրեն, համեմատաբար, լավ է զգում ժողովրդական ճակատամարտում: Կարսում նա այն չէր, ինչ որ էր Վանում, Սարդարապատում, Ղարաքիլիսայում, Սյունիքում: Նրան պակասում է ընդհանուր հայրենիքի գաղափարը, սակայն զուրկ չէ տեղական հայրենասիրությունից: Նա տաճկահայ է, ռուսահայ, պարսկահայ, ապա հետո հայ: Ինչպես և նախ մշեցի, վանեցի, գանձակեցի և ապա հուսկ¹⁴, հետո հայաստանցի: Ահա՛ այդ իսկ պատճառով հաճախ գիտակցական չէր նրա մահը:

* * *

Տաճիկները Հայաստանում ունեցած իրենց հաջողությունները ավելի մեզ՝ մեր բարոյական տկարությանն են պարտական, քան թե իրենց զենքին: Հայությունը դեռ չէր ըմբռնել այդ պարզ ճշմարտությունը, և այսօր էլ կեղծ համարում ունի թրքական բանակի մասին: Նա տղայամտորեն հավատում է թուրք ցեղի քաջության առասպելին, գերագնահատելով նրա բարոյական ուժը: Այդ սխալանքը ծնունդն է ստրկության վախի:

Ո՞վ չգիտի, որ մեր ժողովուրդը, դեռ պատերազմի չբռնված, ուներ իր պարտության ինքնաներշնչումը – հոգեբանական մի աղետալի վիճակ, որ ստույգ պարտություն պիտի բերեր մեր զենքին:

¹⁴ ի վերջո

Պարտվողականություն և հույս ուրիշի օգնության վրա – ահա որոնք են երկուքը հայ բանակի հոգևոր ամենավատ թշնամիներից: Հայոց նորագույն պատմությունը սրանց է պարտական հակապետական «մայիսյան ապստամբությունը»:

Այս հոգեբանությունն էր, որ մղեց չպաշտպանել Կարսի ամրությունները: Հոգեպես այդ տկար արարածներն էին, որ հարվածեցին հայ բանակի ռազմունակ և անձնվեր տարրերի արիությանը: Սրանք խախտեցին հայ բանակի բարոյական հավասարակշռությունը՝ հաղթության նժարը թեքելով թշնամու կողմը:

Մեր քաղաքական ու թվական անգործության և հատվածականությանց բերումով՝ հայը դառել է մեղկ, զիջող և նկուն օտարի հանդեպ, հիացողն ու խնկարկողը օտար ուժի, հավատացող օտար աստվածությունների: Դարերով զենք չի բռնել նրա ձեռքը, ինչպես և նա ազատ չի եղել՝ աներկյուղ ու անկաշկանդ սիրելու և պաշտելու ազգայինը: Հայը, մասամբ, դեռ անընդունակ է գիտակցական գոհաբերության, և բարձր թոփչքների, որովհետև անկարելի է եղել իշխող բարբարոս ժողովուրդների կրունկի տակ նման առաքինությունների մշակումը: Անանձնական բնույթ կրող այն ամենը, ինչ որ կատարված է նրա կողմից իր ստրկական գոյության ձիգ դարերի ընթացքին, եղել է հարկադրաբար, ակամայից:

Այո՛, հայը իր նկարագրի ստվերային կողմերի մի խոշոր մասը կը պարտի դարերի ստրկությանը: Օտարի ծանր գարշապարը ժամանակ է ունեցել մեկիկ-մեկիկ տրորելու նրա ցեղային առաքինությունները:

Ահա՛ թե ինչու այսօր, անշուշտ ոչ իր ամբողջության մեջ, նա պարտվողական է, անհայրենասեր և անարի: Դարերով նրա

հայացքը կտրված է եղել կյանքի բարձունքներից, ճակատը՝ խոնարհ, մտածումը՝ թևաբեկ, ցանկությունները՝ երկչոտ:

* * *

Հայ ժողովրդի թերություններն ու արատները ավելի շեշտված են իր մտավորականության մեջ:

Հայ մտավորականի հոգին անհամեմատորեն ավելի է ամայացած: Պարզ ժողովուրդը երբ և ուր որ հնարավոր է եղել, խուսափել է հրապարակից, քաշվել ու կծկվել է իր հարկի տակ: Հայ մտավորականը, ընդհակառակը, որպես հասարակության և հրապարակի մարդ, ավելի լայն հարաբերություններ, գործունեության ավելի մեծ ասպարեզ ունենալով, ավելի է ենթակա եղել օտարի այլասերիչ ազդեցությանը: Նա հաճախ իր ցեղային առաքինությունների խաթարման գնով է հարմարվել անհարազատ միջավայրին: Եվ զարմանալի չէ, որ այսօր հայ մտավորականության որոշ մասը ցեղային բարոյականի փոխարեն միայն հասարակական մեռյալ ծիսակատարություններ ունի: Քիչ չեն «սովեր և զովություն» փնտրողները, մասնավորապես քաղաքական հոսանքների մեջ, ինչպես և նրանք, որոնց հոգևոր ողջ հարստությունը իրենց լեզվի ծայրին է և բառերի մեջ: Գիտեն և սիրում են ճառել զայրույթով, թե քանիցս չար նախանձի երեսից է կործանվել Հայաստան երկիրը, բայց և այնպես հազվագյուտ չէ հոգևոր դեղնությամբ տառապողը մեր կյանքում: Հոգեպես ծույլ՝ հայ մտավորականներից շատերը չեն հավատում իրենց ցեղի հանճարի ուժին: Շատերի համար չկան ազգային մեծություններ: Իրենք սկզբից՝ արտաքին թշնամին միշտ էլ գայլ է թվում իրենց: Միբուր են և ղեկավարի դերը, բայց չեն արդարացնում այդ անունը: Մտնելով կուսակցությունների մեջ՝ արժեքավորում են իրենց անձը և ոչ

կուսակցությունը: Եվ հաճախ իրենց եսին ստորադասում են կուսակցությունը, այդ վերջինին՝ իրենց ժողովրդի շահերը:

Այսպես, շատ են և հասկանալի հայ հոգեբանության սովորային կողմերը: Դարերով գրկված պետական կյանքից՝ հայությունը, մասնավորապես նրա մտավորական տարրը, իրեն ազատ է համարել հավաքական պարտականություններից: Զրկվելով պատասխանատու պաշտոնների մեջ երևանալու հնարավորությունից՝ ժամանակի ընթացքում հայ մտավորականի մեջ չքանալու աստիճան տկարացել է պատասխանատվության գգացումը: Նա օտարին ծառայել է կես սրտով, ակամայից: Եվ օտարի դարեր տևող նվաստացուցիչ վերաբերմունքը, հասարակական կյանքի և անանձնական իդեալների և պարտականությունների պակասը հայ մարդուն սերտորեն կապել են իր նեղ հարկին, իր ընտանիքին:

Հասկանալի է, որ նման հոգեբանական մթնոլորտում դարերով շնչող ժողովուրդը պիտի այլանդակեր իր հասկացողությունը հասարակական և պետական կյանքի մասին, պիտի կլանվեր առօրյա կյանքի արտաքին շինարարությամբ, դառնալով զգալիորեն անտարբեր դեպի իր ցեղի հավաքական ճակատագիրը և պիտի կորցնէր իր ցեղային բարոյականը:

Ահա՛ թե որտեղի՛ց և որո՛նք են մեր բարոյական թերիները, որոնց կը պարտի թուրք զենքը Հայաստանում իր հաջողությունները:

Աղետալի անգիտացում

Օտարներին նմանելու հիմարությունը ոչ մի ասպարեզում այնքան չարաչար չի պատժվում, որքան կովադաշտում: Ահա՛ թե ինչու իմաստուն գորահրամանատարությունը դաստիարակության և ղեկավարության գործում պետք է

հենվի ցեղային անհատական թե՛ հավաքական հոգեբանության վրա: Նա ընդունակ պետք է լինի ուսումնասիրելու և ճանաչելու աշխարհագրական, հոգեբանական միջավայրը, որի հարազատ ծնունդն էր, և ապա հաշվի առնելով այդ վերջինը, պետք է մշակել կարողանա իր խնամքին հանձնված գորական ուժերը նախապատրաստելու և որպես ազգային քաղաքականության զենք գործածելու եղանակը:

Ասել է՝ մի երկրի բարձր հրամանատարությունը, իր անունն արդարացնելու համար, պետք է լինի ազգային՝ հաջող ռազմավարություն ունենալու համար:

Հայաստանի Հանրապետության հրամանատարությունը ազգային էր միայն անունով, և հենց այդ էր պատճառը, որ նրա համար անձանոթ մնացին մեր երկրի և ժողովրդի առարկայական պայմանները, որոնց անգիտացումը իր հետևից անխուսափելիորեն քարշ տվեց Կարսի աղետը:

Հայ երկրի ինքնապաշտպանության վարիչները հրամայողաբար պետք է հաշվի առնեին հետևյալ տվյալները.

1. Հայաստանի աշխարհագրական դիրքը,
2. նրա երկրամասային ծավալը,
3. նրա տեղագրական բնույթը,
4. ժողովրդի քանակը,
5. նրա հատվածականությունը,
6. նրա քաղաքական իդեալը,
7. նրա և իր իսլամ հարևանների փոխհարաբերությունների բնույթը և այլն:

Մեր երկրի դիրքի և փոքրիկ ծավալի շնորհիվ Հայաստանի բարձր հրամանատարության ամեն մի ռազմավարական թե՛ ռազմագիտական սխալը պիտի ունենար ճակատագրական հետևանք: Շատ անգամ գրեթե առաջին անհաջողությամբ առաջացած գաղթը կամ զանգվածային դասալքու-

թյունը ամենաբարոյալքիչ ձևով պիտի անդրադառնար թե՛ գործոն գործամասերի և թե՛ թիկունքի հոգեբանության վրա՝ անհնարին դարձնելով հետագա դիմադրությունը:

Ահա թե ինչու Հայաստանի գերագույն հրամանատարությունը ընդգծած առաջին երկու պայմանների թելադրությամբ պիտի ունենար անվրեպության աստիճան հաջող ռազմավարություն: Երրորդ և չորրորդ պայմանների պահանջմամբ Հայաստանի զինվորական նախարարությունը պիտի վարեր «փոքրիկ պատերազմ»՝ տալով իր ճակատամարտներին ժողովրդապարտիզանական բնույթ: Հանցավոր սզիտություն էր կիրարկումը ռուսական զանգվածային ռազմավարության, որը մեծ ժողովուրդ և, համենայն դեպս, ոչ մեր երկրի տեղագրական բնույթն է պահանջում:

Հինգերորդ և վեցերորդ պայմանների գոյությամբ ՀՀ զինվորական նախարարությունը պիտի մղվեր օր առաջ միօրինակություն մտցնել ռուսահայ և արևմտահայ տարրերի միջև, զինվորական ծառայությունը պարտադիր դարձնելով նաև վերջինների համար: Կամավոր գործամասերի գոյությունը հասկանալի է պատերազմի, բայց ոչ և խաղաղ ժամանակ, երբ այդ չի կարող բացասաբար չազդել Հանրապետության կանոնավոր բանակի հոգեբանության վրա:

Կա, վերջապես, մահմեդականության տարամերժ հոգեբանությունը, նրա դարավոր թշնամանքը դեպի ոչ-իսլամ մարդկությունը և մասնավորապես դեպի հայությունը, կա նվաճողական համաթրքականությունը, կա հայ ժողովրդի պահանջը տաճկահայ նահանգների մասին, և մի շարք այլ պատճառներ, որոնք հայ-թրքական, թե՛ հայ-թաթարական բախումներին պիտի տային ծրագրված կոտորածի բնույթ:

Ոչ թե միայն հողային նվաճում, այլև զանգվածային ջարդ, տեղահանություն, ավերածություն, հայ ժողովուրդը մեջտե-

դից բառնալու խելագար ցանկություն – ահա մահմեդակա-
նությունը իր և մեր միջև ծագած պատերազմների ժամանակ:

Ինչո՞ւ չի հաղթել, ինչո՞ւ հաճախ նույնիսկ չի կովել հայ գոր-
քը: Գիտենք, որ նա շատ անգամ վերջնական պարտության է
մատնվել կոիվների հենց առաջին շրջանում, որ հենց առաջին
անհաջող բախումը մեր գորքի պարտությունը դարձրել է
անսրբագրելի, վերջնական, որ մեր գորքի մի շարք պարտու-
թյունները եղել են միաժամանակ և բարոյական:

Ինչո՞ւ Կարինից մեր գորամասերը նահանջեցին, ուղղակի
Կարս և ապա՝ Դիլիջան: Ինչո՞ւ Երևանում տեղի տվածները
քաշվեցին Սյունիք, առանց կանգ առնելու մինչև Սյունիք ձգվող
տարածության որևէ կետի վրա՝ դիմադրություն ցույց տալու
նպատակով: Ինչո՞ւ այդ հսկա տարածության վրա նրանք չվե-
րածեցին որոշ բարձունքներ՝ արծվի բների, որոշ ձորեր՝ լեռ-
նիդասյան կիրճերի, որոշ դաշտեր՝ փառքի թատրերի:

Ո՞վ է մեղավոր հայ զենքի անհաջողության մեջ: Անշուշտ
միայն ոչ զինվորը: Ձինվորը չէ մեղավոր, որ իրեն պակասում
է կովեցնողը, ինչպես և այն անհրաժեշտ հոգեբանական
մթնոլորտը, որի մեջ միայն հնարավոր է դիմադրությունն ու
հաղթանակը: Ձինվորը չէ, որ իր հրամանատարությունը չի
հասկանում, թե կովի օրերին ճակատամերձ վայրերում տեղ
չպիտի ունենան հասարակության կրավորական տարրերը:

Կարինը և Կարսը իրենց անկման նախօրյակին այլևս բեր-
դաքաղաք չէին, այլ մի-մի շուկա, ավելին՝ մի նոր Արշակա-
վան, ուր կարելի էր ամեն մի քայլափոխում հանդիպել ոչնչով
այդ փափուկ շրջաններին չկապված գաղթականին, զենքի
առևտրով զբաղվողին, դասալիքին, ավարաովին, չարաշահո-
ղին և նման մութ ահրևկեց տարրերի ամբողջ խմբեր: Հասկա-
նալի չէ՞, որ նման քառսի և ապականության մեջ բացարձակա-
պես անհնարին պիտի լիներ դիմադրության մղել ոչ թե բարո-

յալքված հայ գորամասերը, այլն Կեսարի հռչականուն լեզեռնները:

Հետևանքը: Աննախընթաց խուճապ, գաղթ և... տխուր պատմություն:

Ինչո՞ւ Կարսն ընկավ 1920 թ. աշնանը. որովհետև մեր գորքը Կարսի տակ դարձած էր հավաքական հոգուց գուրկ մի գանգված, որի մեջ կային՝ նախկին ռուս ծառայության հայ զինվորը, անշուշտ, ծանոթ գեներալ գործածությանը, բայց հոգեբանորեն դեռ ոչ ազգային զինվոր, մանր առևտրականը, իր առօրյա ապրումներով, չնկատվելու աստիճան չնչին «թվով մտավորականներ» իրենց ծխական տրամադրությամբ և օտարալեզու զինվորական արհեստավորը: Մեղմ ասած՝ կար պարտության և աղետալի նահանջի համար ամեն ինչ, իսկ դիմադրության և հաղթանակի համար՝ ոչինչ:

Ահա՛ թե ինչու ոչ միայն չհաղթեց, այլև չկռվեց հայ գորքը: Այն պատերազմներից չէր հայ-տաճկականը, երբ կովադաշտ նետված ժողովուրդը հարյուրապատկում է իր ուժերը և երիտասարդանում, երբ ուժի և ոգևորության մի հեղեղ է անցնում ժողովուրդների հոգեկան աշխարհով և ստեղծում անձնվիրության համաճարակ, երբ տղամարդը՝ անկախ իր տարիքից, արհեստից, արվեստից, ամաչում է մնալ ու երևալ թիկունքում, երբ «մեռելները բարձրանում են գերեզմաններից մասնակցելու ճակատամարտերին». սեղմացած՝ երբ սուրը մերկացրած ժողովուրդը հոգեպես վերածնվում է օրերի և ժամերի ընթացքում:

Կար և աղետալի մի սխալ ռազմավարության մեջ: Դա «գծային» կոչված ռուսական ռազմավարության կիրարկումն էր հայկական բնաշխարհում, որը գերազանցապես հերոսական կռիվների թատերավայր է:

Մեր որոշ երկրամասերի տեղագրությունը ալպյան բնույթ ունի. մի կարևոր պարագա, որ հաշվի չառավ հայկական սպայակույտը և մնաց կառչած ռուսական զանգվածային մարտավարության մեռյալ ձևերին: Այդ տիպի ռազմավարությունը պահանջում է նախ թվապես մեծ ժողովուրդ: Կովի նման ձևեր գործադրելու համար՝ պետք էր ունենալ քանակով եթե ոչ ավելի գոնե հավասար ուժեր: Եթե պետք էր վաշտը՝ վաշտի, և գունդը գնդի դեմ հանել, խելագարություն էր կովի ձևնոց նետելը կամ ընդունելը: Հասկանալի պատճառներով մենք թվապես ոչ գերազանցել, ոչ էլ հավասարվել կարող էինք թշնամուն:

Ասել է՝ կովի ձևնոցը ընդունելով՝ հայկական սպայակույտը իր ամբողջ հույսը պետք է դնել երկու բանի վրա՝ գերազանց ռազմավարության և պատերազմի հրոսակային բնույթի վրա:

Մեր ուժերի 3/4-ը կլանեց Կարսը, որի անկումից հետո նահանջի ճամփան բռնած հայկական զորամասերը այլևս անկերպարան զանգվածներ, ամբոխներ էին:

– Պատերազմ, և գաղթ ու նահանջ չի նկատվում հայերի կողմից: Ինչո՞ւ են անդամալուծված թուրք բանակի շարժումները:

Պատճա՞ռը:

– Որովհետև հայ ժողովուրդը վճռած է կտրել նահանջի հրաման արձակողի հանցավոր ձեռքը: Որովհետև հայ ռազմիկը միայն մի հատիկ ճամփա է թողել թշնամուն՝ իր դիակի վրայով:

– Ինչո՞ւ են ընդունայն անցնում թշնամու բոլոր հարվածները: Ինչո՞ւ հայ գյուղեր չեն ծխում, դիակույտեր չեն երևում:

– Որովհետև կենդանի բերդ է հայ ռազմիկի կուրծքը, որովհետև մինչև այդ՝ հայը հաղթել է իր բոլոր տկարությունները:

– Ինչո՞ւ են այնքան աննշան հայ մահերը, և հաղթական բոլորն էլ: Ինչո՞ւ թշնամին անիծում է պատերազմը և փախչում Հայաստանի սահմաններից:

– Որովհետև մեր մարտիկին ղեկավարում է իր ցեղի ոգու ձեռքը: Որովհետև ամեն մի զինվոր և իր ղեկավարն է այստեղ, իսկ ամեն մի հրամանատար՝ միաժամանակ և զինվոր է: Դրա համար էլ նախաձեռնության, հանդգնության և հնարագիտության ոգին զարգացած է հանճարեղության աստիճան: Որովհետև միայն մի հատիկ ընդհանուր հրաման կա դրված բոլորին, ցեղի հրամանը՝ հաղթել: Չկա մարդ-մեքենան, չկան հոգեպես ծույլ զանգվածներ՝ խցկված դիրքերի և երկրաչափական ձևերի մեջ: Կան կենդանի շանթարգելներ, որ քաշում, չեզոքացնում, զինաթափում են թշնամու հարվածները: Կան դարանամուտ, հանկարծահարձակ թեթև հրոսախմբեր, վարժված հին պարթևական ռազմախաղերին: Կա գիտակցությունը, թե ով պատրաստ չէ հանուն Հայաստանի մեռնելու ամեն վայրկյան՝ արժանի չէ հայ կոչվելու:

Կա հպարտ գիտակցությունը, թե պարտվել՝ ասել է կորցնել իր գոյության իրավունքը, ասել է անարժան լինել անկախորեն տեղ գրավելու արևի տակ:

Կա ազգային սրբազան պատվասիրությունը՝ ոչ ոք է ուզում անարգված հայրենիքի գավակ կոչվել: Քաջությունը այստեղ գերագույն արտահայտությունն է մարդկային իմացականության: Վախ չկա, պարտված է նա հայի կողմից:

Ահա՛ թե ինչպես պետք է լիներ մեր վերջին պատերազմը: Ավա՛ դ, նկարագրածս բնույթը չունեցավ նա, և դրա համար էլ մի սև էջ ևս ունեցավ մեր նորագույն պատմությունը:

VII

ՅԵՂԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հասարակական արդարություն

«Եվ ո՛չ մի ընչագուրկ քո հողի վրա»,— ժամանակին այսպես էի խոսում լեռնահայությանը, քանզի խեղճերի արցունքից և թույլերի անարիությունից են կործանվում հայրենիքները: Իսկապես, ինչպե՞ս կարող է հզոր և երջանիկ լինել մի ժողովուրդ, որի ճակատագրով չեն հետաքրքրվում իր բոլոր որդիները. մի պետություն, ուր իշխում են որոշ դասակարգեր, բայց ոչ բոլորը, մի հայրենիք, որը հարազատ մայրը չէ բոլորի և ամեն մեկի, որի մայրական ստիճները չեն ծծում իր բոլոր գավակները: Միայն պարտականություններն ու դժբախտությունները չեն, որ ընդհանուր պետք է լինին, այլև իրավունքներն ու ուրախությունները: Մրանում է երկրների հզորության գրավականը, սրանում է և հիմքը հասարակական ճշմարիտ բարոյականի:

Ավազի վրա է հիմնված այն պետությունը, ուր բարեկեցիկների կողքին կան թշվառ տարրեր՝ ենթակա զրկանքի, գերի աղքատության: Ամուր չէ այն պետության հիմքը, ուր առատության մեջ զգվողի ուրախ քրքիջների հետ լավում է և աղքատի վայր:

Օրինված չէ՛, հզոր չէ՛, ապագա չունի այն պետությունը, ուր արևը չի ծագում բոլորի համար, ուր բավարար սնունդի և գլուխ դնելու տեղի համար հառաչողներ կան: Այդպիսի պետության մեջ է, որ իշխում է հասարակական անզգայությունը, ուր առանց ամոթի և խղճի խայթի մարդիկ անցնում են թշվառների մոտով:

Չկա ավելի մեծ չարիք մի երկրի համար, քան դասակարգային եսասիրությունը: Դա խաթարում է ազգային անհատականությունը, ներքուստ պառակտում ժողովուրդը, թունավորում միևնույն ցեղին պատկանողների փոխհարաբերությունները, թուլացնում պետությունը:

Ինչպես անհատականը, կույր է և հավաքական եսասիրությունը: Այդ հրեշը պետք է սպանվի վաղվա Հայաստանում:

Այս կամ այն դասակարգը չէ՛, որ պետք է իշխի վաղը, այլ ամբողջ ժողովուրդը:

* * *

Չկա մի երկիր, ուր հնարավոր չլիներ մոտավոր հավասարությունը, մի երկիր, որը չկարողանար անկարոտ դարձնել իր բոլոր զավակներին, եթե այնտեղ թագավորում է հասարակական արդարությունը: Եթե չկա հասարակական արդարություն, անիծված է իշխանությունը, որ արդարացնում է որոշ տարրերի ընչազրկությունը: Եթե չկա հասարակական արդարություն, ասել է՝ կա այն ամենը, ինչ որ արագացնում է անփառունակ անկումը պետությունների: Իսկ այնտեղ, ուր թագավորում է աստվածային օրենքը, այնտեղ ընչազուրկին և անարիին փոխարինում է արի և անկարոտ քաղաքացին: Իսկ այնտեղ, ուր չկա ընչազուրկը, անարին, վատը, այնտեղ չի երևում արտաքին թշնամին հրով և սրով, այնտեղ բարգավաճում է յոթնիցս օրհնված, ապահով ու երջանիկ հայրենիքը:

Եթե հայ մարդը խեղճ է և անարի պիտի մնար և իր անկախ հայրենիքում, էլ ինչո՞ւ էր պետք անկախությունը: Եթե դարերով օտար լծերի տակ չարչրկված հայության մի մասը թշվառ պիտի մնար և իր ազատ հայրենիքում, էլ ինչո՞ւ էր պետք ազատությունը:

Չէ՛, չէ՛ վաղվա Հայաստանում չպետք է լինեն խեղճեր, ընչազուրկներ, անարիներ: Բոլորն էլ պետք է լինեն անկարոտ,

առաքինի, արի: Հայ հայրենիքի ապահովությունն է պահանջում այդ:

Մեր անկախության մայիսը

Ազգերը, ինչպես և անհատները, հաճախ մեծ և հաղթական լինելու կարիք են զգում: Նրանք ուզում են ունենալ գիտակցությունը իրենց տիրական կամքի, որը և ձեռք են բերում հաղթական պայքարի մեջ:

Այո՛, սերը դեպի հաղթանակը եղել է և կմնա բացարձակ պայմանը ազգերի և անհատների ստեղծագործ կյանքի:

Մեր ժողովուրդի երկու մեծափառ գործերը՝ Սարդարապատն ու Ղարաքիլիսան, ուր նա այնքան հիասքանչ և բուռն կերպով երևան բերեց անկախ հայրենիք ունենալու իր հաղթական կամքը, պետք է բացատրել ոչ միայն ինքնապաշտպանվելու հարկադրանքով, այլև իրեն մեծ ու հաղթական զգալու գերագույն կարիքով: Ողբերգորեն երջանիկ 1918-ի ընթացքում հայությունն ունեցավ իր քաղաքական Ավարայրը Արարատի ստորոտում: Իր դարավոր նկուն և անփառունակ գոյությունից դժգոհ՝ մեր ցեղի ոգին, իրեն տիրական ու մեծ զգալու կարիքից խթանված, բարձրացրեց հայոց անկախ պետության շենքը, որի գրանիտե հիմքը դրված կմնա աստվածաշունչ որդիների նշխարների վրա:

* * *

Մայի՛ս 28-ը:

Այդ օրը հայությունը հագավ իր փառքի ու հզորության ծիրանին և բազմեց ազատ ու անկախ ազգերի կողքին: Եվ Արարատյան արևը երկիրը դիտելիս, ասաց այդ օրը՝ «ահա՛ մի թագավոր ժողովուրդ ևս, որը ստրուկ էր երեկ»:

Այդ օրը փառքն ու պսակումը մեր ժողովրդի ազատագրական գերմարդկային ճիգերի դարերով օտար կրունկների տակ տրորվող «քրիստոնեական արհամարհված հոտը» իր վարած աշխարհաճանոթ պայքարի շնորհիվ հռչակվեց ազատ:

Այս աստվածային օրը մարդկության անիրավության կողմից աշխարհի քարտեզից անհետանալու դատապարտված մեր հայրենիքը, որն աշխարհագրական կետ էր համարվում այլևս, հռչակվեց անկախ:

Հայությունը հաղթեց մահն այդ օրը՝ վերջ դնելով իր դարեր տևող հոգևոր և նյութական ծանր հոգեվարքին: Մայիսյան հերոսական շարժումներ, վերացնելով ապագայնացման մահաբեր վտանգը, փրկեց նաև գաղութահայության ազգային դիմագծությունը: Օտար պետությունների մեջ երևաց հայ եռագույնը, դեսպանը, հյուպատոսը, որոնց միջոցով տարաշխարհիկ և տարալեզու հայությունը հոգեբանորեն կապվեց իր պետությանը, դառնալով հայահպատակ:

Հայաստանի անկախությամբ հայությունը, որպես ցեղագրական ուրույն միավոր, վերստացավ մարդկության օգտակար լինելու իր կարելիությունը, որին պատմական մեծ առաքելություն է վերապահված Մերձավոր Արևելքում:

Երկարե՛լ: Բայց ինչո՞ւ, մի՞ թե հնարավոր է խոսքով սպանել Մայիս 28-ի բովանդակ տարողությունը: Ո՛չ, ո՛չ, դա ոչ ոք կհաջողի: Այդ նվիրական թվականը խորհրդանշում է հայրենիքին ու իր անկախությունը, **հայրենիքը, որ Աստծու պես ավելի սրտի, քան ուղեղի մեջ է ապրում:**

Եզիպտական գերությունից վերադարձած Իսրայելը հերոսական փորձեր էր կատարում՝ վերականգնելու կործանված Միոնը: Թշնամին, սակայն, քանդում էր այն, ինչ որ գուրգու-

բանքով վերաշինում էր մարգարեների ժողովուրդը: Թշնամին գրոհում էր, իսկ Իսրայելը, մի ձեռքում սուրբ, մյուսում բրիչը առած, և՛ մարտնչում էր, և՛ վերաշինվում էր: Եվ նա կործանված չհամարեց Սիոնը, անգամ այն ժամանակ, երբ նրանից մնացել էր մի հատիկ քանդված պատ՝ այնքան լայն, որքան որ պետք էր հնարավորություն տալու մի խումբ ուխտավորների՝ նրան սեղմելու իրենց դեմքերը, և նրա ետևը թաքցնելու իրենց արցունքը:

Իռլանդիան, հարգելով գոհագործության օրենքը, ազատության գոհասեղանի վրա դարերով վառ պահեց կրակը: Նրա կրծքի տակ չմեռավ ազատասիրության ոգին, մինչև որ վերականգնեց քաղաքականապես, դարձավ թագավոր ժողովուրդ՝ տեղ անկախ հայրենիքի...

Եթե կուգես լսել և հայ մարդուն անկախ հայրենիքի մասին, հարցրու հայ գաղթականին, որի տառապանքը ծաղրելու համար՝ ձեռքը գալի անցագիր են տվել, և երկրե-երկիր են քշում: Հարցրու հայ որբին, որին մարդկային կեղծ ողորմասիրությունը մի ձեռքով չոր հաց, մյուսով թույն է տալիս: Հարցրու՝ հայ բանվորին, որ դատապարտված է օտար հայրենիքներում էժան աշխատավոր ձեռքերի և անխաչ ու անտեր գերեզմանների թիվն աճեցնելու: Հարցրու հայրենի հողի վրա իր արյան հետքերը թողած տարագիր հայ գորականին, որն այրող կարոտի ժամերին անճառելի քաղցրությամբ մոտենում է արծաթյա սափորին, որի մեջ ջերմաջերմ պաշտամունքով պահում է հայրենի երկրից բերած մի բուռ հողը:

Մեծ մեռելների պաշտամունքը

Իր ապագայի հոգը տանող ամեն մի ազգ հսկումի իր օրը, ժամը, վայրկյանն ունի: Խոհուն հսկումներ, երբ երկյուղածորեն իր մտքի ձեռքով բարձրացնում էր ներկայի աչքից ապագան ծածկող վարագույրը և այսպիսով հաջողում էր գաղտնիքներ կորզել ժամանակի ծոցից: Ազգային տոների, և մասնավորապես մեր անկախության Մայիսի մասին է խոսքս: Տոներ, որոնք այնքա՛ն մեծ շքով ու հանդիսավորությամբ են կատարվում քաղաքակիրթ ազգերի մոտ: Մակավաթիվ են տոները մեզանում, և ավա ղ, եղածներն էլ տոնում ենք կես սրտով, տոնում ենք, որովհետև սովորություն է տոնել: Տոնակատարությունները մեզանում ավելի մեռյալ ծիսակատարություններ են քան, խորհրդածությունների օրեր, ժամեր, որոնց ընթացքում ինքնաճանաչ ազգերը ոգեկոչում են իրենց սրբին, լուսակրին, հերոսին, ոգեխառնվում են նրանց հետ՝ հոգեպես աճելու համար:

Ահա՛ խորհուրդն, իմաստը տոնակատարությունների: Ազգերն իրենց ծոցի մեջ ապրեցնում են մի որակական փոքրամասնություն՝ սուրբը, լուսակիրը, հերոսը, որ ապրում է ոչ իր անձով և ոչ իր անձի համար, որ մեռնում է՝ չմեռնելու, մեռնում է՝ իր ցեղն ապրեցնելու համար: Ոգու ազնվականությունն է այդ համացեղ փոքրամասնությունը, ժողովուրդների ամենամեծ, անկորնչելի և անմեռ հարստությունը:

Սուրբը, որ ոսկե շղթայով անհատի ու ժողովուրդների հայացքը կապված է պահում աստղերին՝ այդ վերջինները կյանքի ճահճից ու բարոյական նեխությունից գերծ պահելու համար: Լուսակիրը, որ հալածում է խավարը, անհատի և հավաքականության հերոսը, որ կոթնած իր հաղթական սրին, արթուն հսկում է հայրենի սահմանների վրա:

Ոչինչ են անհատը ու ազգը, եթե նրանց պակասում է աստվածային գիծը: Առանց սրբի, լուսակրի և հերոսի՝ գոյություն չէր ունենա հոգևոր մշակույթը, և մարդկային ցեղը դատապարտված կլիներ քարշ տալու անասնա-բուսական մի տխուր գոյություն:

Փորձեցեք մի վայրկյան մոռացության տալ հայ խաչի, այբուբենի ու սրի հերոսներին, և էլ ոչինչ կմնա, որ իրավունք տա մեզ ազգ կոչվելու: Հոգևոր անապատի կվերածվի մեր կյանքը, պատմությունը: Դպրոց, եկեղեցի, ընտանիք կկորցնեն իրենց բարոյական բովանդակությունն ու խարիսխը: Կցամաքեն ստեղծագործ ոգևորության բոլոր աղբյուրները:

* * *

Մի ժողովրդի սրբությունների կարգին են պատկանում և պատվո վերքերը, սպիներն իր ընտիր որդիների: Որքան անխառն և ուժեղ է հարգանքը դեպի այս սպիները և որքան մեծ թվով մարդկանց հոգիների մեջ տեղ ունի այդ հարգանքը՝ այնքան լուսավոր և առաքինի է ժողովուրդը, այնքան հուսալի է նրա ապագան:

Պատվո սպին եղել է և կմնա հոգևոր ամենամեծ զարդը: Սպիազարդ գործիչը նմանվում է վարդենուն, որը զարդարելով իրեն, զարդարում է նաև իր շրջապատը, պարտեզը:

Չկա ավելի մեծ և՛ աններելի հանցանք, քան անհարգալից վերաբերմունքը դեպի սպիացած վերքերը մեր ազգի գործիչների:

Հարգալից պետք է լինել անգամ դեպի թշնամու պատվո սպիները:

Կասկածելի է բարոյականը մի ժողովրդի, որին պակասում է հարգանքը դեպի իր սպիազարդ հերոսը, լուսակիրը և սուրբը:

– Ես կուզեի,– գրեթե մարգարեի հափշտակությամբ սկսեց Աշոտը,– ես կուզեի, որ Սյունիքի լեռներից մեկի ստորոտում բարձրացվեր լեռնաշխարհի կռիվներում ընկած մեր մարտիկների փառատաճարը: Մի ընդհանուր մատուռ և գերեզմանաքարերը փոխարինող ժայռեր այս մակագրությամբ. «Ընկան, որ ապրեն և ապրեցնեն իրենց ցեղը»:

– Այո՛, մեր ժողովուրդը պետք է ունենա իր փառքի սրբարանը, բայց ոչ միայն Սյունիքի երկնքի տակ և ոչ լեռանց փեշերին: Թող հոգով արծիվ մեր ռազմիկները հանգչեն իրենց սիրած լեռների երկնահաս բարձունքներին: Թող նրանց սեզ գագաթներին անմար պլյալան կանթեղները երախտագիտության:

Արշալույսները թող համբուրեն, վերջալույսները ոսկեգոծեն քաջաց շիրիմներն ու ժայռերն ամեն օր: Եվ թող ամեն տարի հաղթությանց տոներին սերունդները ոգեկոչեն մեր հայրենաշունչ մեռելներին ու դաստիարակվեն նրանց մեծագործություններով, որպեսզի սովորեն կյանքից ավելի գիտակցական մահը սիրել:

– Թո՛ղ այդպես լինի,– որպես պատասխան իմ խոսքերին, ավելացրեց Աշոտը և իր հոգնաթախիժ հայացքը դարձրեց դեպի Խուստուփյան բարձունքները:

Լեռների պաշտամունքը

«Յոթը բարձունք ունի այս ռազմաճակատը՝ հպարտ բարձունքներ, որոնց տիրելու մեջ, որոնց վրա է մեր փրկությունը: Ով տիրեց այդ լեռներին, նա է տերը Հայաստանի»: Ժամանակին զորամասերիս ուղղած իմ մարտագրերից մեկի այդ տողերի մեջ հավասար չափով ճշմարտություն և խոր հոգեբանություն կա:

Մյունիքը լեռներ ունի, որոնց գրավումը թշնամու կողմից կարող է ճակատագրական հետևանքներ ունենալ ոչ միայն լեռնահայության, այլև ամբողջ Հայաստանի համար: Գրավելով որոշ բարձունքներ Մյունիքում՝ իմ գնդերը հաջողեցին մեր լեռնաշխարհի երեսից սրբել երկու հարյուրի չափ թշնամի գյուղեր և վերացնել հայ ազգաբնակչության գլխին կախված մահմեդական վտանգը: Մյունիքը սև հողերի վերածելու նպատակով թուրքն ու թաթարը քանիցս ձգտել են անսպասելիորեն երևալ այս կամ այն ռազմագիտորեն կարևոր բարձունքի վրա և նեղը դնել հայությունը: Կովի միևնույն ռազմափորձային ձևերին դիմել ենք և մենք՝ օգտագործելով լեռներն ու բարձունքները, որպես համառ կետեր, որպես տիրապետող դիրքեր, և, ամենալավը, որպես ռազմագիտական բանալիներ: Ահա՛ թե ինչու ինձ պետք էր՝ հրահրելով ժողովրդի սերը դեպի իր լեռները, հաճախ կրկնել Մյունեցուն, թե հայրենի լեռների վրա է իր փրկությունը: Ահա թե ինչու իմ վարած անհավասար գոյամարտի օրերին լեռնահայության իմ տված պատվիրաններից մեկն այսպես էր հորդորում ժողովրդին. «Տաճարներիդ մեջ, խաչերիդ կողքին բարձրացրու՛ մի մեծ ժայռ և պաշտիր՝ դա, որ աննվազ մնա սերդ դեպի հայրենի լեռները»:

Միայն ռազմագիտական չէ լեռների արժեքը: Այդ անմահ հսկաները գորացուցիչ ազդեցություն ունեն իրենց կողքին ապրողների հոգու վրա: Սրբազան անտարբերությամբ երկնքից երկիր նայող այս հսկաները անխոս խրատում են իրենց փեշերի վրա ապրող ժողովրդին, թե ինչպես պետք է կուրծք տալ ժամանակի փոթորիկներին: Գիտե՛ս ավելի հպարտ ու հմայիչ պատկեր, քան լեռան կատարը՝ իր վրա թառած արծվով: Արծիվ զինվո՞րը հայրենի բարձունքի վրա: Դա մի պատկեր է, ո-

րին չի կարելի չվերաբերվել անխառն հիացումով: Արծիվներն ու արծիվ հոգիներն են սավառնում լեռներում և ոչ ճնճողուկը:

Մայրենի լեզվի պաշտամունքը

Օտար նշանագրերի հմայքը որպես անեծք դարերով ծանրանում էր հայոց աշխարհի վրա: Հայ արքունիքին, եկեղեցուն և դպրոցին աղետալիորեն պակասում էր իր ժողովրդի խոսյան սիրտն ու միտքը մշակելու և նվաճելու կարելիությունը: Թանձր տգիտությունը և իր զանազանակերպությունները՝ սնուցիչը մեր ցեղի հոգեբանական թերությունների, կրծում էին, մաշում էին հայության հոգևոր և ֆիզիկական կազմվածքը: Քրիստոնեական վարդապետությունը, որ քարոզում էր օտար և անհասկանալի լեզուներով, ասորերեն, հունարեն, շարունակում էր մնալ որպես արտաքին մեռյալ ձև ու ծես:

Երես դարձրած իր հին աստվածներից՝ հայությունը մնում էր էապես անկրոն, զուրկ նոր աստվածության զգացումից: Հայ պետությունը ապրում էր հոգևոր անիշխանություն, քանզի իրեն պակասում էր անհատներն իրեն կապող շաղախը, որ մայրենի լեզուն է:

Որպես հեթանոս՝ գուցե և հնարավոր լիներ ապրել առանց մայրենի տպագրական լեզվի, կար հեթանոս կրոնը, կային աստվածները: Քրիստոնեության մուտքը, սակայն, ավելի ևս անհրաժեշտ էր դարձրել մաշտոցյան գյուտը: Հայ պետության ճակատագիրը վարողներն այլևս ըմբռնել էին ժամանակի գերագույն պահանջը: Պետք էին հայերեն նշանագրեր, և ահա՛ օգնության է հասնում տարոնցի կրոնավորի ստեղծագործ հանճարը: Եվ ահա ձևակերպվում են հայ տառերը, որոնց գործադրությունը հնարավոր պիտի դարձներ

կրոնական արմատական հեղաշրջումը՝ քրիստոնեության վերջնական հաղթանակը Հայաստանում:

Վաղարշապատից դուրս՝ Ռահ գետի մոտ, թագավոր և ժողովուրդ ցնծության աղաղակներով դիմավորում էին հայ լուսակրին, որ Մամոսատում իր միսթիկ հափշտակությունների և հսկումների մեջ հաջողել էր կորզել «երկնքից» հայ տառերի ձևերը, և միասնական հույսերով փութում էր հայրենիք: Հասկանալի և արդար էր հայ ժողովրդի ուրախությունն այդ օրը, քանզի իրեն տրվում էր «պրոմեթեյան կրակը», որ պիտի հալածեր ցուրտն ու խավարը հայ ցեղի կյանքից, քանզի նա կունենար մի և անբաժան հոգևոր կազմվածք դառնալու կարելիությունը. քանզի այդ օրը հայոց աշխարհում իրար էին հանդիպում հայ գրիչը, խաչն ու հայ սուրբը, հանդիպում էին, համբուրվում էին:

Այլևս կար տպագրական մայրենի լեզուն՝ զենքերի հրաշագործ զենքը, որով մեր ցեղը պիտի կարողանար դիմագրավել աշխարհակալ ցեղերի հայասպան փորձերը:

Մեսրոպյան գյուտը, սակայն, որի անդրանիկ գործը եղավ փառահեղ Ավարայրը, իր մեծ փառքի հետ ուներ և իր խոր ողբերգականությունը: Այն է, նա շատ ուշ էր դառնում հայ ժողովրդի սեփականությունը: Այլևս երևութական էր դառել հայոց թագավորությունը, որ տառապում էր հոգևոր և քաղաքական հյուծախտով: Հայությունը, կորցրած ազգային միության և միաբանության բնագոյն ու գիտակցությունը, կորցնելու վրա էր իր քաղաքական անկախությունը: Մեր երկրի բանալիները վաղուց էին հանձնված օտար դոնապաններին: Դա մի ժամանակաշրջան էր, երբ նախանձի դևով բռնված հայ նախարարները, չնչին բացառությամբ, ծառայությունն օտարին ավելի

տանելի էին համարում, քան իրար ենթարկվելը: Թշնամիների բարբարոս հարկահավաքության դիմացող հայն այլևս չէր հանդուրժում իր եղբոր մի հատիկ դառը խոսքին: Ոչ ոք էր ճանաչում իրենից ավելի ձեռնհասը, արժանավորը, մեծը: Քչերն էին ուզում հասկանալ, թե հարազատ հայրենիքում եղբոր աջակցությունը, որքան էլ որ համեստ լինի, ավելի արժե, քան արտաքին օգնությունը, որը չի տրվում ձրիաբար:

Կար երկպառակության մաշող ախտը, որը մղում էր Սահակ Մեծին իր դառնության ժամերից մեկում զարկելու հայրության երեսին՝ «Քահանայանալ ի վերայ տիրանենգ, և՛ տիրասպան, և՛ մատնիչ ժողովրդոց ոչ կարեմ»:

Կար ներքին իրարակերությունը, որ հայ կաթողիկոսին արդար ցասումով ասել կուտար. «Ի տանէ առավել քան յօտարաց բուսավ մարտ դառնության: Յովհաննէս»¹⁵:

Կար ներքին «դժոխքը», որ թելադրում էր հայ պատմագրին. «Ազգս հայոց, որք մատամբ և կամօքն յուրյանց կուրացուցին զաչս յուրյանց. զի ինքյանք կործանեցին զթագավորություն յուրյանց: Առաքել»:

Իրերի այդ անմխիթար դրության մեջ ահա՛ հայությանը տրվեց նոր հոգևոր զենքը, որից ավա՛ղ, այլևս նա չպիտի կարողանար օգտվել ցանկալի չափով:

Զգալիորեն կրճատված էին «ծայրք հայ խօսից»: Օտար ոտից կոխան էր և հայոց միջնաշխարհը, ուր անվերջ արշավանքներ էին սփռում արտաքին թշնամիները՝ հաճախ իրենց նվաճողական նպատակներին ծառայեցնելով և մերազնյա ներքին թշնամիներն: Պակասում էր խաղաղությունը:

¹⁵ «Տնից ավելի շատ, քան օտարներից բուսնեց դառն մարտը: Հովհաննէս»:
Հատվածը թարգմանեց Ա. Քանանյանը:

նը՝ մայրը պետական շինարարության ու հոգևոր մշակույթի: Հայ նշանագրերից անհրաժեշտ չափով օգտվելու կարելիություն չկար այլևս, և հենց դրանում էր մայրենի այբուբենի դրության ողբերգականությունը:

* * *

Հայ լեզուն այսօր ազգային հոգևոր ինքնապաշտպանության գրեթե միակ զենքն է, մասնավորապես տարագիր հայության համար:

Ազգային ինքնաճանաչությունը պարապ խոսք է, սին՝ առանց մայրենի լեզվի: Վաղուց ենք գիտակցել, թե լեզվի մահը դառնում է ժողովուրդների հոգևոր և քաղաքական մահը: Արդարացիորեն դատապարտում ենք օտարախոսներին, քանզի նրանց հոգիները նմանվում են պղնձի, որից հրեան գատել է արծաթը: Ընդունում ենք, թե լեզուն միակ ոսկե կամուրջն է, որ ձգված է մնում անցյալի և ներկայի միջև:

Պարզ է այդ ամենը ֆիզիկական ցավ պատճառելու աստիճան, բայց և այնպես չգիտենք, չենք ուզում իմաստնորեն օգտվել մայրենի լեզվից: Թեև հաճախ խոստովանում ենք, որ եթե հայությունը ինքզինքը չկրծեր դարերով, բարբարոսների սուրը անկարող պիտի լիներ մաշելու մեր ազգի մարմինը: Բայց և այնպես ոչինչ ենք խնայում հայությունը պահելու ներքուստ պառակտված վիճակի մեջ՝ պատրաստի որս գիշատիչ հարևանների համար:

Կարծեք ճակատագիրը լեզուների խառնակության նոր պատիժ է տվել մեզ՝ իրար չհասկանալ:

Զարհուրելի է օրվա հայ խոսքը. «Անոնց բերանը բաց գերեզման է»:

Ներքին ստեղծագործ համերաշխություն

Երբ հանրային գործիչների փոխհարաբերությունները պահում են, ժողովուրդն առնվազն անբարոյականանանում է: Պատմական իրողություն է, որ հայ ժողովուրդը դարերի իր քաղաքական տնանկությունը կը պարտի ավելի իր պետական կամ ազգային գործիչների փոխհարաբերությունների այլանդակությանը, քան երկրի աշխարհագրական դիրքին և արտաքին թշնամիների նվաճողական ախորժակներին: Այլ պիտի լինեն հայության ճակատագիրը, եթե նրա ղեկավարները ներքին իրերակերությամբ զբաղվելու փոխարեն, կռիվ հայտարարած լինեն իրենց թերությունների դեմ:

* * *

Ոչինչ այնքան կրթիչ, ազնվացուցիչ է անհատի և զանգվածների համար, որքան ղեկավարների հարաբերությունների վեհությունը: Իսկ գործիչները, որոնց հարաբերությունների մեջ տեղ չունի ազնվությունը, լռելյայն նվիրագործում են և խրախուսում են իրենց շուրջը կատարվող բոլոր տեսակի վատությունները:

Երբ մի ժողովրդի գործիչները եսապաշտ են, անհաշտ, ոչընկերական, այլևս կարիք չկա ավելի մեծ դժբախտություններ ցանկանալու նրան: Եվ միշտ էլ ժողովուրդն է, որ քավում է իր ղեկավարների մեղքը:

Հայությունը դարեր տևող ստրկությամբ, անպատում տառապանքով ու անհաշիվ զոհերով է քավել և դեռ քավում է իր անհամերաշխ գործիչների փոխհարաբերությունների այլանդակությունը:

Մեր ժողովրդի համար անեծք է և իր Օրվա գործիչների հարաբերությունները, որ խունկ չեն հոտիր:

Շա տ են հայ մարդիկ, որոնք բարոյական արիություն ունենան՝ հաճույքով խոսելու իրենց հակառակորդների և նրանց հաջողությունների մասին:

Ես մի գերեզման գիտեմ Սյունյաց աշխարհում, որի վրա տասնութերորդ դարի հայ ձեռքը խորհրդանշորեն հավերժացրել է մեր ժողովրդի և իր անձնվեր պաշտպանների գոյության ողբերգությունը: Գերեզմանաքարերի վրա քանդակված աղվեսը խեղդում է առյուծին: Դա ասել է՝ խորամանկությունը սպանում է քաջությունը, խորամանկը հաղթում է քաջին: Առաջինը Մելիք Ֆրանգյուլն է՝ ծանոթ դավաճանը, երկրորդը՝ Թորոս իշխանը՝ քաջ հայրենապաշտը¹⁶:

¹⁶ Խոսքը Սյունիքի մարզի Եղվարդ գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցու մոտ գրտնրվող տապանաքարի մասին է: ԲաճՖու «Դավիթ Բեկ» աշխատության մեջ կարդում ենք հետևյալը. «Բարգյուշատի Եղվարդ գյուղի եկեղեցու դռան հանդեպ կա մի փոքրիկ գերեզմանատուն: Այդ գերեզմանատան համարյա թե եզրի վրա այժմ գտնվում է հոյակապ շիրիմ, որ որոշվում է մյուսներից իր մեծությամբ: Տապանաքարի մեկ երեսի վրա քանդակված է մենամարտության հանդես: Մի զինակիր, մեկ ձեռքով բաց սուրը բռնած, մյուսով իր տիրոջ ձիու սանձը, կանգնել է: Փոքր-ինչ հեռու նրա տերը մենամարտում է մի հսկայի հետ: Տապանաքարի մյուս երեսի վրա արհեստավորի ֆանտազիան ստեղծել է մի այլ խորհրդավոր պատկեր: Մի աղվես, ամեհի առյուծի գլուխը իր բերանի մեջ առած, աշխատում է կլանել նրան: — Խորամանկությունը ոչնչացնում է քաջությունը: Տապանաքարի արձանագրությունը ժամանակից եղծված է: Հարցրեք. այդ ո՞ւմ գերեզմանն է: Ձեզ կպատասխանեն. «Դա Չավնդուրի իշխան Թորոսի գերեզմանն է, այն հերոսի, որ իր ամբողջ կյանքում կռվեց մեր հայրենիքի թշնամիների հետ, իսկ վերջը զոհ եղավ մելիք Ֆրանգյուլ դավաճանի խորամանկությանը»: Հետո ձեզ ցույց կտան «Նարզիզների դաշտը», ուր կատարվեցավ ողբալի պատերազմը»:



Ի՞նչ, ընթերցո՛ղ, դժվա՞ր է և այսօր մեր կյանքում տեսնել, թե ինչպես հաճախ աղվեսը «խեղդում է» առյուծին: Ինչպե՞ս, աղվեսը՝ հաղթակա՞ն, և առյուծը՝ պարտվա՞ծ... Ահա՛ թե ինչու մղվում եմ ասելու, թե ապագան բազում խաչեր ունի պահած ցեղի համար:

Ըստ հնագետ Ա. Նալբանդյանի տապանաքարի պատկերաքանդակների մեկնաբանությունը ժամանակին միգուցե միտումնավոր այլ կերպ է ներկայացվել: Նրա կարծիքով պատկերվածը ցույ է, որի պարանոցից բռնել է առյուծը: Նման տեսարանը տարածված է եղել ուշ միջնադարյան արվեստում և ունի հստակ խորհրդաբանություն: Քարի մյուս երեսին ըստ Ա. Ն.-ի պատկերված է խնջույքի տեսարան (մանրամասն տես՝ Ա. Նալբանդյան, «Թորոս իշխանի առեղծվածը»):
Լուսանկարը տրամադրելու համար շնորհակալ ենք Ս. Նալբանդյանին:

Կյանքի օրենքը

Անկախ թափածո ճիգերից դու չպիտի հասնես նպատակիդ, եթե սխալ է ընտրածո ճամփան, եթե ճամփան, որով առաջանում ես, չի տանում դեպի նպատակ:

Հերիք չէ նպատակ դնել միայն, պետք է իմաստությամբ նաև ընտրել կարողանալ դեպի նպատակը տանող ճամփան: Որքան բնական ու հեշտ է այս կամ այն նպատակի ընտրությունը, այնքան դժվար է այդ նպատակի իրականացման համար անհրաժեշտ միջոցների անսխալ ընտրությունը:

Ժողովուրդներ ու անհատներ կան, որոնք Մետերլինկյան կույրերի¹⁷ պես մոլորված տգիտության անտառում՝ շարունակում են խարխափել մթության և անստուգության մեջ, մոլոր ճամփաների վրա:

Մոլորանք ու խարխափում – ահա՛ թե երբ է ծնունդ առնում տառապանքը և հսկայական սև թռչունի պես իր ցուրտ թևերը տարածում իրենց նպատակի ճամփին մոլորված, ճամփից դուրս ընկած, ճամփան կորցրածների հոգու վրա: Այո՛, ժողովուրդները տառապել են և կտառապեն իրենց առաջնորդների անիմաստության և հոգևոր անգորության երեսից: Իսկ իմաստուն չեն այն բոլորը՝ ժողովուրդ թե անհատ, որոնք չգիտեն, թե ինչ է և ինչումն է կայանում կյանքի օրենքը: Դա բնության մեծ և անողոք օրենքն է, անփոփոխ օրենքը անհատի և ցեղերի զարգացման, որի նպատակն է՝ թույլ չտալ ցեղերին կանգ առնելու, քարանալու մի որոշ կետի վրա, այլ երթալու առաջ մինչև որ պայքարողները հասնեն մարդկային իդեալ վիճակի, երբ պա-

¹⁷ Հեղինակը նկատի ունի բելգիացի գրող Մորիս Մետերլինկի «Կույրերը» պիեսի հերոսներին:

տերազմը սպանած կլինի պատերազմը, երբ կդադարի պայքարը՝ տեղի տալով կատարելագործված և հավասարապես հարգված ժողովուրդների եղբայրության առջև:

Եղի՛ր այնպես, որ արհամարհելու փոխարեն կարողանամ հարգել քեզ – այս իմաստով պետք է թարգմանել հարձակվողի հոգեբանությունը:

Անվերջ ինքնակատարելագործում

Դժբախտ է այն ժողովուրդը, որի ղեկավարները չեն ճգնում լրացնելու բնության թերին, չեն աշխատում կատարելագործել իրենց հոգևոր էությունը: Ավելի քան դժբախտ է նա, երբ իր ղեկավարները չեն տառապում իրենց անկատարելության գիտակցությունից: Անձնական անկատարելության գիտակցությունը երկունքն է վաղվա կատարյալ ղեկավարի: Ով չի կարող իր կրքերը ենթարկել կամ ծառայեցնել իր կամքին, իր բանականության, չի կարող նաև արդյունավոր կերպով ծառայել իր ազգին:

Եղի՛ր այնպես, որ արհամարհելու փոխարեն կարողանամ հարգել քեզ, – այս իմաստով պետք է թարգմանել հարձակվողի հոգեբանությունը:

Այլ խոսքով՝ ուրիշների մեջ մենք սիրում ենք այն, ինչ որ որոշ չափով կա և մեր մեջ: Հայրենասերը ջերմ սեր ունի դեպի հայրենապաշտը: Արին սիրում է արիությունը անգամ իր հակառակորդի մեջ: Մենք սիրում ենք մեր նմանին և առնվազը անտարբեր ենք դեպի այն բոլորը, որոնք հոգեբանորեն օտար են մեզ: Դու՝ հայրենանվերդ, հոգով խորթ ես այն բոլորին, որոնք հայրենիք սիրելու, նրան զինվորելու քաղցրությունը չեն ունեցել որոշ չափով, և թշնամի այն բոլորին, որոնք չեն ճանաչում քո աստվածները:

Մեկը քո անձի մեջ տեսնում է մի բան իր հոգուց, իրենն է համարում քո հաջողությունները և լիուլի բերում իր պաշտամունքի տուրքը: Մի ուրիշը քո մեջ չի տեսնում մի բան իրենից և դրա համար էլ չի հանդուրժում քո հոգևոր լուծը, դրա համար էլ զլանում է իր հոգևոր տուրքը:

Ահա՛ թե ուր է շրջապատիդ որոշ տարրերի անտարբերության, երբեմն էլ թշնամանքի գաղտնիքը:

* * *

Բարձր չես թշնամիներիցդ, եթե վախենում ես նրանց չարախոսություններից: Մաքուր խղճի չափ ուժեղ չէ և ոչ մի վահան: Իր խղճի պաշտպանությունը վայելողը կարիք չի ունենա ուրիշների պաշտպանության:

Գիտցի՛ր ներել: Մեծ իմաստություն է դա: Ներել բոլորին, բոլորին, միայն ոչ քեզ, միայն ոչ քո թերությունները: Ների՛ր ապացուցանելու համար գերազանցությունդ անձնական հակառակորդներիդ նկատմամբ: Չափազանց ծանր բեռ է հիշաչարությունը, դու ների՛ր և անցի՛ր: Ների՛ր, քանզի հանցանքներ կան, որոնց մեծագույն պատիժը ներումն է: Եվ եթե մի օր քեզ հարցրին, թե ի՞նչ է ներումը՝ պատասխանի՛ր ծանոթ հեքիաթի կույր աղջկա խոսքերով. «Դա անուշահոտությունն է, որ արձակում է մեզ համար ծաղիկը, երբ տրորում ենք այն»:

* * *

Անվերջ ինքնակատարելագործում – ահա՛ թե ինչ պետք է լինի հանրային գործիչի կյանքը: Նա պետք է նախ մշակի իրեն համար մտապատկերը կատարյալ առաջնորդի և ապա նրա հետ ամեն օր բաղդատության դնի իր անձը:

Քաղաքական գերագույն իմաստությունը

Ժամանակն իր լեզուն ունի, որը միայն մեր ժողովուրդը չի հասկանում:

«Ես և՛ չար եմ, և՛ բարի»,– ասում է հինը փոխարինելու փութացող նոր ժամը, օրը, տարին:

«Ես հաղթություն և սպեղանի եմ բերում նրանց, որոնք հասկանանում են իմ լռությունը, մեկնում են իմ գաղտնիքները: Ընդհակառակը, նոր պարտություն ու վերքեր ունեն պահած նրանց համար, որոնք չեն հասկանա ինձ, որոնք կլքեն պայքարի դաշտը, որոնք չեն պատրաստվի նոր ճակատամարտների համար»:

«Այնպիսի մի ձևով է կնքված Լոզանի դաշնագիրը, որ իբր թե հայերը գոյություն չունեին»,– ասում է Հ. Հ. Պատվիրակությունը Ազգերի Դաշնակցությանն ուղղած իր մի գրության մեջ:

Այո՛, «ընդունելի չէ,– ասենք Կրաֆտ Բոնարի հետ, – որ գրչի մեկ հարվածով մի ժողովուրդ ջնջվի»:

Ո՞րն է այն բառը, որով կարելի լիներ որակել այն հարվածը, ինչ որ հասցրին մեր ցեղին: Վիրավորա՞նք, անարգա՞նք, նվաստությո՞ւն: Մաշված խոսքեր, որոնք ճշմարիտ հայ հոգու ամոթանքի և դառնության մի հարյուրերորդ մասն իսկ չափտի կարողանան արտահայտել:

Արևի տակ դեռ չէր տեսնվել, որ մեկը կարողանա խրոխտալ. «Ես չեմ ուզում, որ այսինչ ազգի նույնիսկ անունը հիշատակեք», մեկը, որ այս ձևով արտահայտեր իր կամքը և դա պարտադրել տար ողջ աշխարհին: Բայց գտնվեց այդ մեկը՝ երեկվա այնքան ոտնահարված ու նվաստ թրքությունը: Նա սպանեց մեր ժողովուրդը և թողեց, որ ապրի: Եվ մի օր Հ. Հ. Պատվիրակությունը, Ազգերի Դաշնակցությանն ուղղած իր գրության մեջ ավելացրեց հետևյալը.

«Լոզանի դաշնագիրը դատելու գործը պատմությանն ենք թողնում»:

Վա՛յ հայությանը, եթե մեր սերունդը չընդունի, թե իրեն է ձգված սրբելու Լոզանի արատը: Վա՛յ նրա ապագային, եթե մեր սերունդը չկարողացավ վաղն ասել թրքությանը. «Հնչե՛ց դատաստանի ժամը»:

* * *

Մեղավոր է մարդկությունը մեր հանդեպ, սակայն, անմեղ չենք և մենք: Մերն է մեղքի մեծ բաժինը, քանզի մեր ձեռքն է բանալին այն բոլոր դրությունների, որոնց մեջ կուզեինք և կարող էինք լինել, քանզի մենք ենք մեր ճակատագրի ճարտարապետը:

Օտա՛րն է մեղավոր մեր տոհմիկ թերությունների համար, որոնք միշտ էլ դյուրացրել են թշնամու գործը: Օտա՛րն է մեղավոր, որ հայն իր ձեռքով իր գլխին փլցրեց իր թագավորությունը, որպեսզի այնուհետև նստեր ու վայեր իր անկախության փլատակների վրա: Օտա՛րն է մեղավոր, որ դեռ երեկ Կարսի պատերի տակ հայ գորավարն ու զինվորը պատվավոր ու հաղթական մահից թրքական անարգ գերությունը գերադասեցին: Օտա՛րն է մեղավոր, որ դեռ այսօր էլ պատերազմի գործին ծառայող գիտությունների մեջ մեր սերունդն էլ դեռ ճանաչում է մշակույթի միայն կանացի կողմը:

* * *

Ամենից զարհուրելին պարտությունը չէ, այլ պարտվողականությունը, որով բռնված ժողովուրդը լրացնում է, կատարյալ դարձնում իր թշնամու հաղթանակը: Հասկանանք այդ: Ժողովուրդները վերջանականապես չեն պարտվում, չեն մեռնում՝ իրենց երկրամասի կեսն իսկ կորցնելով: Էականը և աղետալին մեզ համար Կարսի կորուստը չէ, այլ պարտվո-

ղականությունը՝ մայրը նորանոր պարտությունների, որի գիրկը Կարսի գրավումով մեզ նետեց թշնամին:

Պարտվողականությունը արձագանքն է թշնամու հաղթանակի ու սարսափի, որ շարունակում է ապրել պարտյալի հոգում՝ անվերջ տրորելով և ուժաթափելով այդ վերջինը: Պարտվողականությունը հոգևոր հյուծախտ է, ինքն իրեն կրծելու իսելագարություն, ինքնանվաստացումի ցավ, աստիճանական անձնասպանություն:

Այդ զարհուրելի ախտով տառապող ժողովրդի մեջ իր ամենալավ ուժերը մնում են թմրած վիճակում, եթե չմեռան: Թուրքը գիտե, իսկ մենք չենք ուզում հասկանալ, որ ցավի ամեն մի արտահայտություն, հառաչանքի ամեն մի պոռթկում, արցունքի ամեն մի կաթիլ ուժաթափում է մեր ցեղի ֆիզիկական և հոգևոր կազմվածքը՝ տկարացնելով մարդն ու մարտիկը հայու մեջ:

Թուրքն ուզում է, իսկ հայ պարտվողականը աշխատում, որ խորտակվի մեր ցեղի և՛ բարոյական ողնաշարը, որ մեր պարտությունը լինի վերջնական: Նայում ենք բաց աչքով, բայց չենք տեսնում, թե ի՞նչ է դառնում մեր շուրջը: Պարտված ենք ու պարտվողական, և ահա՛ ազգերը սկսել են արհամարհանքի աչքով դիտել մեզ: Նրանք սկսել են ավելի թերություններ տեսնել մեր ժողովրդի վրա, քան որ ունի նա: Նրանք փորձում են մեր ուսին բեռցնել համբավներից վատթարագույնը:

Այսօր մեռյալ սիրո աչքով են դիտում մեզ և մեր օտարագրի սակավաթիվ բարեկամները: Նրանք, հիմք ունեն այսպես մտածելու, մի օր պիտի լքեն հայ դատը, եթե հայությունը չկարողանա արդարացնել նրանց բարեկամությունը:

– Թուրքն սկսել է իր սեփական թևերով թռչելու փորձեր կատարել, իսկ դո՞ւք,– վերջերս ասում էր ինձ մի օտարագրի հայասեր,– դուք պիտի կարողանա՞ք հաղթական վստա-

հուրյամբ ասել նրան. «Թեկուզ արծվի պես բարձրանաս և քո բույնդ աստղերի մեջ դնես, քեզ անկէ պիտի իջեցնեմ»:

– Այո՛, – եղավ իմ պատասխանը:

– Երաշխի քը:

– Ցեղային բարոյականը, որով այսուհետև ապրելու և առաջնորդվելու ուխտն ունի նոր հայր:

Եղի՛ր ահաբեկիչ

Վա՛յ այն երկրին, որի որդիները պայքարի են մտնում հայրերից թողնված զենքերով: Պարտությունն է նրանց բաժինը: Ապրում ենք Արևելքում, շրջապատված հայակեր բարբարոսներով, որոնց ավերիչ թնն ու թափը տկարացնելու համար նրանց վառ երևակայությունը ահաբեկել պետք է կարողանանք: Ի՞նչ է այդ ահաբեկիչ ուժը: Սարսափը՝ զենքերից մեծագույնը, որ մեր ձեռքը պետք է տա նորագույն գիտությունը:

Ի՞նչ կլիներ, եթե մեր ժողովուրդն իր ինքնապաշտպանության գործին լծած լիներ գիտությունը, եթե հարյուր հայ մտավորականներից մեկը լիներ հրարվեստագետ կամ զինվորական քիմիագործ:

Մեր ազատագրական պայքարը մեզնից խլած պիտի լիներ հարյուր անգամ պակաս զոհեր և մեր պատմության վերջին էջերը կլինեին նվազ չափով ամոթալի և սև: Թրքությունը մեծ և անպարտելի է թվում հային, որովհետև հայ մարդը զոհ է ստրկական վախի: Սակայն, թող հայը փորձի ոտքի կանգնել, թող ճգնի իր հայրենապաշտությանը միացնել զինվորական հրարվեստագիտության և քիմիայի ահավոր ուժը, այն ժամանակ ահաբեկված հայը կդառնա ահաբեկիչ:

Եղի՛ր ահաբեկիչ, ահա՛ մի ուրիշը ցեղային բարոյականի պահանջներից:

Նոր զենքը

Թրքությունը պատժելու մի հատիկ միջոց գիտեմ ես՝ նրան, հակառակ իր կամքին, դարձնել մեր փրկիչը: Այդ միջոցը ուրիշ բան չէ, բայց եթե գերազանցել նրան ռազմարվեստագիտաբար և հոգեբանորեն: Այսպիսով մենք ապահոված կլինենք երկու բան. առաջինը՝ մեր փրկությունը, երկրորդը՝ թրքության պատիժը: Այո՛, ա՛յս ճամփով, այլապես պիտի շարունակենք մեզ մահ սպառնացող թշնամու ոտքն ու ձեռքը սարդոստայնով կաշկանդելու միամիտ փորձեր կատարել: Կա գլխովին կորչելու վտանգը, և հայությունը հրամայողաբար պետք է դառնա ինքնապաշտպանունակ: Իսկ դրա համար նա խորապես պետք է գիտակցի, թե անբարոյականություն է չձգտել տիրանալու գիտություններին, երբ և՛ սուր կարիք, և՛ հնարավորություն կա:

Իսկ դրա համար պետք է դադարել պատերազմի գործին ծառայող արվեստներից օգտվելուց այնպես, ինչպես կույրը լույսից է օգտվում:

«Բնությունը շանթեր է արձակում մարդու անպաշտպան տնակի դեմ, և մարդը հնարեց շանթարգելը»:

Թրքությունը մահվամբ է սպառնում մեր ցեղի մնացորդին, և հայությունը, ցեղային բարոյականից հրահրված, պետք է հնարի իր «շանթարգելը», պետք է զինվի պատերազմական քիմիայի և հրարվեստագիտության ահավոր ուժերով: Այլապես, հայ ժողովուրդը մահվան է դատապարտված:

* * *

Քիմիական լիակատար սպառազինություն – ահա՛ ազգերի Օրվա կարգախոսը:

Քիմիական ներգործոն պաշտպանողական – ահա՛ թե ինչի կարիքը վաղը պիտի զգա Հայաստանը, և ինչը, որպես գի-

տություն և արվեստ պետք է յուրացնի մեր սերունդը: Վաղը պիտի հաղթի քիմիագիտական և ոչ թե թվական գերագանցություն ունեցողը:

Ասել է՝ հայությանը կմնա ապացուցել, որ ինքը որպես իմացականություն ավելի գորավոր է, քան իր թշնամին:

VIII ՆՈՐ ՀԱՅՇ

Կա արտաքին վտանգը՝ հիշի՛ր պատերազմը. կա և այդ վտանգը զինաթափել կարողանալու, այդ վտանգին հաջողությամբ դիմագրավ լինելու խնդիրը. կա ուրեմն կարող և իմաստուն առաջնորդի և առաջնորդության պահանջը: Ամեն մի ժողովրդի մեջ կա առյուծը նիրհած վիճակում՝ ցեղի ուժը: Կարող առաջնորդը նա է, որ գիտի արտաքին վտանգի ժամանակ իր ժողովրդի մեջ արթնացնել այդ առյուծը: Եթե ժողովուրդները, մասնավորապես մեծ վտանգների ժամանակ սպասում են մի հրաշագործ փրկչի, ապա իմաստուն ժողովրդավարը, զանգվածների հոգեբանությանը ծանոթ առաջնորդը միշտ էլ հաշվի է առնում ժողովրդի խորհրդապաշտությունը և ըստ այնմ կազմակերպում է նրա փրկության գործը:

Ուժեղ իմացականություն, մեծ և բոլորանվեր ծառայություն – ահա՛ իրական առաջնորդը: Նրա ներկայությունը ազնվացնում է հոգիները, թնավորում, գոտեպնդում: Նրա շնորհիվ անկարելի համարվածը դառնում է դժվարին միայն, դժվարինը՝ կարելի: Շքեղ երազները դառնում են նպատակ և երջանիկ իրականություն:

Պիտի գա, դեռ պիտի հայտնվի նոր հայր որպես ազգային ղեկավար՝ զինվորականի, պետական մարդու և մշակութա-

յին գործիչի դերերում: Նա կգա, կհայտնվի նոր էությանը, գերծ հին թթխմորից, ազատ դարավոր ստրկության ախտերից՝ որպես ցեղային նոր բարոյականի մարդ:


Անձնական երջանկության վարդապետությունը – ահա՛ թշնամին մեր ցեղի հավաքական երջանկության: Այդ կարգախոսով նոր հայր ձեռնոց կնետի մեր ցեղը մաշող հին բարոյագուրկ հասկացողություններին:

Ազգերի մեջ միայն ճապոնացին է ասել. «Եթե խորապես գիտակցենք, որ սերը դեպի հայրենի երկիրն ու ժողովուրդը ավելի մոտ է կանգնած մեծ ու գեղեցիկ արևին, քան մեր հայրենիքի ամենաբարձր լեռները, այն ժամանակ մահը մեզ համար թոչունի փետուրից էլ թեթն կթվա»:


Այսպես պետք է լինի վաղվա հայը, այսպիսի բարոյականով առաջնորդվող հայությունը միայն կարող է ապահովել հայ ազգի տեղն արևի տակ:

«Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, 1930 թ., մայիս, հունիս, թիվ 5472-5478, 5480-5501

ՎԵՐՋ



ԽՈՒՍՏՈՒՓՅԱՆ ԿԱՆՉԵՐ¹⁸



Ճապոնացու արևոտ սիրով սիրի՛ր Հայրենիքդ և ամեն օր
որպես աղոթք կրկնի՛ր ճապոնական կայսրի խոսքերը.

«Եթե խորապես գիտակցենք, որ սերը դեպի հայրենի եր-
կիրն ու ժողովուրդը ավելի բարձր է կանգնած Մե՞ծ ու գեղե-
ցիկ Արևին, քան մեր հայրենիքի ամենաբարձր լեռները՝ այն
ժամանակ մահը ամեն մեկիս համար թոչնի փետուրից էլ
թեթև կթվա»:

- ՀՐԱՄԱՆՆԵՐ
- ԿՈՉԵՐ ՂԱՓԱՆՑԻՆԵՐԻՆ
- ՅՈԹ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐ ԻՄ ԶԻՆԱԿԻՑՆԵՐԻՆ

¹⁸ Գրքույկով տպագրվել է Գորիսում, 1921թ.:

ՀՐԱՄԱՆՆԵՐ

1919, 23 հոկտ., Լիճք

ՀՐԱՄԱՆ

Ղափան-Գենվազ-Գողթանի ռազմական ուժերին

Բուլղարական զորքի մեջ կա մի գեղեցիկ սովորություն, այն է՝ զինվորների անվանացուցակների ստուգման ժամանակ, նախ հիշատակել իրենց երկրի ազատագրության ճանապարհին ընկած հերոսների անունները: Երբ ստուգողը տալիս է այդ նվիրական անունները.

«Ընկան»,– պատասխանում է զորաշարքի աջ թևի առաջին զինվորը:

«Փառք»,– կրկնում է աջ թևի երկրորդ զինվորը:

«Հավե՛ր թժ փառք»,– ավելացնում է ամբողջ զորաշարքը:

Ազգային նահատակների անունների ամենօրյա հիշատակումը զինվորների մեջ ստեղծում է բարոյահայրենասիրական բարձր տրամադրություն՝ ընկած նահատակների հավատարմությամբ ու անձնվիրությամբ ծառայելու ու քաջորեն մեռնելու իրենց հայրենիքի համար:

Հրամայում եմ Ղափան-Գենվազ-Գողթանի զորամասերի պետերին՝ որդեգրել այդ գեղեցիկ սովորությունը և ամենօրյա ստուգումների ժամանակ հարգել մեր ցեղի ընտիր որդիների խնկելի անունները՝ Քեռի, Խեչո...

Ղափան -Գենվազ-Գողթանի
ռազմական ուժերի հրամանատար՝ ՆՇԴԵՇ
1919, 30 նոյեմբեր, Ղափանի հանքեր

ՀՐԱՄԱՆ

Ղափան-Գենվազ-Տաթևի գործառնական

Զինվորներ, թշնամու ցանկությամբ սկսվում է մեր արշավանքը, մեր խաչակրաց արշավանքը Գեղվա Ձորի դեմ:

Վաղը, երբ ձեր խենթ գրոհներից և զարկերից թշնամին շշմած կթողնի իր գյուղերը, ձեզ կողջունեն մեր հինավուրց, այսօր թշնամու կողմից պղծված բերդերի և վանքերի ավերակները:

Վաղը, երբ այդ ձորում կլսվի ձեր ոտների ձայնը, ձեր զենքերի շայունը, հայ գերիները, Քեյֆաշենիբեգերի շնաբարո կրքերի առարկան դարձած հայ կանայք ծնկաչոք կաղոթեն ձեր զենքի հաջողության համար:

Վաղը, երբ քաջերդ Աջիբաջ հասաք, հիշե՛ք Խալիլբեգյան սև օրերը, երբ այս գյուղի մոտ թշնամին բարբարոսաբար մորթոտեց երկու հազարի չափ օսմանյան սրից ճողոպրած հայ կին ու երեխաներ: Ասում են, այժմ այնտեղ մի ամբողջ ձոր լիքն է կմախքներով, գանգերով, ուր հաճախ հյուր են գալիս Գեղվա Ձորի շներն ու գիշատիչները:

Հիշե՛ք այդ և եղե՛ք անխնա ձեզ դիմադրողների նկատմամբ, ասպետ և մարդ եղե՛ք կանանց, երեխաների և ծերերի նկատմամբ:

Ուրեմն, հառա՛ջ, մեզ հետ Աստված և Դավիթ-բեգի վրիժակ հոգին:

Ղափան-Գենվազ-Գողթանի
ռազմական ուժերի հրամանատար՝ ՆՏԴԵՀ

1920, 17 Հունվար, Ղափանի հանքեր

ՀՐԱՄԱՆ

Ղափան-Գենվազ-Գողթանի ռազմական ուժերին

Զինվորներ՝ ր, անհաշտ թշնամին նորից մեզ իր ձեռնոցն է նետել:

Վերցնենք առանց տատանումի: Օրեր առաջ իմ արևմուտքյան ուժերի խենթ հարվածներից ընկավ անառիկ Գեղվա Ձորը: Օրեր անց՝ Ձեր նույն Գեղվաձորյան թափի և կրակի առաջ պիտ ընկնի Որոտանի աջ ափը:

Այնտեղ՝ Գեղվա բարձունքներում և ձորերում, մեզ գորավիզեց Դավիթ-բեգի վրիժավառ ստվերը, այստեղ՝ Որոտանի ճակատում, մեզ կառաջնորդի Թորոս-իշխանի հայրենանվեր հոգին: Յոթ բարձունք ունի այս ճակատը, հպարտ բարձունքներ, որոնց տիրելու մեջ, որոնց վրա է մեր փրկությունը: Ով տիրեց այդ լեռներին, նա է տերը Չանգեզուրի: Ուրեմն հառաջ, իմ յոթն անգամ սիրած և քաջ ղափանցիներ, հառաջ դեպ այդ բարձունքները, դեպ Քյափագ, Ային-դաղ, դեպ Հարթիզ:

Մեզ հետ Աստված և մեր պատերազմական բախտը, հառաջ:

Ղափան-Գենվազ-Գողթանի ռազմական
ուժերի հրամանատար՝ ՆՏԴԵՆ

1920, 12 փետր. ժամը 7-ին, Ղափանի հանքեր

ՀՐԱՄԱՆ

Ղափան-Գենվազ-Գողթանի ռազմական ուժերին

Զինակիցներ՝ ր, հասել է օրը, անօրինակ հերոսությամբ ավելի քան երկու տարի ամենադժնդակ պայմաններում Չանգեզուրի նախադուռը պաշտպանող այն մի բուռն ժողովրդի

փրկության օրը, այն քաջանուն ժողովրդի, որն ամիսներ առաջ խորապես գիտակցելով իր շրջանի ռազմագիտական խոշոր նշանակությունը, բացճակատ հայտնեց մեզ իր որոշումը՝ «Գողթանը կը մեռնի՛, բայց չի՛ գաղթի»:

Հասել է ժամը, երբ երկու մեծ ու ընտիր Հայորդիների՝ Աստվածաշունչ Քրիստափորի և Ռոստոմի արյունաներկ ու սրբապղծված ծննդավայրերը՝ երբեմնի չքնաղ Ագուլխները, պիտ վերագրավեն, պիտ վերականգնվեն իրենց շենությանը ու բարոյական մեծությամբ:

Լսե՛ք, հնչել է ժամը, զինակիցնե՛ր, երբ վախկոտ եղիֆների տմարդ սրից զարնված հազարավոր անթաղ մեռելները ձեզնից արդար ու արյունոտ հատուցումն են պահանջում:

Լսե՛ք և հարյուրավոր գերված ու լլկված հայ կանանց, որոնք ձեր գոռ արշավի և ուռաների սպասումով, ձեզ հերոսության են կանչում:

Լսե՛ք և ինձ՝ ձեր ղեկավարին, որը ձեզնից ծուխ, թշնամու գյուղերի հրդեհն ու քաղցր ծուխն է պահանջում, այն փրկարար ծուխը, որն այնքան բարձր ու առատ բարձրացրիք և՛ պատմական Որոտանի ամերում, և՛ Գեղվա Չորերում:

Լսե՛ք, իմ քաջ ու հայրենանվեր զինակիցնե՛ր, լսե՛ք, լցվե՛ք բոցով ու վրեժով, առե՛ք զենքներդ ու հառա՛ ջ:

Հառա՛ ջ, մեզ հետ Աստված և մեծ Հայորդիների՝ Քրիստափորի և Ռոստոմի անհանգիստ հոգիները: Հառա՛ ջ:

Ղափան-Գենվազ-Գողթանի
ռազմական ուժերի հրամանատար՝ ՆԺԴԵՀ

1920, 13 Հունիս, Ղափանի հանքեր

ՀՐԱՄԱՆ

Ղափան-Գենվազի ռազմական ուժերին

Ղափանցիներ ենք մենք, և դա նշանակում է, որ էն մեր խենթ հարվածներից ընկան Օխչու ու Գեղվա անառիկ ձորերը, որ էն մեր գոռ ուռան մաքրեց Որոտանի և Հաքարվի ավերը. որ էն մենք ենք, մենք, որ յոթն անգամ ուժեղ, մահից էլ ուժեղ գիտենք ատել մեր դարավոր թշնամուն և Յոթն անգամ չէ, կյանքից ավելի ուժեղ սիրել մեր հայրենի հողը...

Ղափանցիներ ենք մենք, և դա նշանակում է, որ էն մենք էինք, որ մահաշունչ ձմեռվա կեսին, երբ քաղցած ու թափառ գայլն անգամ սարսափով էր մոտենում Ղափուջուղին՝ Ղափանի այդ փոքր Մասսին, մենք մեր հոգու կրակով հալեցրինք ձյուները, մեղմացրինք բնության արհավիրքը և Գողթան իջանք՝ հանուն Քրիստափորի սրտից զարնված նյութական ծննդավայրի՝ թշնամու գյուղերի սև ու թանձր ծուխը բարձրացնելու...

Ղափանցիներ ենք, և դա նշանակում է՝ որ մեր հպարտ ու փառքի մեջ կորած դրոշակի վրա հարյուրից շատ ավելի ավերված թշնամու գյուղերի անուններ կան, որ մեր կորյունները կանոնավոր, թե անկանոն ուժերի դեմ, մի ձև, միայն մի ձև են ունեցել՝

«Հուռա՛, Հառա՛ ջ, հրդե՛հ»:

Զորավիզ ունենալով Աստծուն ու մեր ընտիր ռազմիկների՝ Դավիթ-բեգի ու Թորոս-իշխանի հայրենանվեր ու վրիժակ հոգիները ղափանցիներ ենք մենք միշտ հաղթող ու անապարտ:

Ղափան-Գենվազ-Գողթանի
ռազմական ուժերի հրամանատար՝ ՆԺԴԵՀ

թեղանցրել է 1995.05.05 հայտ

ԿՈՉԵՐ ՂԱՓԱՆՑԻՆԵՐԻՆ

I

ՂԱՓԱՆՑԻՆԵՐ

Քո մի մասի վախկոտության ու դավաճանության շնորհիվ թշնամին մտավ Ղափան և քո ուզմական ուժերի ամենաքաջանուն ու խիզախ մասը, կրակելով իր վերջին փամփուշտը, քաշվեց լեռները: Յոթն օր է, շա՛տ կարճ ժամանակ, ինչ քեզ արժանի թշնամին իշխում է քո երկրում, և լուրերը թե առած գալիս, հասնում են ինձ, որ դու շատ տեղ արդեն աղ ու հացդ ես պղծում, ինքդ գնում ու եկողի փեշը բռնած՝ գյուղդ ես քաշում: Զգո՛ւյշ, Ղափա՛ն, մեռցնելով իմ հավատը դեպ քո հավատարմությունը, դու քեզ ես մեռցնում: «Իջի՛ր, իջի՛ր լեռներից», - դավադրաբար կանչում է թշնամին:

«Իջի՛ր», - հիմարաբար կրկնում ես դու: Եվ քո ապստամբ մարտիկներից շատերը թողնում են լեռները: Զգո՛ւյշ, էլի զգո՛ւյշ, թողնել լեռները նշանակում է անարգ մահ գտնել ձոր ու ծմակներում:

Հեռո՛ւ, հեռո՛ւ, որոնք հեշտությամբ քո գերեզմանը կարող են դառնալ: Լսի՛ր և մի՛ մոռանա մնալ լեռներում, սարերի վրա, դափանցի՛նէ՛ր, նշանակում է լինել ապստամբ: չիջնել լեռներից նշանակում է չճանաչել անկոչ եկողների իշխանությունը ու սանձահարված պահել նրանց:

Ա՛հ, ո՞ւր եք, ո՞ւր, իմ երեկվա ուխտված զինվորնե՛ր, Գեղվաձորյան հպարտ փառակիցնե՛ր: Ո՞ւր եք: Ձորերո՞ւմ: Վա՛յ ձեզ, իմ սիրտն արևոտվում է ձեզ համար՝ տեսնելով, թե ինչպե՛ս թշնամին ձեր անփառունակ գերեզմանն է փորում:

Դո՛ւրս, դո՛ւրս արեք ձորերից: Դո՛ւրս ծմակներից, միանալու Դավիթբեգյան հզոր ուխտին:

Դո՛ւրս դեպ ինձ, դեպ լեռնե՛րը:

Ի՞նչ, չլինի թե որոշել եք մեր՝ ձեզ հետ միասին ձեռք բերած ամբողջ փառքը թողնելու մենակ մեզ՝ լեռները քաշված ապստամբներիս: Այո՞, է՛հ, թող այդպես լինի:

Հրամանատար՝ ՆԺԴԵՀ
1920, 12 սեպտ., Խուստուփյան լեռներ

II ՂԱՓԱՆՑԻՆԵ՛Ր

Ես, Դավիթբեգյան ուխտին հավատարիմ, շարունակում եմ մնալ քո լեռներում, ամպերի տակ, մենակ, վիրավոր ու ավելի հպարտ, քան էի:

Ա՛յժմ ես լիզում եմ քո և թշնամու ինձ հասցրած վերքերը և սպասում քեզնից խնդրածս վարպետին, որ գա, շուտ գա՛ կոպիտ գործիքներով հանելու իմ աչքերը, կուրացնելու ինձ, որ չտեսնեմ քո գլխին գալիք գուլումները, քո խայտառակությունը, քո բարոյական անկումը:

Դու արեցիր այն, ինչ ուզում էր թշնամին: Նա գոհ է քեզնից, անչափ գոհ, բայց գիտե՞ս, Ղափա՛ն, թե որքան ուժեղ է նա ատում և արհամարհում քեզ: Դու քո վիրավոր, սրտից զարնված հրամանատարին ես դավաճանել, մենակ թողել:

Գիտակցո՞ւմ ես, չափու՞մ կատարածդ տմարդության անչափելի մեծությունը: Ա՛ռ, հետ առ ինձնից քո տված անունները՝ «Երկրորդ Դավիթ-բեգ», «Աժդահա-Փաշա», «Ամեն կովում Փաղիշախ»: Այդ անուններով դու կաշառեցիր, խաբեցիր ինձ, որ այսօր ինձ մենակ թողնես: Ինչո՞ւ են ուշանում քո լրտեսները, քո ահաբեկիչները: Աղբբեջանը հոգնեց իմ գլխին սպասելուց, փոքրիկ գումար չէ երեք միլիոնը: Ստացի՛ր և գործի՛ անց:

Հրամանատար՝ ՆԺԴԵՀ
1920, 15 սեպտ., Խուստուփյան լեռներ

Ժողովո՛ւրդ, քեզ հետ խոսողը քո հրամանատարն է, քո վիրավոր սրտից զարնված հրամանատարը, որի սուրը վաղուց է, ինչ հանուն քո ինքնապաշտպանության չի հանգըստացել պատյանում:

Լսի՛ր, մի ավելորդ, գուցե և վերջին անգամ նա դիմում է քեզ, խոսում է քեզ հետ: Նա ասում է.

– Քո սև ու նեղ օրերին, երբ հայակեր Գեղվա և Օխչիի ձորերը, երբ Բարգուշատի և Հաքցարու մեջ սպառնացել էին քո կին ու երեխաների արյունով քո երկիրը ներկելու, դու կանչեցիր ինձ, և ես հասա քո կանչին: Ասա՛, ժողովո՛ւրդ, այն օրերից քո երկիրը մնա՞ց մի բարձր սար, մի քար, որի վրա ես դրած չլինեմ իմ հոգնած գլուխը: Ասա՛, դու ինձ տեսա՞ր մի օր, մի ժամ անհոգ, հանգիստ: Դու ինձ տեսե՞լ ես փափուկ տեղաշորիս, հարուստ սեղանների շուրջը: Դու լսո՞ւմ ես, քարերը, քարերը աղաղակում են, ասում՝ ո՛չ: Ասա՛, մնա՞ց մի բան, որ խնայեի, չզոհաբերեի քո ազատության, քո փրկության, քո փառքի համար: Քո դաշտերում, քո հողի վրա իմ արյունն է թափվել: Դեռ չի փակվել թշնամու ինձ հասցրած վերքը, իսկ քոնը, ժողովո՛ւրդ, քո հասցրածը միշտ թարմ պիտի մնա ու հազար վերքերի ցավով պիտի մորմոքա:

Ժողովո՛ւրդ, այսօր, երբ աղբբեջանյան դրամներով կաշառված բոլշևիկները՝ քո գերեզմանափորները, կեղծ ու պատիր խոստումներով քո դուռն են բախել և քո ձեռքով պղծած աղ ու հացիդ են սպասում, դու դավաճանաբար լքում ես, մենակ թողնում քո հրամանատարին: Այդ հերիք չէ, քո լրտեսներն ու ահաբեկիչները իմ գլուխն են փնտրում երեք միլիոնով Աղբբեջանին ծախելու: Ապերա՛խտ ժողովուրդ: Քանի՛, քանի՛ անգամ քո

կինն ու երեխան կռիվներից վերադառնալիս փաթաթվել են ձիուս վզով, համբուրել ձեռներս՝ «Փաշա ջան» կանչելով: Քանի՛, քանի՛ անգամ փրկել եմ քեզ վերահաս վտանգից, կոտորածից: Ի՛նչ շուտ մոռացար իշխան Ղազարին, որի գորքերին պատերիդ տակից եմ քշել, վա յ քեզ, ժողովուրդ, ի՛նչ պատասխան պիտի տաս աստծուդ, խղճիդ, պատմությանը: Ժողովուրդ, կանցնեն օրեր, թշնամին քեզ զինաթափելուց, ղեկավարներիցդ զրկելուց հետո, երբ այլևս չի լավի «Աժդահա Փաշա» անունը, կսկսի հազար ձևով ու ճանապարհով բնաջնջել քեզ: Այն ատեն դու կվերհիշես քո հրամանատարին, որի սուրը յոթն անգամ մեծացրել էր քո երկիրը և քեզ համար բացարձակ ապահովություն ստեղծել, այն ժամանակ հայացքդ կբարձրացնես Խուստուփին ու նրա կատարին նստած սև ամպերին, կնայես, կկանչես, բայց հրամանատարիդ փոխարեն սարերիդ, ձորերիդ թույլ արձագանքը կպատասխանի քեզ: Գուցե մի օր էլ թշնամուց հալածական՝ սարերն ընկնես ու թափառումներիդ ժամանակ հանկարծ մի թփի տակ, մի ժայռի վրա իմ սատած դիակը գտնես, ծունկի գաս ու արյուն լացես:

Ժողովուրդ, ինձ լքելուց, ինձ դավաճանելուց առաջ զլացար իմ խնդիրը կատարել: Դու չուղարկեցիր վարպետներիդ բութ գործիքներով հանելու իմ աչքերը, կուրացնելու ինձ, որ չտեսնեմ քո գլխին գալիք գուլումը, քո բարոյական անկումը: Ներում եմ, թեև պատմությունը չի ների քեզ, և խնդրում, երբ ինձ սպանված տեսնես, դիակս թաղիր Խուստուփի ամենաբարձր կատարին, որտեղից երևա ինձ և՛ Կապանը, և՛ Գենվազը, և՛ Գողթանը, և՛ Գեղվաձորը: Իսկ մինչ այդ, հայացքդ մի կտրիր Խուստուփից: Որքան հաճախ, որքան շատ նայես այդ սեզ ու սև ամպերով ծածկված սարին, այնքան շուտ կգա, կհասնի փրկությունդ:

Աստված և իմ սերը քեզ հետ, ապերա՛խտ ժողովուրդ:

Հրամանատար ՆԺԴԵՀ

1920 սեպտ. 17 Խուստուփյան լեռներ,

IV

ՂԱՓԱՆ

Դու ինձ լքեցիր, մենակ թողեցիր: Սակայն իմ պատերազմական բախտը, իմ Աստվածը մնաց ինձ հետ, և ես ամբողջ ամիս է, ինչ աննախընթաց հաջողությամբ ջարդում եմ թշնամուն՝ հերոսական Գենվազի ռազմաճակատներում:

Չգիտեմ, Ղափա՛ն, դու հաշտվե՞լ ես քո դրության հետ, թե՞ ոչ, բայց հայ ժողովուրդը ցավում է, անտեսելիորեն ցավում և ավստսում, որ դու միամտորեն վիզդ թշնամու ծանր լծի տակ պարզեցիր և ծով փառքդ, փառքի մեջ կորած անունդ աշխարհի չորս քամիներին տվիր: Այն օրեն, քո անկման այն սև օրեն, Ղափա՛ն, քուն ու դադար կորցրած, սար ու քար ընկած, մի քանի հարյուր ինձ հավատարիմ մնացած գենվազցիներով կուրծք եմ տալիս թշնամու գերադաս ուժերին ու քո կորցրած փառքի փոխարեն նորն ստեղծում քո երկրի, քո անունի համար: Ղափա՛ն, զոջո՞ւմ ես արարքիդ համար: Ի՞նչ եղավ Ադրբեջանին ծախված հայ սրիկաների քեզ խոստացած արքայությունը: Խե՛ղճ ժողովուրդ, ասում են՝ արդեն զինաթափել, գլխատել, տնտեսապես քայքայել են քեզ: Ա՛հ, դեռ ի՞նչ ես տեսել: Սև օրերդ դեռ չեն հասել, բայց գալիս են և շուտով կհասնեն թաթար զորքերի հետ:

Ոտքի՛, խաբված ժողովո՛ւրդ, ոտքի՛ ել, փրկությունդ մոտ է:

Ոտքի՛, զենքը ձեռքիդ, կազմ ու պատրաստ ինձ սպասի՛ր Խուստուփից:

Հրամանատար՝ ՆԺԴԵՀ

1920, 5 հոկտ., Խուստուփյան լեռներ

ՅՈԹ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐ ԻՄ ԶԻՆԱԿԻՑՆԵՐԻՆ

1. Քաջերին, միայն քաջերին է լսում և զորավիգում պատերազմների քմահաճ Աստվածը: Վախկոտներն իզուր են կանչում նրան: Խուլ է նա նրանց համար:

2. Նա է միշտ հաղթում, որը արդեն հաղթել է իրեն, այսինքն՝ որն իր մեջ մեռցնելու չափ թուլացրել է մահվան երկյուղը:

3. Նրանք, որոնք ծառայում են բարձր հայրենասիրությունից, կամ փառասիրությունից դրդված, միայն նրանք են ավելացնում իրենց զենքի ու ցեղի փառքը: Հենց այնպես ծառայել, ծառայել, որովհետև պահանջում են, կամ ստիպված ես մի գույզ ուսադիրներ կրել մի կտոր հացի համար, նշանակում է դատապարտված լինել կատարելու սովորական մահկանացուի հատուկ ամենաաննշան ու անփառունակ գործեր:

Վա՛յ քեզ, բանա՛կ, եթե նմաններով հարուստ են շարքերդ:

Ունեցի՛ր բոլոր մարտական առաքինությունները, բայց մի՛ մոռանար, որ առաջինը, առանց որին պատերազմների քմահաճ Աստվածը քեզ քիչ անգամ կժպտա, դա խիզախությունն է:

4. Քեզ վրա նայիր որպես դատապարտվածի, որը հանուն իր երկրի ու ժողովրդի պաշտպանության պիտ միշտ պատրաստ լինի ընդունելու մահը:

5. Եղի՛ր խիզախ, խստաբարո ու չարքաշ: Հատկությունների այդ բարձր երրորդությունը քեզ կմոտեցնի կատարյալին:

6. Երկար ու լուրջ տքնությամբ մեռցնելու աստիճան թուլացրո՛ւ քո մեջ մահվան վախը և դու չես մնա առանց փառքի, պատմությունից դուրս:


7. Ճապոնացու արևոտ սիրով սիրի՛ր հայրենիքդ և ամեն օր, որպես աղոթք, կրկնի՛ր ճապոնական կայսրի խոսքերը.

– Եթե խորապես գիտակցենք, որ սերը դեպի հայրենի երկիրն ու ժողովուրդը ավելի՛ բարձր է կանգնած մեծ ու գեղե-

ցիկ Արևին, քան մեր Հայրենիքի ամենաբարձր լեռները, այն ժամանակ մահը ամեն մեկիս համար թոչնի փետուրից էլ թեթև կթվա:

Հրամանատար՝ ՆԺԴԵՀ

ՎԵՐՋ



ՀԱՎԵԼՎԱԾ¹⁹



¹⁹ «Հավելված» բաժնում տեղ են գտել հատվածներ Նժդեհի «Դաշնակցության պանթեոնը» հողվածաշարից («Ժայռ», Ալեքսանդրապոլ, 1917 թ., թիվ 1, 2, 4, 5, 6, 7, 8, 9, 19; նույն թվականին տպագրվել է նաև առանձին գրքույկով), ինչպես նաև «Ռազմիկը չէ մեռնում» ձեռագիրը, որ գրվել է բանտում: Ի դեպ Նժդեհը հեռանում է Դաշնակցությունից 1937 թ., իսկ 1938 թ. ՀՅԴ 13-րդ ընդհանուր ժողովը նրան արտաքսում է կուսակցությունից:

Խոկում էր Արարիչը Փառապսակ Խեչոյին²⁰

Իզուր սպասեց երկնքի դարպասների մոտ պահակող հրեշտակը՝ չերևաց տիեզերքի Արարիչը: Այդ օրը, ինչպես ամեն առավոտ, Նա չմոտեցավ երկնքի դռներին՝ նորագարթ երկրի ադաթքը լսելու: Եվ առաջին անգամ օրը բացվեց առանց արշալույսի, որովհետև այդ օրը Աստված չժպտաց մեր երկրին:

Այդ ժամին իր գահի մոտ միայնակ խոկում էր Արարիչը, և տխուր էր Նա, տխուր, ինչպես լուրթյունը Արարիայի ավազուտ անապատների:

– Նոր աշխարհների ծնունդն է երկնում մեր Տերը,– երկյուղածությամբ շնչում էին Արարիչին շրջապատող քերովբեները, և մռայլ էին նրանք, ինչպես երկնքից արտաքսված իրենց երբեմնի ապստամբ ընկերը:

– Եվ ինձ թվում էր,– խորհրդավոր լուրթյան մեջ լսվեց Արարիչի ձայնը,– ինձ թվում էր, որ դեպ Հավիտենականությունը դիմող վայրկյանների ու հազարամյակների անվերջ քարավանները միշտ բեռնավորված են եղել արարածներիս նրբահյուս օրհներգներով. որ և՛ մարդ, և՛ սողուն, և՛ թուփ, և՛ թռչուն, որ ամեն մի արարած ամեն ժամ գոհություն շնչել ու իմ անունն է օրհնել. սակայն Նա անթաղ մեռելներից, թշվառի արցունքից, անմեղի արյունից ստեղծածս երկրի անեծքից ու անկատարելությունից խոսեց .

Լռեց Արարիչը:

²⁰ Մույն հատվածը հետագայում տպագրվել է «Հայաստան» թերթում (Պլովդիվ, 1925 թ., թիվ 7), «Մեր անմեռ Աշոտին» խորագրով (հավանաբար նկատի ունենալով Աշոտ Մելիք-Մուսյանին):

Ու նորից խորացան Նրա ճակատի ակոսները, ու տխրությունը թանձր ստվերի պես ծածկեց Նրա դեմքը:

– Չէ՛, – բարկությամբ բացականչեց Արարիչը, – չէ՛, իմ ստեղծածը չի՛ կարող կատարյալ չլինել. ինձ մոտ բերեք, ուզում եմ մեկ էլ լսել Նրան .

Քիչ անց, քերովբեների հետ տիրոջ առաջ ծառացավ մարդը, որը նոր էր թողել մեր հանցավոր աշխարհը:

– Ո՛վ մարդ, – նորեն հնչեց Արարիչի ձայնը, – խոսելով աշխարհի անկատարելությունից, չմեղանչեցի՞ր դու:

Պատասխանի տեղ երկնքի նոր հյուրը միայն ժպտաց դառնորեն ու հեռացավ:

Խոկում էր Արարիչը:

Եվ տխուր էր Նա, ավելի տխուր, քան հազարամյակներ առաջ, երբ միայնակ ու անկայան շրջում էր ջրերի ու քառսի վրա ...

Փառապսակ Քեռուն

Դուք տեսե՞լ եք ինչպիսի՛ վեհությամբ է բարձրանում արևը...

Այդպես մեռնում է հերոսը²¹:

Ամեն ինչ, ամեն ինչ նրա մեջ մատնում էր Հերոսին:

Տաք կարեկցություն դեպի իրավագուրկն ու թույլը, ֆանատիկ սեր դեպի իր ցեղն ու նրա գուրգուրած ազատությունը, բիրլիական անշահասիրություն ու համեստություն, վտանգի

²¹ Նժդեհի մոտ բնօրիակում. «—Знаете ли как величественно восходит солнце? Так умирает герой».

ու մահվան բացարձակ անգիտացում, ռազմական անսահման էնտուզիազմ. ահա Հերոսը, ահա Քեռին:

Երբ հնչեցին պատերազմական փողերն, ու ցնձաց Մարսը, հազարավոր սրերի հետ մերկացավ և նրա սուրը:

Չգիտեմ՝ ով ինչն է, նա իր ցեղին արև ու անմահություն նվիրելու համար բարձրացրեց սուրը:

Ու այնուհետև քանի՛-քանի՛ անգամ Հռոմի հպարտ որդուց ավելի հպարտորեն կարողացավ ասել.

«Եկա, տեսա, հաղթեցի»:

Քանի՛, քանի՛ անգամ, քանի՛ ռազմադաշտերից նա մեզ հղեց հպարտ Կեսարի երեք բառը:

Քանի՛ անգամ նա՝ հայ ցեղի վերածնության գաղափարի այդ աստվածաշունչ Հսկան, հեզնեց վտանգը, անգիտացավ, ժխտեց մահը, հանդգնեց, հաղթեց, մինչև որ պատերազմների քմահաճ աստվածը դավաճանեց նրան:

Չկա Քեռին:

Լռեց կովկասյան գորաճակատի անպարտելի ու անզուգական Ուզմիկը:

Բայց դեռ երկար, շատ երկար սեզ Արտոսն ու Նեմրուժը, որոնք վկա եղան հայ դյուցազնի սխրագործություններին, կպատմեն անցվորին:

– Ուրազանի պես մեր փեշերով Քեռին անցավ ու սրբեց տարավ թշնամուն...

Չկար ավևոր Առյուծը:

Բայց դեռ երկար, շատ երկար նրա մոնչյունը պիտ արձագանքի Հայաստանի ու Իրանի ռազմադաշտերում:

Քեռու անունն էլ էր հաղթում

Թշնամու գերադաս ու թարմ ուժերը համառորեն գրոհում էին, խորտակում ու խորտակվում, ետ քաշվում՝ կարգի բերելու իրենց ցիր ու ցան շարքերը, և նորեն ու նորեն հարձակվում:

Հաղթության քմահաճ Աստվածը լքել էր մեզ, թշնամու կողմն անցել: Մեր շարքերում տատանում կար և մտադրություն՝ թողնելու մեր գրավված դիրքերը, երբ սրարշավ մեր զորաշղթաներին մոտեցավ զորահրամանատարի թիկնապահը ու հաղորդեց Քեռու օգնության հասնելու լուրը:

– Հառա՛ջ, զինվորնե՛ր, մեզ հետ է Քեռին,– գոռացին վաշտապետները:

– Հառա՛ջ,– արձագանքեց զորաշղթան և որպես երկաթե պատնեշ շարժվեց առաջ:

Քիչ անց, դեռ Քեռին չհասած, թշնամու խրամատները գերեզմանների վերածվեցին: Պարտված էր թշնամին: Քեռու անունն էր հաղթողը:

Քեռու վրանը

– Դեռ կանգուն է Քեռու վրանը,– ասում էին կոզակները և առանձին վստահությամբ ավելացնում,– նշանակում է դրությունը այնքան էլ անհույս չէ .

Թշնամու խաղերը հին ու փորձված Ռազմիկին խաբել չէին կարող: Նա գիտեր, որ թշնամու հաճախակի անվճռական հարձակումները ոչ այլ ինչ են, եթե ոչ ռազմադավեր: Ուստի, շատ անգամ, երբ հարևան զորամասերը և վերջիններ-

րիս հրամանատարները իրարանցման մեջ էին լինում, Քե-
ռին խաղաղ ծխում էր՝ իր վրանի դռանը նստած:

Մրտառուչ ընկերություն

Սակավախոս էր Քեռին, ու այդ առթիվ նրա զինվորները
կատակով ասում էին. «Քեռին խոսում է ուրբաթեուրբաթ,
վատերին ծեծում շաբաթ օրերը, հաղթում ամեն օր»:

Լռասեր էր Քեռին, սակայն ավելի սակավախոս ու թախ-
ծոտ դառավ բոլորից պաշտված Խեչոյի մահից հետո:

– Նայում եմ Գրգուռին, – ասաց մի անգամ Քեռին Աղթա-
մարում, – նայում եմ և մտածում, թե ինչպե՞ս էն բարձր սարի
փեշերին ընկավ Խեչոն, և թե առանց ինձ ինչպե՞ս է դադարել
գերեզմանում: Մենք չափազանց ուժեղ էինք սիրում միմյանց,
որ կարողանայինք անջատ ապրել ու մեռնել:

* * *

Օրեր անցան: Ու մի օր, Ռևանդուզի ճակատամարտում, Խե-
չոյի մեծ ստվերը ակոբ առյուծին առաջնորդեց դեպ հաղթու-
թյուն, դեպ հայկական փառատաճարը, որի մեջ ապրում էր ին-
քը:

ԻՄ ՄԱՐԳԱՐԵՆ

Փառապսակ Չավարյանին

Ecce Homo. «Ահա մարդը»:

Չոհաբերի՛ր:

Չոհաբերի՛ր անվերջ, առանց մնացորդի:

Սովորի՛ր և սիրի՛ր զոհաբերել ու տանջվել՝ բավականու-
թյան լուսափայլ ժպիտը երեսիդ. և դու կմոտենաս Աստծուն,
դու կդառնաս մարդ-Աստված:

Այսպես է պատգամում իմ մարգարեն իր հրեղեն խոսքը:

Մոռացի՛ր քեզ:

Հանուն թշվառների մոռացի՛ր քեզ, երբ հազար հազարներին սև ցավն է ընկերանում, բռնակալ կարիքը նեղում:

Ուրախ քրքջալու ժամին մի՛ մոռանա, որ դառնորեն լացողներ կան:

Միրի՛ր թշվառին, ծառայի՛ր սրան. թող քո ցավը թշվառի ցավը, քո Աստվածը թշվառի Աստվածը լինի:

Այսպես է պատգամում իմ մարգարեն իր ազատ խոսքը:

Եղի՛ր հպարտ:

Գոյությունդ քարշ տալու համար մի՛ սողա, մի՛ ստորանա և մի՛ ստի՛ր:

Ստեղձ նշանակում է հայիոյել ճշմարիտը, ուրանալ՝ նշանակում է դադարել մարդ լինելուց:

Եղի՛ր ազատ:

Գիտակից ստրուկի և հանցագործի մեջ չկա տարբերություն: Խոնարհի՛ր ճակատդ միայն իդեալիդ առաջ, միայն իդեալիդ ազատ գերին եղիր:

Եղի՛ր բացարձակ:

Եվ ո՛չ մի զիջում: Հանցանք է զիջելը: Զիջել՝ նշանակում է թույլ լինել, ամոթալի պարտություն կրել:

Այսպես է պատգամում իմ մարգարեն իր աստվածաշունչ խոսքը, և հոգիս, նրա հրեղեն պատգամներին գերի, վեհորեն իր թներն է պարզում:

Տապանագիր

Շուշաննե՛ր, շուշաննե՛ր

Բերե՛ք լիաբուռն...

Փառապսակ Հրանտին

Անցո՛րդ, նա սիրված էր՝ էն հպարտ արծիվ ռազմիկը:

Հեռու մարդաբնակ վայրերից, բնության խորհրդավոր փսփսոցին ունկնդիր՝ նա սիրում էր ժամերով մի թփի տակ երազել, երազել մենակ:

Նա սիրում էր մորմոքը լալկան առվակի և հառաչը հեծկըլտող ու վայող քամիների:

Նա, անցո՛րդ, այս գեղատխուր հողաթմբի տակ հող դարձող պատանին, սիրում էր և լեռները՝ ազատության էն արծվանիստ գահերը, որոնց ամպոտ կատարներին հաճախ իր հպարտ ճակատին Արևի առաջին համբույրն էր ընդունում:

Ա՛հ, նա սիրում էր և՛ արշալույսը պուրպուր, և՛ վերջալույսը տխուր, և՛ երգն անխոս ոսկեշող աստղերի:

Դու լալի՞ս ես, անցո՛րդ...

Փառապսակ Աշուղին

– Յո՞ երթաս:

– Հո՞ւմ՝ նորեն խաչվելու:

«Այնտեղ՝ Մասսի էն ստորոտում, կա մի երկիր, ուր դարեր է, ինչ օրենքի ու Արդարության տեղ գործում են երկաթն ու յաթաղանը, ուր դարեր է, ինչ հայ ցեղի յոթն անգամ խաչված մասի օրը սևով է սկսվում, գողգոթայով վերջանում»:

Այսպես սկսեց Նա իր պատմությունը Տաճկահայաստանի մասին, Արաքսի ափին ընկած գյուղերից մեկում:

Ու այն օրից «Մասսի էն ստորոտը» վառեց իմ երևակայությունը, իրեն քաշեց սիրտը, իր հողին, իր անունին կապեց իմ էությունը:

Ու այն օրից շատերի պես ես էլ ուխտեցի էն չարաբախտ ժողովրդի օր ու արևին մեռնել:

* * *

«Աշխարհը. ո՛հ, այդ՛ անսիրտ մայրը, որի լի ստինքները միայն կարող հզորներն են ծծում...»

Աշխարհը, ուր մերկն ու սովածը, ուր ճակատագրի խորթ ու զրկված որդիները տեղ չունեն, փայ չունեն»:

Այսպես վերջացրեց իր խոսքը աշխարհի անարդարության՝ անարդար կարգերի ու օրենքների մասին:

Ու այնուհետև մարդկությունը կերակրող, աշխարհը հարստացնող իրավագուրկ բանվորն ու գյուղացին դարձան իմ աստվածությունը, իսկ Աշուղի քարոզած սոցիալիզմը՝ իմ ավետարանը:

* * *

Առաքյալ, բառիս ամենավսեմ իմաստով հեղափոխական առաքյալ էր Աշուղը:

Չկա, Գողթանի երկնքի տակ, Արաքսի ափերում չկա մի գյուղ, ուր լսված չլիներ Աշուղի ձայնը:

Ու միշտ էլ բիբլիական առաքյալների պես պարզ, ու միշտ էլ՝ ոտքով շրջելիս:

Ու այդ այն սև շրջանում, երբ անեզր Ռուսաստանի միակ զարդերը կազմում էին ժողովուրդների երևակայությունն ահաբեկող դժոխատիպ բանտերն ու զնդանները, կախաղաններն ու կառափնարանները, երբ ցարի խավարի թագավորության մեջ ազատ ու բարձր խոսքի տեղ ավելի ազատորեն բարձրանում ու իջնում էր ոստիկանական մտրակը:

Այն մղձավանջային շրջանում, երբ շատերն էին փախչում Հոռմից ու հանդուզն քչերին ուղղում իրենց «Յո՛ երթաս»-ը՝

Աշուղը, վերջին անգամ հեղափոխության կարմիր ավետա-
րանը գրկած, մտավ Հոռոմ ու խաչվեց:

Փա որ:

Արծիվ Լաթոն

Ճակատագրի պես կույր ու անողոք էր նրա հարվածը, որը
չէր հապաղում իջնել այնտեղ, ուր գործել էին սկսում քուրդ
բեգերի կիրքն ու ախորժակը:

«Քեզ, արքաների մեջ միայն քեզ, գահերի մեջ միայն քո
գահը, լեռների էն սեզ ու անհաս բաշերը սիրեցի ես»:

Այս խոսքերը շնչացին Արծիվ Լաթոյի բոցավառ
ջրթունքները, երբ մի օր, դեռ պատանի, հայրենի դաշտերից
նրա հայացքը տիտան Արնոսի կատարին սավառնող սև ար-
ծիվը գերեց:

Ու հուզված ու մտախոհ՝ նա վերադարձավ տուն, պատից
խլեց հոր հրացանը, համբուրեց, համբուրեց մեկ էլ, համբու-
րեց յոթն անգամ, գրկեց ու... լուսաբացին ջահել Ռշտունցին
էլ չկա ր գյուղում:

Օրեր անցան:

Արնոսի կատարից Լաթոն իր արծվային թևերը տարածեց
Ռշտունիքի վրա, ու այն օրից մեղմացավ ավարն ու ավերը,
նվազեց արյունն ու արցունքն այդ երկրում:

Պատերազմ էր: Ռուսական զորքերը հասել էին Վան, կա-
մավորները՝ Մոկս: Իր որդիների արյունով յոթն անգամ
սրբացած հայու երկիրը ընդմիջտ ազատված էր համարվում,
երբ պատերազմների Ատվածը, թե ցարի դիվանագիտությու-
նը դավաճանեց մեզ:

Մկսվեց ռուս զորքերի՝ Հայաստանն ավիրող ու ամայացնող անփառունակ նահանջը:

Լաթոն՝ Արնոսի հպարտ արծիվը, չուզեց, չկարողացավ բաժանվել իր սիրած լեռներից ու մնաց... Մնաց մենակ, մենակ ամայացած երկրի մեջ ու մենավորի անսահման հուսահատությամբ կանչեց.

– Ո՞ւր ես, ցե՛ղդ իմ, ո՞ւր...

Եվ երբ որբացած երկրի դաշտերը, որպես տխուր արձագանք կրկնեցին. «Ո՞ւր ես...», հուսահատ ու վրիժավատ հայրորդին, որպես լեռան կատարից պոկված հսկա ժայռ, նետվեց դեպի առաջացող թշնամին ու ... ընկավ: Փա՛ռք:

Հայ խաչակիրը

Մահն էլ է սիրում գեղեցիկը...

Փառապսակ Միհրանին

Ինձ ասացին՝ էլ չկա Միհրանը, և ես տխուր ժպտացի միայն, ինչպես մի օր ժպտաց Մահը, երբ հայ խաչակիրը խթանեց իր ջահել նժույգին և շնչաց.

– Տա՛ր ինձ, դեպ Միջագետքի ավազուտ անապատները թոցրո՛ւ՝ ինձ, ուր կիզիչ արևի տակ իմ ցեղի տխուր մասն է մարտիրոսանում...

Ինձ գուժեցին՝ էլ չկա Միհրանը, և ասացի ես.

– Թող այդպես լինի, թող միհրանաբար, դյուցազնորեն ընկնեն նորերն ու նորերը, եթե ազատագրյալ մեր Հայրենիքում դեռ կա մի բուռ հող, որը ներկված չէ արյունով...

Ինձ ասացին՝ էլ չկա Միհրանը, և ասացի ես.

– Չեն լինի բոլոր խիզախները ու հանդուգները, որոնք գիտեն հեզնել մահը, անգիտանալ վտանգը, որոնք լավագույնն են լավերի մեջ, որոնց սիրում է և Մահը...

Մարդը գիտեր իրերի կարգը, գիտեր, որ երբ կա կյանքը՝ չկա մահը, նա գիտեր այդ, և անխռով վայելում էր իրեն տրված օրն ու արևը:

Ի՛նձ, սակայն, ինձ էր ճակատագրված կյանքն ու մահը ապրել միաժամանակ:

Վաղուց է, ինչ աշխարհն ինձ մեռած է կարծում, թեև ես դեռ կոխում եմ երկրի երեսին, թող որ երկրագնդից՝ անծայր ու անծիր, ինձ թողնված է մի տարածություն՝ կալանավորի մի կույր խցիկ, որը դժվար թե կարողանար երկու մեռելների գերեզման տալ:

Ես մեռա՝ դեռ չմեռած: Ավելի ստվեր քան ապրող էակ, ես ն՛ կամ, և՛ չկամ: Թեև կա կյանքի անոթը՝ կեցության ձևը, բայց չկա կյանքը, կյանքի զգացումը չկա:

Ես ապրում եմ՝ կյանքն ու մահն իրար խառնած: Ա՛հ, կարող է, մարդ կարող է փոխել բնության կարգը: Կյանքն առանց կյանքի՛ ... Ո՞վ էր ապրել այդ:

Ես կամ և չկամ... Եվ, բարե՛, այդ իսկ վիճակում կուզեի մեռնել մարտական մահով, և կանգնել Հավերժության սեմին²³՝ դեռ չսպիացած վերքերով... Չե՛, ռազմիկը չե՛ մեռնում: - Մեռնե՛լ... Բայց մի՞ թե դեռ կամ, դեռ ապրում եմ ես...

²² «Ռազմիկը չէ մեռնում» ձեռագիրը, որ գրվել է բանտում, Նժդեհը նվիրել է իր երիտասարդ զարմիկին (եղբոր տղային)՝ «Հրանդիս ալբոմում» մակագրությամբ, և տեսակցության ժամանակ հանձնել հարազատներին:

²³ Շեմք, (փխք.), մուտք

*

Ես ասում եմ՝

- Ժամանակն է ամենածանր բեռն աշխարհում, և ամենաթերթերը միաժամանակ: Եթերի պես անզգալի նրանց համար, որոնք երանորեն ժպտում են երկնքի վճիտ օվկիանին, կամ դաշտերում բացված ծաղկին, մի այլ հոգեվիճակում՝ դա տիեզերաշենքի ծանրությամբ է ճնշում մեր էության ամեն մի հյուլեի վրա:

Կալանավոր եմ, և ահա՛ լսում եմ սրտիս զարկը՝ մե՛կ, ե՛րկու... Ո՛չ, ո՛չ, դա սիրտս չէ, այլ ժամանակի ծանր ձեռքը, որն իր երկաթե մուրճն է իջեցնում գանգիս վրա՝ մե՛կ, ե՛րկու...

- Ես կամ,- ասում է ժամանակը,- նրանց համար, որոնք պատճառ ունեն զգալու իմ առկայությունը, համրելու իմ օրերը, ժամերը, վայրկյանները՝ ես կամ...

*

Կա Պրոմեթեյը տառապող, կան նաև նրա ցավերն ամոքող օվկիանիդները: Տրվում է ցավը մարդուն, նրա հետ՝ նաև այն մեղմելու կարելիությունը:

Հաղթահարել նյութը, գրկել ժամանակն իր կապարից, ցավն իր սրությունից, լյարդ պատառոտող անզղին իր ճիրաններից – ահա գերագույնն արվեստներից՝ մայրը բոլոր արվեստների, որոնց ծնունդ է տվել մարդը:

«Ատարաքսիա», - պիտի ասեր դասական դարերի հույնը.
«Մտեղծագործ խանդ», - ասում է մերօրյա արվեստագետը: -
Ներքին երկվացում, որի դեպքում զատվում ես քեզ մտրակող
ցավից, և մտահայեցողաբար այն դիտում իբրև իմաստասի-
րական նյութ», - ասում եմ ես:

Հաղթահարել ժամանակը՝ այն անզգալի դարձնելու աս-
տիճան. աստվածային այդ արվեստին հավատարիմ՝ ամեն
օր մտովի ես անցնում եմ այն ճամփաներով, որ կոխել են
աստվածները հին, այցելում եմ Հելլադան, ճեմում ու վիճում
Աթենքի իմաստասերների հետ, հայտնվում պատմության
ծանոթ ռազմադաշտերում, թևս երկարում զինաթափվելու
պատրաստ մարտիկին, վիրավորին և, վերջապես, սրիս և -
Մասսին կոթնած՝ արթուն հսկում եմ Հայաստանի սահման-
ների վրա...

Ը.Տ.

*

Չհասկանալ նրան, ով խոսում է Հայաստանի համար ստա-
ցած վերքերի լեզվով, նշանակում է ո՛չ հայ, ո՛չ էլ հայրենասեր լի-
նել:


*

Ամենասրբազանը խաչերից, միաժամանակ և ամենածանրը
դա ճակատագիրն է հարազատ ժողովրդի: Այն կրողին և՛ վա՛յ,
և՛ պատի՛վ յոթնիցս:

Հերոս էս, ապա ուրեմն տու՛ր ապացույցը, որ աշխարհից,
կյանքից ու մահից էլ գորավոր ես դու:

1955թ., մայիս

ՎԵՐՁ



Բովանդակություն

ՀԻՇԻՐ ՊԱՏԵՐԱԶՍԸ	4
I. ԿԱ ՍԱՐԴԸ՝ ԿԱ ՊԱՏԵՐԱԶՍԸ	5
II. ԶԽՐԱՏՎՈՂ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ	8
III. ՌԱԶՄԱՐՎԵՍՏ (ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿՈՂՄԸ)	12
IV. ՑԵՂԱՅԻՆ ԻՆՔՆԱՃԱՆԱԶՈՂՈՒԹՅՈՒՆ	48
V. ՑԵՂԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԸ	77
VI. ՀԱՅ ԶԵՆՔԻ ԱՆՀԱԶՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ	81
VII. ՑԵՂԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ	93
VIII. ՆՈՐ ՀԱՅԸ	117
ԽՈՒՍՏՈՒՓՅԱՆ ԿԱՆՉԵՐ	119
ՀՐԱՄԱՆՆԵՐ	120
ԿՈՉԵՐ ՂԱՓԱՆՑԻՆԵՐԻՆ	125
ՅՈԹ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐ ԻՄ ԶԻՆԱԿԻՑՆԵՐԻՆ	130
ՀԱՎԵԼՎԱԾ	132

ԳԱՐԵԳԻՆ ՆՇԴԵԶ

- ՀԻՇԻՐ ՊԱՏԵՐԱԶՍԸ
- ԽՈՒՍՏՈՒՓՅԱՆ ԿԱՆՉԵՐ
- ՀԱՎԵԼՎԱԾ

Ֆեյսբուքյան էջեր՝ Նժդեհ Ռահվիրա՝
<https://www.facebook.com/gareginjdehrahvira>

Ցեղակրոն շարժում՝
facebook.com/Ceghakron.sharjum

Ստորագրված է տպագրության 30.07.2020:
Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ օֆսեթ: 9.25 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 400 օրինակ:

«ԳԵՎՈՐԳ - ԶՐԱՅՐ» ՍՊԸ



Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ 52.79.74
Էլ. փոստ lusakn@rambler.ru

ISBN 978-9939-871-31-8



9 789939 871318

թվայնացրել է 5 1915.info
Կոչ Կ